

ԴԱԻԻԹ ԶԷՅԹՈՒՆՑԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ДАВИД ЗЕЙТУНЦИ ТОЛКОВАНИЕ ГРАММАТИКИ

Текст подготовил и снабдил предисловием
Е. К. МЕЛКОНЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱԾԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ԴԱԻԻԹ ԶԵՅԹՈՒՆՑԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ

Աշխատասիրությամբ
Ե. Կ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

Գալթ
317



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ 1981



Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Անառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանաս. գիտ. քեկնածու Լ. Ս. Հովսեփյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել
գրախոսներ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ռ. ԶԱՀՈՒԿՅԱՆԸ
և բանաս. գիտ. քեկնածու Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆԸ

Դասիք Անթուրնցի

Դ 242 Մեկնություն քերականի (Աշխատասիր. Ե. Կ. Մելքոնյանի), Պատ.
խմբ. Լ. Ս. Հովսեփյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981.— 188 էջ

Գրքի առաջին մասը քերական, տոմարադետ, մանկավարժ Դավիթ Զեյթունցու
կյանքի, գործունեության և քերականական աշխատության համեմատաբար ամբող-
ջական ուսումնասիրությունն է, Երկրորդ մասն ընդգրկում է Դ. Զեյթունցու «Մեկնու-
թյուն քերականի» երկի համահավաք բնագիրը՝ առկա բոլոր ձեռագրերի համեմա-
տությամբ և այդ ձեռագրերի տարբերություններով, Զեյթունցու քերականությունը
հայ քերականական մտքի զարգացման ուլույն և արժեքավոր դրսևորումն է,
որտեղ հեղինակը նորովի լուծում է դրաբարի քերականության բաղմաթիվ հարցեր:

Որպես հավելված դրված է նաև Զեյթունցու շափածո հայկական տոմարը
Գիրքը նախատեսված է հայոց լեզվի և հայ լեզվաբանության պատմության մաս-
նագետների համար:

4601000000

Դ 703(02)—81

4 Ap

ԳՄԴ 81.2(24)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, ներածության և տեքստը կազմելու համար, 1981

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դավիթ Զեյթունցու անունը հայ բանասիրությունը անծանոթ էր մինչև քսաներորդ դարի սկիզբը: Մինչև Ն. Ադոնցի նշանավոր աշխատությունը¹ ոչ ոք քննության չէր առել մեր միջնադարյան քերականական մեկնությունները: Առաջինը նա էր, որ հաստուկ ուսումնասիրության ենթարկեց դրանք և մի շարք անհերքելի եզրակացություններ արեց, գնահատելով Դավիթ Անհաղթի, Անանուն Մեկնիչի, Մովսես Քերթովի, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու և Գրիգոր Մազիստրոսի կատարած դերը հայ քերականական մտքի զարգացման մեջ: Բայց Զեյթունցու մասին խոսելիս բավարարվեց միայն նրա աշխատության հիշատակությամբ, որովհետև Զեյթունցու քերականությունը համարում էր Հովհաննես Երզնկացու քերականության սոսկական վերածումը հարց ու պատասխանի. «Ոմն Դավիթ Ամիդեցու աշխատությունը, որը ներկայացնում է Հովհաննեսի քերականության վերածումը հարց ու պատասխանի»²:

Առաջին անգամ Գ. Զահուկյանն էր, որ, հանգամանորեն ուսումնասիրելով և վերադնահատելով հայ միջնադարյան քերականական աշխատությունները, ուշադրության արժանացրեց Դավիթ Զեյթունցու քերականությունը³: Քննելով Զեյթունցու գործը, նա գտավ, որ «Ադոնցը չափազանցրել է Հովհաննես Երզնկացու ազդեցությունը»: Նա բացահայտեց այնպիսի կողմեր, որոնք ոչ միայն Երզնկացու, այլև նախորդ շատ մեկնիչների գործերի նկատմամբ նոր ներդրում էին քերականական մտքի զարգացման մեջ:

¹ Ն. Ադոնց, Արուստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունը նորին, Պետերբուրգ, 1915:

² Անդ, էջ VII:

³ Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 329—340:

Ա. ԿԵՆՍՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավիթ Զեյթունցին եղել է իր ժամանակի զարգացած դեմքերից: Գործել է լվով քաղաքի ս. Աստվածածին եկեղեցում: Զբաղվել է մանկավարժությամբ. եղել է եկեղեցուն կից դպրոցի տեսուչ: Նրա աշակերտ Գրիգոր Տոմաժիրսքին այսպես է բնութագրում իր ուսուցչին. «Տէր Դավիթ Զեյթունցի քահանային, զի այր զիտնական և քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ Հին և Նոր Կտակարանաց, որ բազում ջանիւ և աշխատութեամբ աշխատեցաւ ի վերայ անպիտան ծառայիս»¹: Այդ մասին վկայում է նաև մի ուրիշ աշակերտ՝ հավանաբար Գրիգորի եղբայր Նիկոլ լվովցի Տոմաժիրսքին (երկուսն էլ գրում են՝ որդի պարոն Ավետիքի). «...Յիշեցէք ի մաքրայփայլ տղալիս ձեր զհոգևոր հայրն մեր՝ զՏէր Դավիթն Զեյթունցի, իմաստունն և հանճարեղն, քաջ հեռետորն և յան- <_>աղթն փիլիսոփայն հայկա//ղան սեռիս, որ բազում աշխա[ր]տեցաւ ի հետ մեզ՝ ցայք և ցերեկ ոչ դադարեաց, ոչ քուն աչաց և ոչ նինջ արտեանանց մինչև էհաս յաւարտ գրոցս...»²: Ղաղար Բաբերդացին նույնպես այդ կարծիքին է. «Թէպէտ գոյր մեզ յառաջագոյն կարճաոտ ցանկեր ի նախնեացն մեր և ի տէր Դավիթ իմաստուն քահանայէն...»³:

Ն. Ադոնցը և Գ. Զահուկյանն այլ մականուն են տալիս նույն Դավիթին: Ծիշտ է, Զահուկյանը չի հակադրում Ադոնցի անվանումին, մի անգամ նույնիսկ փակագծում դնում է «Ամիդցի», բայց ավելի շատ նրան անվանում է Զեյթունցի:

Ինչի՞ հիման վրա է Ադոնցը նրան կոչում Դավիթ Ամիդցի: Ն. Ադոնցը օգտագործել է Մատենադարանի № 2380 ձեռագիրը, որի մեջ Զեյթունցու գործը կա ամբողջական վիճակով: Սակայն գործի սկզբում

¹ Ղ. Ալիշան, Տարեգիրք հայոց Լեւոստանի և Ռումինիոյ հաւաստեայ յաւելումովը («Կամենից»), Վենետիկ, 1896, էջ 175:

² Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ, Հ. Ա, Նրևան, 1974, էջ 482:

³ Հ. Անասյան, Հայ համարարբառային դրականութուն և հայ մատենագրության համարարբառ, «Էջմիածին» (առանձնատիպ), 1972:

չի հիշատակվում հեղինակի անունը, ինչպես հիշվում է, օրինակ, № 2330-ում: Հետևաբար, Ադոնցը Ամիդեցի (Ամիթեցի) կոչումը տվել է № 2380 ձեռագրի 389բ երեսի հեղինակային հիշատակարանից: Բերենք հիշատակարանը նույնությամբ. «Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և զյետնեաս յամցւցն զԴաւիթս, որ աշխատեցայ հետ բանական արհեստիս, այսինքն քերականիս, զայնս, որ յառաջին քերթողացն ասացեալ էր և մեկնեալ պարզ, զնա յերկուս բաժանեցի, այսինքն ի հարցումն և ի պատասխանիս, ի վարժումն մանկանց նորագունից, զի ի հարցանել միոյն հարկ լիցի միւսոյն տալ պատասխանի, որ վասն այնորիկ յաւթարեսցին ուսանել և մի հեղգասցին: Իսկ ի տեղիս տեղիս զերկարն, որ ձանձրացուցանէր զընթերցող, զնա կարճացուցի և զկարճսն, որ զմիտ բանին պարզ ոչ յայտնէր, զայն երկարացուցի չափաւոր: Դարձեալ աղաչեմ զձեզ եղբայրք, զի մի մոռանայք յիշել ի տէր, ամէն»:

Պարզվում է, որ հիշատակարանում գտնվող յամցւցն բառը Ն. Ադոնցը կարդացել է յԱմթացւցն և այսպես էլ գրել է իր գրքում: «Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և զյետնեաս յԱմ/թա/ցւոցն զԴաւիթս»: Բայց ուսումնասիրելով մյուս օրինակների հիշատակարանները, նկատում ենք, որ բառը սխալ է վերծանվել: Նախ սղագրման դեպքում, եթե բառը սղման քարացած ձև չունի, ինչպես օրինակ՝ Ած=աստված, Թս=Քրիստոս, սս=սուչնպես և այլն, ապա սովորաբար բաղաձայնները մնում են, և միայն ձայնավորներն են սղվում: Իսկ այստեղ, ըստ Ադոնցի, սղվել է Թա: Ավելին. մյուս բոլոր ձեռագրերի հիշատակարաններում զԴաւիթ բառին նախորդում է ամենեցունց բառը, ինչպես օրինակ № 2330-ում. «Յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր և զյետնեալս ամենեցունց զԴաւիթս»: Մյուս կողմից, Դաւիթ անունից հետո դրվում է Զէյթունցի բառը. «զԴաւիթ էրէցս Զէթունցի»: Եթե նկատի ունենանք, որ զանազան ձեռագրերում, նաև աշխատության սկզբում կա Դաւիթ Զէյթունցի, ինչպես Երուսաղեմի № 1163-ում և այլուր, ապա կարելի է ասել, որ յԱմ/թա/ցւոցն սխալ ընթերցում է, մանավանդ, երբ ձեռագիրը առիթ չի տալիս նման վերծանման: Հետևաբար, յամցւցն սղագրումը պետք է վերծանել յամենեցունց, չնայած կատարված է գրչագրական սխալ՝ և տառը պետք է դրվեր երկրորդ ց-ից առաջ՝ յամցւցն:

Կա մի այլ հեղինակային վկայություն: Զէյթունցուց մեզ հասել է նաև մի չափածո տոմար Մատենադարանի № 4001 և № 6731 ձեռագրերում, «Դաւթի Զէյթունցուց տոմար հայոց», որի վերջում կա հիշատակարան.

Ուտանաւորս այս տումարի
Եղև ի Լուվ մեծ քաղաքի
Ընդ հովանեաւ Աստուածածնի
Հայոցըն սուրբ եկեղեցի:

Որք բաղձացան սըմին իրի
Եւ խնդրեցին և ես գրեցի
Յիմար Դաւիթս Զէքունցի
Զսակաւ տումարս ի ոտ հանի: (№ 4001, էջ 238ա):

Եթե ավելացնենք, որ նրա աշակերտներից երկուսը նույնպես իրենց հիշատակարաններում նրան հիշում են որպես Դաւիթ Զէքունցի, ապա պարզ կդառնա, որ սխալ է «Մեկնութիւն Քերականի» աշխատության հեղինակին կոչել Դավիթ Ամիրդեցի, այլ պետք է անվանել Դավիթ Զէքունցի: Երկրորդ կարևոր լուծելի հարցը վերաբերում է Զէքունցու գործունեության ժամանակին:

Գ. Զահուկյանն իր նպատակից դուրս ունենալով բանասիրական մանրակրկիտ քննությունը, անորոշ է թողել Զէքունցու գործունեության ժամանակը. «Դավիթ Զէքունցու մասին, որքան ցույց տվեցին մեր պրպտումները, հայ մատենադրության մեջ վստահելի տեղեկություններ չեն պահպանվել: Եթե նկատի առնենք, որ Դավիթ Զէքունցին օգտվել է գրչության արվեստի վերաբերյալ առաջին աշխատություններից, այլև Վարդանի ու Երզնկացու երկերից, ապա պարզ կլինի, որ նա ապրել է 13-րդ դարից հետո, մյուս կողմից՝ եթե նկատի առնենք, որ նրա քերականական աշխատության ձևագրերը 17-րդ դ. սկզբներից են (Տաշյանի հիշատակած ձևագիրը, որ հնագույնն է, 1613 թվականի է), ապա կըստանանք Դավիթ Զէքունցու ժամանակի համար 14—16-րդ դդ.»⁴:

Մեր որոնումները ցույց տվեցին, որ կան շատ վստահելի ժամանակագրական տեղեկություններ: Այդ վկայությունները հեղինակային և ոչ հեղինակային հիշատակարաններն են: Հեղինակայինը վերևում բերված չափաժող տոմարի հիշատակարանն է.

Որք բաղձացան սըմին իրի
Եւ խնդրեցին և ես գրեցի
Յիմար Դաւիթս Զէքունցի
Զսակաւ տումարս ի ոտ հանի:

⁴ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 330:

Ի հազար փսուն բուականի
Եւ ուր բուով էր աւելի
Ի ժամանակ բարեպաշտի
Զիկմունսի քաջ քազաւորի: (№ 4001, էջ 238ա):

Սրանից հետեւում է, որ Զեյթունցին տամարը չափածոյի է վերածել հայոց 1058 թ., որ է 1609 թվականին:

Երկրորդ խմբի հիշատակարանները պատկանում են նրա աշակերտներին, ուստի և նորից կասկածից դուրս են:

Աշակերտներից Գրիգորն ունի երկու հիշատակարան. մեկը կցված «Արարածոց Մեկնիչս» գործին, մյուսը՝ «Մեկնութիւն Յոբայ» գրքին: Առաջինում կարդում ենք. «Գրեցաւ սա ի թուին ՌԿԵ (1065), ի քաղաքն Իլով, ի Թագաւորութեան Զիկմունտին և ի կաթողիկոսութեան Մելիքսեթին, ձեռամբ մեղապարտ Գրիգորին, մականուամբ Տոմաթիրսքին, և ինձ մեղապարտ Գրիգորիս և իմ վարդապետին տէր Դաւթի ողորմութիւն և թողութիւն մեղաց ի նմանէ»⁵: Երկրորդում գրված է. «Գրեցաւ սա ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Գրիգորի, որդոյ Պր. Աւետիքին, մականունն Տոմաթիրսքին, ...ի Թուականութեանս հայոց ՌԿԵ (1068) և սեպ. ամսոյ Ա., օրն չորեքշաբթի: Արք, որք հանդիպիք սմա... մի բերան Աստուած ողորմի ասացէք հանգուցեալ վարպետին իմոյ տէր Դաւթ Զեթունցի քահանային...»⁶: Հետեւեալ, ըստ Գրիգոր Տոմաթիրսքու հիշատակարանի, Դաւիթ Զեյթունցին մահացած էր 1619 թվականին:

Նիկոլ Լվովցու մի այլ հիշատակարանում մահացած է հիշվում 1615 թվականին. «Ի թվին Ի (20) ոբելեանի և Ա (1) ոբելեանի և տասնչորսին, և մարտի ամսոյ Ի, օրն Դժ. ի (չորեքշաբթի) ծաղկազարդին: ...Ընդ նմին և զմիւս զվարդապետն իմ հանգուցեալ զտէր Դաւիթ Զեթունցի, և ասացէք աստուած ողորմի նոցա հոգոց և հանգուցէ զնոսա ի գունդս սրբոց իւրոց»⁷:

Անշուշտ, նկատելի է մի փոքր հակասութիւն. Գրիգորն իր առաջին 1616-ի հիշատակարանում նրան հանգուցեալ չի հիշում, մինչդեռ Նիկոլ Լվովցին 1615-ին է հիշում: Առիթ ունենք կասկածելու Լվովցու տեղեկութիւնը, որովհետեւ նրա հիշատակարանի հանգուցեալ բառը, որ ներառնված է, կա լուսանցքում և համաձայնեալ հետագայ նշում է: Խաչքո

⁵ «Կամենից», էջ 171:

⁶ Անդ, էջ 175:

⁷ ՀԱՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մշտոյցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ «Մատենադարան» (այսուհետեւ՝ Մատենադարան), ձեռ. № 1719, էջ 32բ:

Տոմաթիրսքին, որ թերևս նույնպես Դավիթ Զեյթունցու աշակերտներից է, 1619 թվականի մարտի 17-ին գրած հիշատակարանում Զեյթունցուն մահացած չի հիշում: Իսկ Գրիգորի հիշատակարանում մահացած է հիշվում 1619 թվականի սեպտեմբերի մեկին: Ուրիմն, Զեյթունցին մահացել է 1619 թվականի մարտից սեպտեմբեր ընկած ժամանակամիջոցում:

Զեյթունցու ծննդյան թվականը անորոշ է: Կա միայն մի անուղղակի վկայություն: Ղուկաս Կեղեցին իր 1557 թվականին գրած շափածո տոմարում⁸ գրում է.

Իսկ տէր Դավիթըն Զեյթունցի
Յիմէն խնդրեաց և ես գրեցի
Ի խրախուրթեան մանկագունի
Այլ յիմաստոնոց պարսաւելի:

Թերևս նա եղել է Կեղեցու ուսումնակիցը և իր ընկերուջը խնդրել է հոռմեական տոմարը շափածոյի վերածել իր մանկավարժական աշխատանքների համար, ինչպես ինքն է հայկական տոմարը շափածոյի վերածել նույն նպատակով և իր ընկերների խնդրանքով: Համենայն դեպս, 1557 թվականին արդեն քահանա Զեյթունցին պետք է նվազագույնը քսան տարեկան լիներ, ուստի ծննդյան թվականը, որոշ վերապահությամբ (եթե Կեղեցու հիշած Զեյթունցին նույնն է, ինչ քերականության հեղինակը), կարելի է դնել մոտավորապես ԺՁ դարի 30—40-ական թվականներին: Այսպիսով, Դավիթ Զեյթունցի քերականը գործել է XVI դարի երկրորդ կեսում և XVII դարի առաջին քառորդում: Մնվել է 1530—1540-ական թվականներին և մահացել խոր ծերություն մեջ՝ 1619-ին:

⁸ «Էջմիածին» ամսագիր, 1952, № 6:

Բ. ԱՌՆՁԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Դավիթ Զեյթունցին իր հիշատակարանում ընդգծում է, որ ինքը իր քերականությունը կազմել է նախորդ քերականների մեկնությունները հրկուսի բաժանելով, այսինքն հարց ու պատասխանի վերածելով: Իր միջամտությունը սահմանափակել է այսպես. «Իսկ ի տեղիս զերկարն, որ ձանձրացուցանէր զընթերցող, զնա կարճեցի և զկարճան, որ զմիտ բանին պարզ ոչ յայտնէր, զայն երկարեցի շափաւոր»¹: Այս համեստությունը՝ անորոշ արտահայտությունն ու իր գործի թերագնահատումը, հավանաբար պատճառ է դարձել, որ Զեյթունցին որոշակի շմատնանշի իր աղբյուրը: Թերևս և չի ուզեցել ընդգծել «յառաջին քերթողացն» մեկնումների դերը: Իսկ Ն. Ադոնցը, ինչպես տեսանք, ասել է. «Ոմն Դավիթ Ամիրզեցու աշխատությունը, որը ներկայացնում է, Հովհաննեսի քերականության վերածումը հարց ու պատասխանի»: Սա հարցի կտրուկ, բայց ոչ վերջնական լուծումն էր: Գ. Զահուկյանը խոսում է Երզնկացու և «այլ աղբյուրների» մասին, որոնցից տալիս է միայն Վարդան Արևելցու անունը:

Հայտնի է, որ Ն. Ադոնցն իր գրքում տարբերում է Հովհաննես Երզնկացու երկու քերականություն՝ ընդարձակ և համառոտ, ընդ որում հեղինակը ընդարձակը համառոտել է գործնական նպատակով: «Հովհաննես Երզնկացին ունի նաև համառոտ բովանդակությամբ քերականական աշխատություն, որն իր գրական և պատմական արժեքով բավական զիջում է ընդարձակ քերականությանը»: Այսպիսով, նույնանում էին երկու տարբեր քերականությունների հեղինակներ, որոնցից մեկը, սակայն, թեև նույնպես իրենի կոչում է Երզնկացի, բայց ավելացնում է «որ և Ծործորեցի»: Ահա երկու աշխատությունների ամբողջական վերնագրերը ըստ Մատենադարանի № 2380 ձեռագրի. համառոտը՝ «Ն(ը)-ուսստ Յովհաննէս վարդապետի Եզնկացոյ, որ և Ծործորեցի, արարեալ համառօտ տեսութիւն քերականի»: Սկիզբն է՝ «Միշտ բաղձանք բանի» (237ա): Ընդարձակը՝ «Ի խնդրոյ տեառն Յակոբայ Հայոց Կաթողիկոսի

¹ Մատենադարան, ձեռ. № 2330, էջ 183 ա:

և վարդապետաց մերոց եղբարց արարեալ զհաւաքումն քերականին մեկնութեան Յովհաննիսի Եղնկացոյ ուսումնականի գրոց»։ Սկիզբն է՝ «Յաղագս բանական արհեստի վարժողական հմտութեան...» (29ա)։ Համառոտի հեղինակը ընդգծել է իր Ծործորեցի լինելը, ղգուշանալով հնարավոր շփոթութիւնից ընդարձակ քերականութեան հեղինակի հետ։

Ջարմանալի է, որ մեծանուն հայագետը չի նկատել այդ տարբերութիւնը։ Հավանաբար Ադոնցը ելել է երկու աշխատութիւններէ բովանդակային համամանութիւնից, երբեմն ամբողջ էջերով բառային նույնութիւնից. մյուս կողմից՝ Ն. Ադոնցին չի մտահոգել այդ առնչակցութեան պարզումը, որովհետեւ նա իր առջև ավելի մեծ խնդիր է ունեցել՝ տեքստերի վերականգնումը։ Երբեմն միայն դիմել է Ծործորեցու աշխատութեանը, որոշ տեղեկութիւններ ստուգելու համար։ Այդ տարբերութիւնը չի նկատել նաև Գ. Զահուկյանն իր աշխատութեան մեջ. «Երդնկացու անունով հասել է նաև մի երկրորդ քերականական աշխատութիւն, որը նախորդի համառոտութիւնն է»²։

Հովհաննես Երդնկացու (Պլուզ) և Հովհաննես Ծործորեցու անձերի տարբերակման հարցը լուծված պետք է համարել հայ բանասիրութեան մեջ³, ուստի անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ դրան։ Այսքանը ասենք միայն, որ վեճը ինչ-որ տեղ անխմստ էր, որովհետև ԺԵ դարում Առաքել Սյունեցին իր քերականական աշխատութեան մեջ այդ երկու հեղինակներին որոշակիորեն տարբերակել է. «...Զի Դաւիթ Փիլիսոփայն թարգմանեաց և մեկնեաց զսայ. իսկ յետ նորա Գրիգոր Մագիստրոսն այլ ընդարձակ մեկնեաց զԴաւթի մեկնիլն. իսկ յետոյ Յոհաննէս վարդապետն, մականուն Պլուզ համառօտեաց զնոյն վասն դիւրալուր լինելոյ, և յետ նորա Եսայի վարդապետն Գայլիձորոյ ա՞յլ համառօտեաց, որ այժմս կայ ի միջի, սոյնպէս և Ծործորեցին է համառօտեալ»⁴։

Այս երկու հեղինակների տարբերակման հարցը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով անհրաժեշտ է պարզել Ն. Ադոնցի հայտարարութեան ճշմարտացիութիւնը։ Անշուշտ, չափազանցութիւն է Ն. Ադոնցի այն պնդումը, որ Զեյթունցու գործը Երդնկացու քերականութեան սոսկական

² Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 260։

³ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950 և «Բանբեր Մատենադարանի», 1973, № 11։ Է. Քյուրոյան, Նրիզա և Եկեղեաց Գաւառ, «Հանդես ամսօրեայ», 1953։ Ա. Մրաւյան, Հովհաննես Երդնկացի, Երևան, 1958։ Նսայի նշեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Երևան, 1966։

⁴ Առաքել Սյունեցի, Յաղագս Քերականութեան համառօտ լուծմունք ի տէր Առաքել Սիւնեաց եպիսկոպոսէ, Մատենադարան, ձեռ. № 2380, էջ 393ա։

վերածումն է հարց ու պատասխանի: Համենայն դեպս ստիպված էինք քննել այդ առնչակցութիւնը: Ըստ Ն. Ադոնցի այդ աղբյուրը Հովհաննես Ծրդնկացու (Պլուզ) աշխատութիւնն է, սակայն երեք տեքստերի մանրակրկիտ քննութիւնը բերում է այն հետեւութեան, որ Զեյթունցին անմիջական հիմնական աղբյուր է ունեցել ոչ թե Պլուզի քերականութիւնը, այսինքն ընդարձակը, այլ Մործորեցու աշխատութիւնը, այսինքն համառոտը:

Զեյթունցին հիմնականում օգտվել է Մործորեցու քերականութիւնից, երբեմն դերի մնալով Մործորեցու նույնիսկ բառային տարազին: Նման դեպքերում նա պարզապէս Մործորեցու այսինչ հարցադրումը դարձրել է հարց և հենց նրա բացատրութիւնն էլ դրել որպէս պատասխան: Այստեղ ճշմարտվում է Ն. Ադոնցի հայտարարութիւնը: Ի հաստատումն այս մտքի բերենք հետեւյալ զուգահրութիւնը.

ՄՈՐԺՈՐԵՅԻ

«Եւ հոլովք այս, այսր, այսմ այսու, զայսով, այսք: Իբր թէ՝ այս գործ աստուծոյ է գործ, այսր եկ և տես զսքանչիս նորա, և այսմ գիտակից է Դաւիթ, և այսու յօրինակաւ, դու մարտեաւ և ես մարտնչիմ, և զայսով կարասցէ դիտել...» (Մ 2380, էջ 298բ—299ա),

Կամ՝

«Դերանունութիւն է բառ փոխանակ անուան և որոշեալ դիմաց յատկական: Սահմանի և այսպէս. թէ դերանունութիւն է մասըն բանի հոլովական եղեալ ի տեղի յատուկ յանուան, որ զստոյգ ըզդէմն նշանակէ, բայց գիտելի է, զի դերանունդ է փոխանուն և թերանուն և հասարակ անուն» (Մ 2380, էջ 299բ):

ԶԵՅԻՏՈՆՅԻ

«Հարց. է՞ր ասէ. և հոլովքն այսմ, այսր, այնր, այսու, զայսով, այսքն: Պատ. Իբր թէ՝ այս գործ աստուծոյ է, այսր եկ և տես, այսմ դիտակ է Դաւիթ, այսու օրինակաւ մարտեաւ, զայսով կարասցէ դիտել:»

(աստ, էջ , տողեր):

«Հարց. Դերանունութիւն է բառ փոխանակ անուն առեալ, որոշեալ դիմաց յատկական:

Պատ. Եւ նա սահմանի և այսպէս. թէ դերանուն է մասն բանի հոլովական եղեալ ի տեղի յատուկ յանուան, որ ստոյգ դէմն նշանակէ, բայց դիտելի է, զի դերանուն փոխանուն է և թերանուն և հասարակ անուն» (Մ 2380, էջ 370բ):

Այսպիսի հատվածներ կան նաև այլ տեղերում, բայց դա երբեք չի նսեմացնում Զեյթունցու աշխատանքի արժեքը. այնտեղ, որտեղ Մործորեցու բացատրութիւնը գտել է հասկանալի և բավարար, կարիք չի զգացել այլ բացատրութեան, որը երբեմն կարող էր ավելի անորոշ լինել: Բայց մեծավ մասամբ պատասխան-բացատրութիւնները կառուցված են ինքնուրույն, հաճախ՝ բոլորովին անկախ:

Մործորեցու գործը Ծրդնկացու ընդարձակ քերականութեան համառոտումն է, հիմնականում օրինակների ու կրկնվող բացատրութիւնների

բացթողումով, երբեմն ինքնուրույն մոտեցումով, ուստի անհավանական¹¹ չէր Զեյթունցու քերականության համընկնումը նաև Երզնկացու աշխատության հետ: Բայց տեքստային քննությունը պարզեց, որ նման դուգադիպությունները մեծագույն մասում Զեյթունցին ավելի հարազատ է Մործորեցուն, քան Երզնկացուն: Նշանակում է, որ Զեյթունցու հիմնական անմիջական աղբյուրը Մործորեցու քերականությունն է: Այս եղրականությունը համողիչ դարձնելու համար դնենք հետևյալ հոանդամ զուգադրությունը.

ԵՐԶՆԿԱՅԻ

«Զի որպէս ընթացք կենդանաց ոտինն փոխումամբ լինի, որով և վճարէ զուղևուրդին շափատը, և ի գնացսն է, զի բացարձակ բայլեն և է, զի մանրաբայլ և է, զի աշխատել և երբեմն հանդարտ դնացիւր և աշխատ ի կէտն հասեալ աւարտեն, ըստ այսմ աւզս դնացքդ շարժին թռչունմ շարժմամբ քեւոցն ըստ ոտին աւրինակի զօղն հերձեն նոյնպէս և զաղակք զշուրս...»

(Ն 2296, էջ 193ա):

ԶԵՅԹՈՒՆՅԻ

«Ոտն շափ աւի, զի որպէս կենդանի գնանապարհ ուղևորութեան շափատը գնացիւք վնարեն, է, զի ընդարձակ ֆայլիւք և է, զի մանրագնացք, երբեմն աշխատել և երբեմն մեղմ նեմելով զընկամ»

ԵՐԶՆԿԱՅԻ

«Եւ եմ սեռք, որդոն արարաւ, որպէս շինող տան և տնկիչ բուրաստանի, կամ թէ որ արարող բարոյ և շարի, որպէս իշխանական. արարած, որպէս արարեալ յումնեքէ, ըստ որում և մարդն յաստուծոյ, ձեռք քո արարին և ստեղծին զիս. արարում որպէս ի մէնչ արարուած գործոց...»

(Մատ. Թ. 2296, էջ 160բ):

ԵՐԶՈՐԵՅԻ

«Ոտն շափ աւի, զի որպէս կենդանի գնանապարհ ուղևորութեան շափատը գնացիւք վնարեն, է, զի ընդարձակ ֆայլիւք և է, մանրագնացք, երբեմն աշխատել և երբեմն մեղմ նեմելով զընկացս աւարտեն, այսպէս և աղապարիկ թռչունմ շարժմամբ քեւոցն զաղդ և զուղակք զշուրս...»

(Ն 2365, էջ 115ա—բ):

բացս աւարտեն, սոյնպէս և յօղապարիկ թռչունմ շարժմամբ քեւոցն զօղն և լօղակք զշուրս»

ԵՐԶՈՐԵՅԻ

«Եւ եմ սեռք, որդոն, արարող, արարած, արարում: Ասացեալքս յօդ ոչ յայտնեն, սակայն զսերս ցուցանեն. և է արարողն արական իբր ստեղծաւ, շինաւ, տրեգաւ կամ նիւրոյ կամ բարոյ և շարի. իսկ արարածն իբր թէ կրեալ յումնեքէ, իգական է, որպէս շինեալ, տրեկեալ, ստեղծեալ իբր մարդ կամ ալ ինչ յաստուծոյ, իսկ արարումն շեղոք է, զի զսկիզբն յարականէ ունի և զվերջն յարարածոյն...»

(Մատ. Թ. 2365, էջ 97ա):

«Հարց. է՞ր ասէ. և են սեւք որգոն արարող, արարած, արարուած:

Պատ. Սերքն այսք են. արական, իգական, չէզոր... և ասէ արարող, որ է յարական իբր ստեղծող, շինող, տնկող, կենդանատու, պարգևատու, որ է տվող

նիրի կամ բարտյ և շարի, իսկ արարածն իբր քէ կրեալ յումեմէ, իգական է իբր շինեալ, տնկեալ, ստեղծեալ, կենդանացեալ, պարգևատու, իսկ արարուածն չէզոք է, որ է արարողութիւնս:

Զեյթունցին իմանալով, որ Ծործորեցու աղբյուրը Երզնկացու քերականությունն է, իր քերականությունը կազմելիս չի բավարարվել միայն Ծործորեցու աշխատությամբ, այլ անհրաժեշտ առիթներով Ծործորեցու թերին լրացրել է նրա իսկ սկզբնաղբյուրով՝ միջնադարում շատ մեծ տարածում գտած և հեղինակություն վայելող Երզնկացու աշխատությամբ: Զեյթունցին երբեմն Ծործորեցու կրճատումը համարել է անճիշտ և իր քերականության մեջ ներառել Երզնկացու ընդարձակ բացատրությունը, ինչպես հստակ երևում է հետևյալ ղուգադրություններից.

ԵՐԶՆԿԱՅԻ

ՆՈՐԾՈՐԵՑԻ

ՋԵՅԹՈՒՆՅԻ

1. «Իսկ ընդունելութիւնդ ունելութիւն ասի, քան[զի] բառս այս ունի խառնումն յանուանէ և ի բայէ. Երէ անունն վայելչական կրիւք է ունակացեալ՝ գովեալ և երանեալ, իսկ քէ անվայելչականագունիւք՝ պարսաւալ և եպերեալ...»

(Ն 2296, էջ 114ա):

«Ընդունելութիւն. սա

ունելութիւն ասի, լսի, սինքն իմանի անուն և բայ խառնեալ, քանզի բառս այս ունի խառնումն յանուանէ և ի բայէ, իբր գովեալ, պարսաւալ, ստեղծեալ...»

(Ն 2365, էջ 66բ—67ա):

«Ընդունելութիւն ասի, այսինքն իմանի անուն և բայ խառնեալ, քանզի բառս այս ունի խառնումն անուանէ և բայէ. երբ անունն վայելչական կրիւք է ունակացեալ, այսինքն բարի և վայելուչ կիր ունի..., այսպէս՝ գովեալ, երանեալ, օրհնեալ... իսկ քէ անվայելչականագունիւք..., պարսաւալ, եպերեալ»:

(Երուսաղեմ, Ն 1163, էջ 103—104):

կամ հետևյալը՝

«Եւ յատկականն, որ է ինքնուրոյն, որպէս Գարիէլ, Մովսէս, Եզն Խայնակ, և այլքն, զի հաստատութիւն ընթանու է և ոչ մասնական և յատուկ ըստ անհատի և ըստ յոյժից...»

(Ն 2296, էջ 126բ):

«Եւ յատկապէս՝ զառանձինն, որպէս Գարիէլ, Մովսէս, Պօղոս...» է ինքնուրոյն, այսինքն միակ, (Ն 2365, էջ 60բ):

«Եւ այլք, զի հաստատութիւնն, որ ինքնուրոյն, յայսինքն միակ, արանձինս՝ որպէս Գարիէլ, Մովսէս, Դաւիթն, Պաղակ եզն. հայտ եզն, հաժակ ձին և այլք սոյնպէս, որ յատկապէս անհատի անուն է և ոչ ըստ յոյժից»

(Ն 2380, էջ 340բ):

Այս միտքը ավելի համոզիչ է դառնում Զեյթունցու գործում այնպիսի հարցադրումների և հատվածների տակալությանը, որոնք բաց են թողնված Մործորեցու կողմից: Օրինակ, Երզնկացին ածանցների մասին խոսելիս գերադրականի բաժնում մեջ է բերում և Մովսես Քերթովի կարծիքը: Մործորեցին բաց է թողել Մովսեսի արտահայտությունը, իսկ Զեյթունցին այն վերածել է առանձին հարցի. «Հարց. եւ այն զի՞նչ է, որ ասէ մեկնիչն Մովսէս. երկուս ըստ իմանալեաց, երկուս ըստ տեսանելեաց և ըստ միոյ երկուց ղգալեաց»: Զեյթունցին այդ արտահայտության Մովսեսին պատկանելը կարող էր իմանալ միայն Երզնկացու գործից, որտեղ իսկապես այդ տողի դիմաց լուսանցքում կա Մովսեսի անունը: Իսկ պատասխանը կառուցում է լրիվ յուրովի: Այլ օրինակ. Մործորեցին անունների սեռերի մասին խոսելիս, իր աշխատության մեջ չի ներառել նաև մի շատ ընդարձակ հատված Երզնկացու գործից, որտեղ Երզնկացին առանձին-առանձին թվում է կենդանիների զանազան խմբերի սեռերը: Ճիշտ է վարվել Մործորեցին, որովհետև այդ ամբողջ հատվածը բռնազբոսիկ կուտակում է. Երզնկացին միտում է ունեցել բաղմացնել սեռի եռանգամ հակադրությունը կրող անունների թիվը հայերենում, այդ պատճառով էլ բաղմացրել է նախորդ մեկնիչների բերած հատուկներն օրինակները: Զեյթունցին հետևել է Երզնկացու օրինակին, մեջբերել է այդ հատվածը, անունները խմբավորելով՝ արջառներ, երեններ, տանու հավեր, բույսեր և այլն: Զեյթունցին ղգացել է, որ դա այնքան էլ անհրաժեշտ բան չէ, ուստի և աշակերտին դիմում է այսպես. «Եթէ կամիս, փաղանունաբար ծանուցից քեզ սակաւ մի»: Կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ ուղղակի Երզնկացու գործից չի օգտվել միայն. կարծում ենք իր նպատակադրումն է պատճառը. ամենապարզ և սեղմ քերականություն ստեղծելու համար համառոտը ավելի նպատակահարմար էր, քան ընդարձակը:

Զեյթունցու աշխատության մեջ կա մի հատված բառանշատման և տողադարձի մասին, որը սակասում է որոշ ձեռագրերում: Այդ հատվածը չկա նաև Երզնկացու և Մործորեցու գործերում: Հավանաբար, Զեյթունցու աշխատության սկզբնական օրինակում այդ հատվածը չի եղել, քանի որ նա հիմնականում հենվել է Մործորեցու քերականության վրա: Հնարավոր է, որ ավելի ուշ, ղուտ գործնական նպատակով՝ նկատի ունենալով օգտակարությունը, թերևս և ուրիշների խնդրանքով, նա այդ բաժինը ևս ներառել է իր քերականության մեջ, որպեսզի գործն ավելի ամբողջական լինի և աշակերտներին սովորեցնի նաև գրչության


արվեստի, հատկապես գրադարձի օրենքները: Պերճախոս է իր աշակերտի՝ Գրիգոր Տոմաժիրսքու վկայությունը. «...Որ բազում ջանիւ և աշխատութեամբ աշխատեցաւ ի վերայ անպիտան ծառայիս, որ ոչ էի հմուտ այսմ արհեստիս և գրադարձիս»: Զեյթունցին իր քերականության այդ պակասը լրացրել է Գևորգ Սկեռացու «Խրատ վասն հանգամանաց հեգիցն, որ և պատճառն իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան» գործից⁵:

Վերոհիշյալ հաստատումներից կարելի է եզրակացնել. Դավիթ Զեյթունցին իր քերականությունը կազմելիս ըստ էության հիմնվել է Ծործորեցու քերականության վրա, բայց ձեռքի տակ ունեցել է նաև Երզնկացու և ուրիշ հեղինակների (Վարդան Արևելցի—ըստ Գ. Զահուկյանի—Գևորգ Սկեռացի) գործերը, անհրաժեշտ դեպքում այնտեղից լրացումներ կատարելու համար:

Այս եզրակացությունը չի բացառում ինքնուրույն հատվածների, ուստի և յուրովի արժեքի գոյությունը Զեյթունցու աշխատության մեջ, որովհետև Զեյթունցին շատ հաճախ բոլորովին նոր բացատրություն է տվել նախորդների՝ կրկնությունից մաշված մտքերին:

⁵ Մեջբերումը ըստ Լ. Խաչերյանի «Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» գրքի, Երևան, 1963:

Գալթ
317



Գ. ԶԵՅԹՈՒՆՅՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրերի գյուտից հետո հայոց լեզվի գիտական ուսուցումը դարձավ անհրաժեշտություն: Հայոց լեզվի դասավանդման նախաշավիղը եղավ Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ Քերականութեան» աշխատությունը, որը հայերենի թարգմանվեց V դարի երկրորդ քառորդում, հավանաբար Դավիթ Անհաղթի կողմից¹: Սակայն Թրակացու քերականությունը հունարենի լեզվական իրակությունների նկարագրությունն էր և չէր կարող արտացոլել հայերենի համակարգը: Այդ իսկ պատճառով թարգմանիչը բացահայտ միջամտություններ կատարեց նկարագրությունը հարմարեցնելու հայերենի համակարգին, բայց չկարողացավ դուրս գալ հունարենի աղղեցությունից: Թարգմանությունը, գոնե բովանդակային իմաստով, պատճենում էր, որովհետև հայերենին վերագրվեցին քերականական այնպիսի իրակություններ, որոնք խորթ էին: Թարգմանչի ձգտումն էր, որ թարգմանությունը թերի չլինի. իսկ այդ դեպքում հայերենի նկատմամբ բռնազբոսիկությունը անխուսափելի էր: Շուտով Անհաղթն ինքն էլ նկատեց, որ Թրակացու թարգմանությունը անբավարար է գրաբարի ուսուցումը բարձր մակարդակի վրա դնելու համար: Ինքն էլ եղավ առաջիններից մեկը, որ ձևակերպեց մեկնություն գրել Թրակացու քերականությանը: Դա նշանակում էր առավել մեծ տեղ տալ հայերենի լեզվական վիճակի ճշգրիտ նկարագրությանը, հակիրճ կամ ընդարձակ բացատրել թարգմանության դժվարմբբոնելի հատվածները, անգամ բառերը, ճշգրտիվ սահմանումները և, մանավանդ, բացատրել հայերենին հարադատ երևույթները, անշուշտ, դեռևս մնալով թարգմանության աղղեցության տակ, չթոթափելով հունարենի համար սովորական, բայց հայերենին խորթ ձևերը:

¹ Այդ մասին տե՛ս Գ. Զահուկյանի նշված աշխատությունը (էջ 53—61), որի դրույթները գերակշռող մասով համոզիչ են և անառարկելի:

Մինչև հիսունական թվականները նույնիսկ կասկած չէր հարուցում այն կարծիքը, որ այդպիսի մեկնություններից ամբողջական հեղինակային տեքստով մեկ հասած ամենահինը Գրիգոր Մազիստրոսի մեկնությունն է։ Բայց Գ. Զահուկյանը Մատենադարանի ձեռագրերից գտավ և համեմատական բնագրով հրատարակեց Դավիթ Անհաղթի մեկնությունը, համեմատելով այն Ն. Ադոնցի վերականգնած տեքստի հետ։ Այս անակնկալից դուրս նախամաղիստրոսյան շրջանի մեկնությունների վերականգնման երախտիքը պատկանում է Ն. Ադոնցին։ Նա, ուսումնասիրելով Մազիստրոսի մեկնության ձեռագրերը, նկատեց, որ Մազիստրոսն իր մեկնությունը կազմելիս հենվել է նախորդ հեղինակների մեկնությունների վրա, ամփոփելով նրանց ողջ քերականական իմացությունը, չմոռանալով նշել աղբյուրը։ Բայց Մազիստրոսի հեղինակային նշումը կարող էր կասկածելի լինել թեկուզ միայն այն պատճառով, որ հետագա ընդօրինակողների անփութության հետևանքով կարող էր նշումը տեղաշարժվել, և վերագրումը կդառնար սխալ։ Այդ պատճառով էլ Ն. Ադոնցը դիմեց Հովհաննես Երզնկացու մեկնությանը, որն ամենածավալունն էր։ Երզնկացին նույնպես օգտվել է նախորդների քերականություններից և ամբողջությամբ օգտագործել Մազիստրոսի գործը, դրանով իսկ կատարելով շատ կարևոր աշխատանք։ Մազիստրոսը որևէ հարցադրում չարագրելիս քաղել է տարբեր մեկնիչների կարծիքն այդ մասին և դասել մեկը մյուսի ետևից, առանց խառնելու, այսինքն՝ կրկնել է կարծիքները նույն նյութի մասին, իսկ Երզնկացին ընտրել է տվյալ հարցադրման լավագույն մեկնությունը և այն դրել, նշելով հեղինակի անունը, և անցել է հաջորդ հարցադրման, առանց կրկնության։ Ադոնցը բանասիրական և բնագրագիտական մանրակրկիտ աշխատանքով գտավ երկու աղբյուրներում հանդիպող համապատասխան տեղերը, ճշգրտեց պատկանելությունը և վերակառուցեց Դավիթ Անհաղթի, Անանունի, Մովսես Քերթոզի, Ստեփանոս Սյունեցու և Համամ Արևելցու մեկնությունները, թեև ոչ ամբողջական։ Նա առավելաբար հենվեց Երզնկացու աշխատության վրա, որովհետև Երզնկացու գործը համարում էր «հանրազումարը» այն ամենի, ինչ հայ քերականական միտքը ստեղծել էր մինչ այդ, և աղբյուրը, որից պիտի բխեն բոլոր նոր ուղղությունները հետագա դարերում²։ Զահուկյանի գտած բնագիրը, ցույց տալով հան-

2. Ն. Ադոնց, նշված աշխատություն, էջ LXXXII: Այդ կարծիքին են նաև Գ. Զահուկյանը (նշվ. աշխ.) և է. Աղայանը։ Վերջինս իր «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատության մեջ միջնադարյան հայ քերականական միտքը քննում է հիմնականում Երզնկացու միջնորդությամբ։

դերձ որոշ տարբերություններ, մի անգամ ևս հաստատեց Ն. Ադոնցի վերականգնած տեքստերի հավաստիությունը:

Այսպիսով, միջնադարյան քերականական աշխատությունների կառուցվածքն ուսումնասիրելու համար ամենահին օրինակը դառնում է Մազիստրոսի աշխատությունը, որովհետև մյուսներից հեղինակային ամբողջական տեքստ չի հասել (վերապահություն՝ Անհադթի): Ադոնցը հեղինակային բնագրերը կառուցելիս բաժանումները կատարել է Թրակացու քերականության հետևությամբ: Հայտնի է, որ Թրակացու աշխատությունը բաղկացած էր 24 գլուխներից՝ ներառյալ և հավելվածը, սկսելով «Յաղագս քերականութեան» գլխից մինչև «Յաղագս ոտից»՝ տաղաչափության մասին հատվածը, քննելով խոսքի մասերը առանձին-առանձին, խոսքի գրի, կետի, վանկի և առոգանության մասին: Այս գործն իր ժամանակի համար թերևս ամենալայն ընդգրկումն ուներ:

Թրակացու թարգմանիչը, բնականաբար, սահմանեց այս գլխաբաժանումը: Բայց Անհադթը, ելնելով ուսուցման կարիքներից, իր մեկնության մեջ ավելացրեց մի «Նախիրգան»՝ ներածական ընդարձակ մի բաժին, որի նպատակն էր բացատրել, թե ինչու ենք ուսումնասիրում քերականությունը: «Թէ է՞ր աղազաւ բաղում փոյթ յանձին կալեալ վասն քերականութեանս»: Մեր նպատակից դուրս է քննել յուրաքանչյուր հեղինակի բացատրությունն այդ հարցին. այսքանը նշենք միայն, որ բոլորն էլ ընդգծել են քերականության խիստ անհրաժեշտությունը. «Քերականութեամբս սլարտ է մտանել յամենայն արհեստ իմաստասիրութեան», «զի իբրև խրատ իմն ցուցական, փոքու բանիւ ի դրունս մեծամեծ և բազմահանճար իմաստնոցն գրելոց առաքէ ղաշակերտեալսն»³: Անհադթը դուրս է գցում նաև 23-րդ՝ «Յաղագս արուեստի» գլուխը, որովհետև արվեստի հարցին անդրադառնում է նույն «Նախիրգանում»: Որոշ գլուխներ ընդարձակվում են, ուրիշներ կրճատվում ըստ նյութի կարևորության՝ հայոց լեզվի ուսուցման տեսակետից: Ընդարձակվում են հնչյունաբանության, անվան և բայի բաժինները: Թրակացու գործի վերջում կար նաև հունարեն *ὑποθεσις* (կոփել) բայի խոնարհման հարացույցը: Այն կցված կա նաև Մազիստրոսի աշխատությանը, թեև այստեղ կան բաղմաթիվ բայաձևեր (հատկապես երկակի թվով), որոնք խորթ են եղել գրաբարի խոնարհման հարացույցին: Թարգմանիչը բռնադրոսիկ կերպով ստեղծել է այդ ձևերը, իսկ հետագա մեկնիչների վրա գործում է ավանդույթի ուժը: Նրդնկացին, Վարդան Արևելցին և Եսայի Նշեցին դուրս են գցել դրանք:

³ Հովհաննես Երզնկացի, Մատենադարան, ձև. № 2296, էջ 48բ—49ա:

Կառուցվածքի տեսակետից Անհաղթի, Անանունի, Մ. Քերթոզի, Ստ. Սյունեցու, Համամ Արևելցու, Մազիստրոսի, Երզնկացու և Մործո-րեցու մեկնությունները նույնական են. տարբերությունները ծավալի մեջ են: Այս բոլոր մեկնությունների համար բնորոշ է այն, որ մեկնիչը տվյալ գլխի տակ ընկնող հարցադրումները քննում է ներհյուսված, աշխինքն, մեկնելին և մեկնությունը որոշակիորեն չեն սահմանազատ-վում, առավել ևս՝ հարցադրումները: Ենթադրենք, մեկնիչը շարադրում է «Յաղագս Քերականութեան» գլուխը. այստեղ մեկը մյուսի ետևից իրար են հաջորդում Թրակացու այս կամ այն պնդումը և մեկնությունը՝ բացատրությունը, առանց որոշակի տարբերակման: Մեկը կարող է տվյալ հարցադրումը, օրինակ՝ թե ինչ է քերականությունը, բացատրել հակիրճ, մյուսը՝ ընդարձակ, բայց դրանից ոչինչ չի փոխվում. մեկնելին և մեկնությունը պետք է զանազանել ընդհանուր շարադրանքից: Այս խումբը պայմանականորեն անվանում ենք ներհյուսված մեկնություն-ներ:

Կա մեկնությունների մի ուրիշ խումբ, որն իր կառուցվածքով որո-շակիորեն տարբերվում է վերոհիշյալից: Դրանցից հրատարակված կան Վարդան Արևելցու և Եսայի Նշեցու մեկնությունները Լևոն Խաչերյանի ուսումնասիրությամբ: Երկուսն էլ ծավալով գիշում են Հովհաննես Եր-զնկացու աշխատությանը, բայց կարեորդ այստեղ մատուցման ձևն է: Մեկնությունների ներհյուսված ձևը XII դարից հետո դժվարամատչելի էր նոր սերնդի ամենօրյա ուսուցման համար երկու պատճառով. նախ՝ բովանդակության խրթնությունը (հարցադրումների խճողում, ոճի բարդություն) կոժվարացնի ուսուցումը, որովհետև խոսակցական լե-զուն այլևս դասական գրաբարը չէր, այլ ժողովրդական տարրերով հարստացած գրաբարը (միջին հայերենի նորմավորման շրջան), հրկ-րորդ՝ Մազիստրոսի նյութի ծավալի ընդարձակությունն արդեն ծանրա-բեռնություն էր հետզհետե գրաբարից լրիվ հեռացող միջին հայերենով խոսող աշակերտի համար: Հասկանալի է, որ պատմագրությունն ու քերականությունը եղան դասական գրաբարի պահպանման կրողները, բայց լեզվի զարգացումը թափանցեց նաև այստեղ, պահանջելով պար-զեցում և հասկանալիություն, առավել ևս մանկավարժական աշխա-տանքում: Այդ պարզեցումը եղավ առաջին հերթին մեկնությունների ձևի պարզեցման միջոցով: Արևելցու և Նշեցու քերականությունների կառուցվածքի հիմնական նորությունն այն է, որ նրանք իրենց մեկնությու-նը բաժանում են երկու հզրի՝ «Բան» և «Մեկնութիւն»: Վերցվում է Թրակա-

ցու քերականության կամ հետագա մեկնիչների մեկնության այս կամ այն տողը որպես հարցադրում՝ բան, և հետևում է բացատրությունը՝ մեկնություն: Երբեմն բանը կարող է լինել ընդարձակ, երբ թվարկվում են ինչ-որ բանի մասեր, օրինակ՝ Նչեցու դորժում:

«Բան. Քերականութիւն է հմտութիւն, որ ի քերթողացն և ի շարագրողացն իբրու բաղում անգամ ասացելոցն: Եւ են մասունք նորա վեց. նախ.....

Երկիր.....

Երիր.....»:

Հետևում է ընդհանուր մեկնությունը, հետո դարձյալ այդ մասերը քննվում են մեկ առ մեկ և տրվում է նրանց մեկնությունը: Երբեմն բանը կարող է հարց պարունակել. այդ դեպքում մեկնությունը դառնում է պատասխան: Կասկածից վեր է, որ քերականության մատուցման այս ձևն ավելի նպատակահարմար է և նյութը դյուրըմբռնելի, քան երբ շարագրում ենք միաձուլված. աշակերտը սովորում է որոշակի հարցադրման բացահայտող մեկնությունը և ընկալում է նյութը, կարողանալով նաև վերարտադրել այն: Եթե ձևի պարզությանը դումարվում է նաև լեզվի պարզությունը, ինչպես Վարդան Արևելցու երկում, ապա մեկնությունը դառնում է անփոխարինելի: Այդ իսկ պատճառով Մադիստրոսի մեկնությունը դուրս մնաց կիրառությունից, տեղը զիջելով Արևելցու և Նչեցու երկերին⁴: Սա է պատճառներից մեկը նաև նախորդ շրջանի բնագրերի կորստյան. կիրառությունից դուրս մնալով, նրանք չունեցան նաև ընդօրինակողներ:

Մեկնությունների այս ձևն անվանում ենք բան-մեկնություններ:

XV—XVII դարերում, երբ զբաղարը միայն ուսումնականներին էր հայտնի և հասկանալի, քերականության դասագրքերն առավել ևս պարզեցնելու անհրաժեշտություն ծագեց, որովհետև աշակերտը խոսում էր իր շրջանի ժողովրդական լեզվով, որը կարող էր նվազ կամ առավել չափով հարուստ լինել գրաբարի լեզվական հենքով: Մյուս կողմից, մեկնությունների նախորդ երկու տիպերում էլ (առաջինում ավելի շեշտված) քերականական մեկնությունները խճողված էին կրկնություններով. նույն հարցադրումը քննվում էր մի քանի անգամ և մեկնաբանվում տարբեր առիթներով, հաճախ մեջբերվում էին տարբեր հեղինակների կարծիք-

⁴ Վարդան Արևելցի, Մեկնութիւն Քերականի, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչերյանի, Երևան, 1972: Նսալի Նչեցի, Վերլուծութիւն Քերականութեան, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչերյանի, Երևան, 1966:

ները նույն հարցի մասին: Վերջապես, լեզուն ինքը, այսինքն նկարագրելի նյութը, մեծ փոփոխություններ էր կրել, որոնք անհրաժեշտաբար պետք է մտնեին լեզվի նկարագրության մեջ: Այս նոր քերականություններում ձգտում է նկատվում լեզվի պարզությունը հասցնել ամենամատչելի սահմանի, նյութը թուփափել ավելորդ և անհարկի կրկնություններից և նկարագրել այդ շրջանի լեզվի վիճակը:

Այս նոր ուղղության գլխավոր առանձնահատկությունն է հարց ու պատասխանը: Մեկնության հեղինակը մեկնելին տալիս է հարցով, հետո դնում է միայն այդ հարցի պատասխանը: Եթե այդ պատասխանն իր մեջ ունի մեկնության կարիք ունեցող բան, ապա նույնպես վերածվում է հարցի, և այսպես շարունակ: Նյութն ունի միայն գլխավոր բաժանումներ, պահպանվում են Թրակացու քերականության ավելի կարեւոր գլուխները, իսկ ուրիշներ միանում են իրար մի ընդհանուր վերնագրի տակ: Կառուցվածքի այս արտակարգ պարզությունը կրճատում է մեկնելի հատվածները, ընդգծելով հիմնականը այդ հարցադրման մեջ, և որոշակի է դարձնում պատասխանը: Այս ձևը որոշ չափով կար դեռևս Առաքել Սյունեցու «Համառօտ լուծմունքի» մեջ: Այսպիսի մեկնությունները կարելի է կոչել հաջաբան:

Այս կառուցվածքի երկրորդ առանձնահատկությունը դյուրամատչելիությունն է, ոճի աշխուժությունը: Օրինակ, Մատենադարանի № 2380 ձեռագրի մի անվերնագիր մեկնության մեջ, որի հեղինակը անժանոթ է, կա մի շատ հետաքրքիր հատված, որը բերված է նաև Գ. Զահուկյանի նշված աշխատության մեջ: Հարց ու պատասխանի փոխարեն զրուցում են աշակերտ և ուսուցիչ. «հնդրեմ ի քէն մեկնեա ինձ...» և հետևում է պատասխանը. «Լուր որդեակ, և կարճառօտ բացայայտեցից...»: Բայց հանկարծ աշակերտը հարում է. «Հայցեմ ի քէն, մի թողուր զիս կիսակատար, այլ և զվեցերորդն մեկնեա, զի յոյժ տազնապեցայ և ձանձրացայ ի երկարացուցանելոյդ և հեղ գոլով ուսուցանելոյդ. ո՞ր գիտէ, գուցէ մեռանիմ ես այսօր և մինչև ի վաղին ոչ ժամանեմ և ի փափաղանացս զրկիմ»: Ուսուցիչը մեղմությամբ սաստում է աշակերտին. «Լուր, գիտեմ, զի հարցողին պատասխանի առնել բարեք է և հայցողին տալ. այլ թուի ինձ, զի ոչ է յարէն աշակերտի սաստել, այլ համբերութեամբ լուռ կալ և սպասել դիպող ժամու»⁵:

⁵ Մատենադարան, ձեռ. № 2380, էջ 162ր և Գ. Զահուկյան, Քերականական և ուղղադրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 340—341:

Այս կառուցվածքի երրորդ առանձնահատկությունը օրինակների առատությունն է, երբեմն չափից ավելի: Հասկանալի է, որ օրինակների առատությունը նպատակ ուներ կայունացնել դիտելիքը:

Այս երեք առանձնահատկությունների տեսակետից էլ ամենամբողջականն է Դավիթ Զեյթունցու քերականությունը:

Դավիթ Զեյթունցին հատուկ հրավիրվել է կալով՝ ստանձնելու համար ս. Աստվածածին եկեղեցուն կից գործող դպրոցի տեսչությունը: Հավանաբար այստեղ է, որ ձևնարկում է ստեղծել իր քերականությունը: Զեյթունցին նկատելով, որ իր աշակերտներին մի մասը (թերևս մեծ մասը) խոսում է թաթարախառն հայերենով և դժվար թե կարողանա քերականություն սովորել, օրինակ, Երզնկացու աշխատությանը, ձևնարկում է գրել նոր քերականություն, հնարավորին չափ պարզ մատուցված նյութով (երբեմն բացատրում է նույնիսկ շատ հասկանալի բառեր, օրինակ՝ ոչ միայն «տառք կոչին, այսինքն տարերք», այլև «քնար ղերդաբանս ասէ, այսինքն զսագերն»): Հաճախ դիմում է քաթարեբեհն (ղփշաղեբեհն) առածների, միտքն ավելի հասկանալի բնծայելու համար. «Զի անգէտք ոչ ճանաչին զհմուտ և զանհմուտն, որպէս ասէ. պիլան պիլիր պիլեուրի, պիլմէկան նէ պիլսին պիլլիւրի»⁶: Որոշ դրշագրերում Զեյթունցու քերականությանը հետևում է հայերեն և ղփշաղերեն մի բառաբան՝ «Բառք քերականք», որը հայերեն քերականական տերմինները բացատրում էր ղփշաղերենով: Գ. Զահուկյանն իրավացիորեն գտնում է, որ «ամենայն հավանականությամբ՝ այդ ցանկի հեղինակը Զեյթունցին է»: Բառարանը հեղինակի անունով վերառություն չունի, բայց եթե նկատի ունենանք Զեյթունցու գործածած առածներն ու բացատրությունները, թաթարական կյանքից բերված օրինակները, մյուս կողմից հեղինակի նպատակը, ապա կարելի է հաստատապես այդ բառարանը ընդունել որպես օժանդակ ցանկ՝ նյութը դյուրին ընկալելու համար: Այլ գրչագրերում բառարանի բացակայությունը կարելի է բացատրել գրիչի կամ ստացողի անհատական մոռեցումով՝ պարզապես անհրաժեշտություն չի զգացել:

Այսբանով Զեյթունցու քերականությունը դառնում է ժամանակի պահանջներին համապատասխանող դասագիրք:

Զեյթունցին ձգտում է իր քերականությունը դարձնել ամենամատչելին, որպեսզի աշակերտները չծուլանան և սովորեն իրենց մայրենի

⁶ Երուսակեմի Հայոց պատրիարքարանի ձեռագրատուն, ձեռ. № 1163, էջ 70:

լեզուն. «...Ի վարժումն մանկանց նորագունից, զի ի հարցանել միոյն հարկ լինիցի միւսոյն տալ պատասխանի, որ վասն այնորիկ յաւթա-
րեսցին ուսանել և մի հեղգասցին»: Այդ պատճառով էլ նա կրկնություն-
ները թոթափել է, իսկ մթին տեղերը աշխատել է ավելի պարզ մեկնել՝
«իսկ ի տեղիս տեղիս գերկարն, որ ձանձրացուցանէր զընթերցող, զնա
կարճացուցի, և զկարճսն, որ զմիտ բանին պարզ ոչ յայտնէր, զայն
երկարացուցի շափաւոր»: չնայած որ դա նրան միշտ չի հաջողվում՝
ինքը նույնպէս ունի երկարաբան պատասխաններ, ավելորդ բացատրու-
թյուններով խճողված:

Մեկնությունը կառուցված է այնպիս, որ աշակերտները տնային
պարապմունքի ժամանակ ունենան պատրաստի հարցարան: Այդ հոգ-
նությունը հանձն է առել Զեյթունցին, որովհետեւ դտել է, որ «պարտ է
զիտենալ զիր ազգին լեզուն կատարեալ ըստ ամենայն բառից և գաւա-
ռից խօսից, և յետ նորա, եթէ հնար է, զըրջակայ ազգաց»: Բայց արդյո՞ք
Զեյթունցու գործն այդքան համեստ է՝ «Յեւեկուս բաժանեցի, այսինքն
ի հարցումն և ի պատասխանիս»: Մանրամասն քննությունը պարզում
է, որ Զեյթունցին լուրջ ներդրումներ ունի նաև քերականական մտքի
զարգացման մեջ: Չնայած բովանդակության առումով մնում է Թրակա-
ցու մեկնությունների ազդեցության տակ, օրինակ՝ նկարագրում է եր-
կակի թիւը (թեև հայերենին խորթ է համարում), սակայն մյուս կողմից
մասամբ նկարագրում է միջին հայերենի լեզվական վիճակը, չի քաշվում
օգտագործել միջին հայերենի բայական ձևեր, բառապաշար և այլն:

Անշուշտ, դժվար է պնդել, որ Զեյթունցին է այդ հարցարանների
սկզբնավորողը (վերևում նշեցինք, որ Առաքել Սյունեցին նույնպէս
ունի հատվածներ), բայց որ Զեյթունցու գործը ամենակատարյալներից
մեկն է, չենք կասկածում:

Քերականության ընդհանուր ընդգրկումը նույնն է նախորդների
հետ. գրեթե ուշագրությունից վրիպած հարց չկա: Գործը հայոց լեզվի
ամբողջական դասադիրք է: Զեյթունցին Թրակացու քերականության
գլխաբաժանման առաջին հինգ գլուխները ամփոփել է մեկի տակ՝ «Յա-
ղագս Քերականութեան», ոչ թե անտեսելով հարցադրումները, այլ
դրանք բխեցնելով մեկը մյուսից: «Յաղագս տառի» գլխում շատ մանրա-
մասն ամփոփել է հայերենի հնչյունաբանությունը, չնայած դեռևս լրիվ
ձերբազատված չէ հնչյունների խառը դասակարգումից: Վանկի մասին
պոլիսները կան գրեթե նույնությամբ, մի քիչ ավելի ընդարձակ: Շատ
ծավալուն է «Յաղագս բառի» գլուխը, որտեղ խոսվում է նաև տողա-
դարձի մասին: Սա նորություն էր Զեյթունցու գործում իր աղբյուրների

նկատմամբ: «Յաղագս բանի» գլխում Զեյթունցին, ի տարբերություն մյուս մեկնիչների, նախ կարճ ի կարճ սահմանում է խոսքի մասերը, մանրամասնությունները թողնելով առանձին գլուխների տակ քննելու: Որպես ամենակարևոր խոսքի մասեր, այստեղ քննվում են անունն ու բայը. մենք դրանք բնագրում վերածել ենք առանձին գլուխների: Ի միջի այլոց, անցումը անունից բային կատարված է վարպետությամբ. բացատրում է, թե որոշ անուններ բովանդակում են «կիր և ներգործութիւն», օրինակ՝ ընտրեալ, դատաւոր, հետո անցնում է բային, ընդգծելով, որ բայերն են բուն «կիր և ներգործութիւն» ցույց տվող բառերը:

Մյուս գլխաբաժանումները հետևում են նույնությամբ՝ հակիրճ կամ ընդարձակ: Զկա 23-րդը՝ «Յաղագս արուեստի»: Բառարանը շունեցող ձեռագրերը ընդհանրապես թերի են պարունակում Զեյթունցու քերականությունը:

Նյութը մատուցվում է սյուրզից դեպի բարդը ընթացքով, օրինակ հենց սկիզբը.

Հարց. Զի՞նչ է քերականութիւն:

Պատ. Հմտութիւն է:

Հարց. Զի՞նչ է հմտութիւն:

Պատ. Ծանօթութիւն է:

Հարց. Զի՞նչ է ծանօթութիւն:

Պատ. Տեղեկութիւն է:

Հարց. Զի՞նչ է տեղեկանալն:

Պատ. Նախ բաժանի յերիս. նանաշել ի յիրէ,
իմանալ ի գործոյն,
հասկանալ ի ձայնէ:

Զեյթունցին իր հարցերի մեծ մասը կառուցել է «Վասն է՞ր ասէ», «է՞ր ասէ» կամ «Զի՞նչ է, որ ասէ» սկզբնաբառերով, որոնց հետևում է հարցի բովանդակությունը, որը թվում է, բառացի քաղված մեջբերում է: Այստեղ հարցերը մոտենում են քաների, բայց չեն նույնանում, որովհետև անկարևորը թթափվել է, և հարցը կառուցվել է հիմնական եղբերի վրա: Պատասխանները հիմնականում հակիրճ են և կոնկրետ, բայց միշտ չէ, որ ստեղծվում է հակիրճ պատասխան, այլ երբեմն ներանք դառնում են նույնիսկ երկարաբան: Որոշ դեպքերում դա բխում է հարցից, թեև երկարաբանությունից կարելի էր խուսափել, եթե Զեյթունցին կարողանար աղաթվել խորհրդասպաշտությունից, օրինակ, այն

հատվածում, ուր բացատրում է, թի ինչ խորհուրդ ունի հայերեն գրերի՝ 36 թիվը:

Զեյթունցին իր քերականության մեջ բավական շատ օրինակներ է բերում այս կամ այն քերականական երևույթը բացատրելու համար, բայց երբեմն ընկնում է շտիպողանցության մեջ, օրինակ, գոյականների սեռի մասին հատվածում: Այլ տեղերում, ճիշտ օրինակների կողքին, երևում են նաև սխալ օրինակներ, թեև գնրակշռող մասը ճիշտ է բերված և օգնում է աշակերտին լավ ընկալելու նյութը: Աղքատ են հոլովման օրինակները: Երբեմն կան աշխույժ կառուցված հատվածներ, երբ աշակերտը վերաբերմունք է ցույց տալիս ուսուցչի պատասխանին, կասկածում է կամ հաստատում: Հետաքրքիր է և այն, որ Զեյթունցին հատուկ անունների մասին խոսելիս լայնակի անուններ է բերում, որոնց ինքը այլ տեղ հիշում է իր հիշատակարաններում: Սրանով գործը ստանում է նաև ճանաչողական արժեք, որովհետև դրանք իր անմիջական շրջանակի մարդիկ են՝ աշակերտ, միաբանակից և այլն:

Զեյթունցու քերականությունն առատ նյութ է տալիս նաև իր ժամանակաշրջանի լեզվի վիճակը ուսումնասիրելու համար, որովհետև պոչականի, մակբայների և նախադրությունների կիրառության համար բերված օրինակները ստեղծված են հեղինակի կողմից, հաճախ քաղված ժողովրդական լեզվից, հատկապես շատ կան առածներ և դարձվածներ:

Այս բոլորից հետևում է, որ Զեյթունցին ստեղծել է մանկավարժորեն մտածված և ձևավորված մի դասագիրք, որն իր ժամանակի համար ամենամբողջականն էր և կառուցված էր, հաշվի առնելով աշակերտների լեզվական կարողությունը և հայերենին լավ տիրապետելու խիստ անհրաժեշտությունը:

Գ. ԶԵՅԹՈՒՆՅՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Զեյթունցու աշխատության բովանդակության համար բնութագրական է երկու հանգամանք¹: Իր քերականությանը կառուցելով նախորդ մեկնիչների դործերի համադրումով, Զեյթունցին անխուսափելիորեն թրակացու հայ մեկնիչների ազդեցության տակ է (առանձնապես իր սկզբնաղբյուրի՝ Մործորհցու), հատկապես քերականության էությունը, առարկան և դանադան քերականական երևույթներ քննելիս: Մյուս կողմից, մանկավարժական նպատակով տվել է այլևայլ բացատրություններ՝ առավել պատկերավոր ու հեշտ ընկալելի, քան նախորդները, դիմելով և իր ժամանակի լեզվին՝ միջին հայերենին: Առաջին հայացքից երբեմն պարզունակ, ոչ խորը թվացող բացատրություններն ու սահմանումները արդարանում են նպատակով, որովհետև գործն ամեն ինչից առաջ դասագիրք է:

Այսպես, առաջին հայացքից թվում է՝ քերականության սահմանումն ավելի քան մակերեսային է. «Հարց. Զի՞նչ է քերականութիւն: Պատ. Հմտութիւն է»: Զկա հմտություն բառի այն խոր ըմբռնումը, ինչ կա, ասենք, Վարդան Արեւելցու գործում՝ «Զքերականութիւն... ի վատթարութիւն ածիք, զի ոչ ասուցիք զիսութիւն, այլ հմտութիւն»: Բայց հմտությունը, ծանոթությունը և տեղեկությունը մեկը մյուսից բխեցնելով, վերջում արդեն նույն խորության է բերում, որովհետև հմտությունը ենթադրում է «ճանաչել ի յիբէ, իմանալ ի գործոյն, հասկանալ ի ձայնէ»: Ընթերցողները «ոչ սակաւ, այլ բազում անգամ» պետք է հմուտ լինեն «այսմ արուեստից և բառից»:

Քերականության անհրաժեշտությունն այսպես սահմանելուց հետո, Զեյթունցին իր աղբյուրի հետևողությամբ փորձում է պարզել, թե ովքեր են եղել առաջին «քերթողները»: Բացատրությունն ավանդական է. նախասկիզբը համարվում է Ադամը, հետո հիշատակվում են քաղղեացի-

¹ Զեյթունցու քերականության բովանդակության մասին իր նշված գրքում խոսել է Գ. Զահուկյանը, հիմնականում նկարագրելով նորությունները:

ների, հույների և ասորիների քերթողները: Իսկ «գեղեցիկ արուեստից և քերթութեանց» (իմա՝ քերականութեան) գտնող եղավ Դիոնիսիոս Թրակացին, որը լրացրեց Հոմերոսի թերին: Զեյթունցին մտահոգված է աշակերտին սովորեցնել նաև, թե հայոց մեջ ինչպես մուտք գործեց քերականությունը, որովհետև աշակերտը առարկում է. «Արդ զայդ ամենայն, զոր ասացեր, ոչ հայոց լեզուով և գրով է»: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը «խնդրեցին գիրս ըստ լեզուաց և առին», որովհետև հայերը նրանցից առաջ «յունաց և ասորոց գրովք վարէին»: Հետաքրքիր է, որ Զեյթունցին, ընդունելով հանդերձ աստվածային ներգործությունը, նշում է, որ գրերի մի մասը հույներից վերցրեցին՝ «զոր առին, զորն ի յունաց և զայլ յաստուածատուր պարգևացն»: Իսկ քերականության արվեստը հայերի մեջ սերմանվեց Մաշտոցի աշակերտների կողմից, որոնք Աթենքում «վարժեցան զամենայն փիլիսոփայական հանճարսն»: Ինչ որ սովորել էին հունաց լեզվով և գրով՝ «յարդարեցին ի հայ գիր և ի հայոց լեզուաւ», ուղղեցին «զթիւրեալ լեզուաւ»: Նրանց մեջ Զեյթունցին թվում է ոչ միայն քերականներին, այլև Նղիշին, Նզնիկին և այլոց: Այս հատվածը հատկապես կարևոր էր, որովհետև Զեյթունցու աշակերտները կտրված էին մայրենի հողից, ուստի և անհրաժեշտ էր հայրենասիրական լիցք տալ նրանց. «Պարտ է գիտենալ զիւր ազգին լեզուն կատարեալ, ըստ ամենայն բառից և զաւառից խօսից, և յետ նորա, եթէ հնար է, զըջակայ ազգաց»: Այդ իսկ նպատակով, ըստ Զեյթունցու, անհրաժեշտ է սովորել քերականության 6 մասերը, որպեսզի աշակերտը նմանվի ամենալի մառանի, անհրաժեշտ պահին գոհացնելու համար կարիքը, գտնելու համար ստույգը՝ լեզուների բաժանումից մինչև այսօր «ի գնշու և ի թոթովատ լեզուաց» ծովածինների մեջ: Եթե մեկն անփութ լինի իր լեզվի նկատմամբ, լքելով լույսը՝ կըջի խավարում, որովհետև «ծածկի տեսութիւն բանի ի ճշմարիտ գիտողացն»:

Պետք է պահպանել վերծանության՝ ընթերցանության կանոնները. կարդալ պետք է ըստ ենթադատության, այսինքն, «դատելով զառաջիկայ բանսն», ըստ առոգանության և ըստ տրոհության, զատորոշելով բառը բառից, բանը՝ բանից, որպեսզի «ոչ խառնափնթորես և ծածկես զիմացումն խորհրդոյն», այլապես չի բացահայտվի ստեղծագործության ուժը և կլինի «ունողն իբրև շունողն», զբանով անհմուտ ընթերցողը «զվաստակս նոցա (քերթողների—Ե. Մ.) արհամարհէ և զօրութիւնս և զշինուածս տապալէ, այսինքն կործանէ», դեռ ավելին, ինքնիրեն ծաղրի առարկա կդարձնի «ճշմարիտ գիտողացն»:

Այսպէս բնդարձակ և համողիչ ձեռով հիմնավորելով քերականութեան մասերի ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը, հատկապէս վերծանութեան կանոնների յուրացումը, Զեյթունցին անցնում է ուրախի, կեանքի և հազներգութեան ուսումնասիրութեանը:

Ուրախի մասին տեղեկութիւնները հակիրճ են. այստեղ հետաքրքիր է պատկանաւորի բացատրութեան համար բերված բաժանումը: Ըստ նրա պատկանաւորը ներդաշնակ և իմաստակիր ձայնն է, ինչպէս մարդու ձայնը: Ըստ այդպիսի ձայնի արձակման երևույթները բաժանվում են չորս խմբի. եթէ հատկանիշների առկայութիւնը նշանակենք +, իսկ բացակայութիւնը՝ —, կունենանք խմբավորման այսպիսի պատկեր.

ներդաշ. իմաստակր.

+	+	մարդու արձակած ձայնը
+	—	երևակայական էականների ձայնը (արաւելդ)
—	+	կենդանիների ձայնը
—	—	անշունչ տարրերի ձայնը (օրինակ՝ քար):

Կետի մասին հատվածը որեւէ նոր բացատրութիւն չի ավելացնում Թրակացու մեկնիչների համեմատութեամբ: Այստեղ մանկավարժորէն հետաքրքիր է ստորակետի, միջակետի և վերջակետի դերի մեկնաբանումը պատկերավոր ձևով. «Ձոր օրինակ, որ բարձր լեռոն մի լինի, որ ելանել կամի ոք, յորժամ երթայ ի ստորոտ լերինն, անգամ մի հանգչի սակաւ մի, և կրկին անգամ երթայ դառ ի վեր լերինն և, յորժամ որ հասանի ի մէջ լերին, կրկին անգամ հանգչի, մինչև որ ելանէ յաւարտ լերին, և կատարեաց երեք չափովք զընթացս իւր»:

Հագներգութեան մասին հատվածը նույնպէս հավելում չի բերում: Այստեղ նույնպէս պատկերավոր խոսքը կենդանի է դարձնում նշութը. հազներգութիւնը («կատակերգութիւն ըստ հայոց, գաւազաներգութիւն ըստ յունաց և մասխարութիւն ըստ պարսից») թէև անարդ է, բայց պահվում է, որովհետև կարող է երբեք անհրաժեշտ լինել, ինչպէս եթէ մեկը մի անարդ անոթ ունենա, և ասեն, թէ անպետք է, դուրս գցիր, կասես, մի գցիր, դիր ներս, թող մնա, կլինի ժամանակ, որ պետք կգա: Այս հատվածը բնագրում հեղինակի խոսակցական լեզվի արտացոլումն է. այնքան ազատ է շարադրված, որ բռնագրութիւն կլինէր այնտեղ որոնել դասական գրաբարի օրինաչափութիւնները: Այս մասը հարուստ է նաև ժողովրդական կենցաղի նկարագրութեամբ, համանաբար զփշաղների կյանքից: Դրանով զործը ստանում է և՛ ճանաչողական արժեք, և՛ դառնում կենդանի:

Այսքանով վերջանում է «Յաղագս քերականութեան» գլուխը, որի մեջ միավորված էին այլ մեկնիչների քերականության, վերծանության, ուղորակի, կետի և հաղնհրգության մասին եղած գլուխները: Զեյթունցու մոտեցումը կարելի է նպատակահարմար գտնել, որովհետև այդ բոլոր հարցադրումներն առավելապես տեսական-քերականական են, իսկ բուն լեզվի վիճակին վերաբերող մասը՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, խոսքի մասեր, առավել գործնական-նկարագրական:

Տ Ա Ռ, Վ Ա Ն Կ

Զեյթունցին տառի և վանկի մասին նույնպես խոսում է քաղվածաբար, առավելաբար հենվելով Սործորեցու քերականության վրա: Ցուցաբերելով կրոնական խորհրդապաշտություն, նա երկար հատված է քաղում Սործորեցուց, բացատրելու համար հայոց գրերի 36 թիվը:

Տառը գիր է կոչվում, որովհետև գրի կերպը քերելով «ձևանայ»: Իսկ դիժ է այն, ինչ գրչի ծայրը «նշանէ զգրելիքն»: Գիրը տառ է կոչվում նաև, որովհետև «պատճառ հն սորա ամենայն խօսի և պատմութեանց»:

Ձայնավորներն ութն են: Նրանցից վեցը առաջադիր են՝ բառասկզբում հանդիպող. ա, ե, է, ը, ի, ո, իսկ մեկը վերջադիր՝ ւ, որը տարբերվում է նախորդներից նրանով, որ միանալով նրանցից որևէ մեկի հետ, ստեղծում է «երկձայն»՝ երկբարբառ: Օ-ն քննվում է առանձին: Այդ դրությունը հատուկ է բայերի համար՝ աւրճնել, աւրիճել, իսկ ով գրությունը անունների՝ Մովսէս: «Թարգմանիչները» օ նշանագիրը չստեղծեցին «վասն հաճախութեան տառիցն», իսկ «յետինքն» օ են գրում հունարենից առնելով: Այն պետք է գրել, ինչպես կա լատիներենում՝ մեկ օ և ոչ թե, ինչպես սխալ են գրում ոմանք, հունարենի օրինակով՝ օ և օ՝ ա: Ձայնավորների երկար, սուղ և միջակ բաժանման համար Զեյթունցին նախորդների համեմատ նոր բացատրություն է տալիս, դրանք պատճառաբանելով արտաբերման տեղով և եղանակով: Երկարների (է, օ) արտաբերման ժամանակ «բանայ զբերանն և երկարանայ շունչն և ձայնն յորդ ելանէ»: Սուղերի (ե, ո, ւ) դեպքում «նեղեն ըզըրթունսն և սղացնեն դձայնն»: Միջակներն են՝ ա, ը, ի: «Յաղագս լծորդութեան» գլխում թվարկվում են հետևյալ երկբարբառները. աւ, էւ, իւ, ըւ, ու, այ, ոյ, ով:

Բաղաձայնները, ինչպես սկզբնաղբյուրում, թվում է 26, Թրակացու Թարգմանչի օրինակով դուրս թողնելով հ, յ, վ, որովհետև մերձ են ձայնավորներին՝ «հ՝ լինին, և յ՝ յինին և վ՝ ովին», մինչդեռ վարդան Արեևցին և Ծսալի Նեցին դրանք նույնպես դնում են բաղաձայնների նկատմամբ: «Յաղագս բանի» գլխում Զեյթունցին, ի տարբերություն

շարքում: Զեյթունցու երկում բաղաձայնները խմբավորվում են այս-
պես.

Թաւեր. փ,բ,խ,թ,լ,ց,չ,շ,ռ—Սրանք «թանձրացուցանեն զձայն և
զխօս, զի յասելն զլեզուն պիտի պիտի
կոխել ի բերան և ձայն անհնթեթ հանել»:

Լերկեր. պ,կ,տ,զ,ն,ծ,մ,ս,ր—Սրանք «կակուղ ձայն հանեն և ոչ
տանջէ կարի զբերանն»:

Միջակներ. բ,գ,դ,ձ,զ,ժ:

Տարորդովում են լծորդ բաղաձայնների հետեյալ խմբերը, որոնց
անդրադառնում է նաև «Յաղագս լծորդութեան» զլխում՝ բերելով օրի-
նակներ, որտեղ այդ լծորդները իրար նկատմամբ կատարում են իմաս-
տազատիչ դեր (չնայած Թրակացու մեկնիչների հետեւողութեամբ դրում
է նաև, որ «ունին զմի ազդումն կամ զօրութիւն», օրինակ՝ զս,ձ,ց—կոր-
զեմ, ասեմ, փորձեմ, հայցեմ «զօրութեամբ և սոքա մի իր նշանակեն,
որպէս թէ զմիտս կորզել ուրուք ասելով, փորձելով, հայցելով»):

բ,մ,պ,փ—Բարբօր (լեռ)—թափուր, բլիթ (հաց)—փլիթ (թույլ
մարդ):

գ,կ,բ,խ. դայ—կայ, արբայ—յարկայ (հարակա):

դ,տ,թ, մարդ—մարտ, յաղթել—աղտել:

ձ,ս,զ,ց. զարդ—սարդ—ցարդ, ձգեալ—սզալ:

զ,ն,լ. լալ—ղաղ (պատվական քար):

ձ,ծ,շ. —ճառ—ծառ, ծեր—ջերմ:

ժ,շ,չ. շար—շար, ժառանգ—շառանգ:

Որպես լծորդ առադրվում են նաև ու-ր, հ-ւ, իսկ քանի որ հ-ն լծորդ է
զ-ի, իսկ զ-ն խ-ի, ապա հնարավոր է նաև ւ-հ-զ-խ-ի լծորդութեան կա-
կահ-կազ-կախ: Առանձնացվում է նաև յ-ւ՝ լոյծ-լուծ: Այս բոլորը բեր-
վում են որպես «ստուգարանութեան իմաստից բանալի դրանց»: Լծորդ-
ների հակադրութեանը բացատրվում է նաև ձայնի որակով:

Բաղաձայններն ըստ «շարաձայնութեան» լինում են.

Անձայններ.—բ,գ,դ,պ,կ,տ,փ,ք,թ—երբ ուզում ևս արտաբերել բ,
«նա մենակ շրթունքդ յիրար խփին, և
ձայնն կու կորնչի, բայց թէ ելանէ
սակաւ ինչ ձայն, նա թնդին լինի
վատաձայն»:

Կիսաձայններ.—զ,ց,ն,ծ,շ,մ,ս,ր. «նուաղ քաջաձայնք են... ի մեր-
մունջս և ի շոփնչս»:

Կրկնակներ. — ւ, խ, շ, չ, ճ, ո, ց. աստուածազգեստ — աստուածազգեց,
տարր — տառ:

Նայեք. — ղ, մ, ն, ր — սրանք «երբեմն կակղանան և երբեմն խստանան»,
օրինակ՝ անգղ — անգեղ:

Վախճանական, այսինքն վերջահանգ հնչյունների ցանկն ու օրինակները նույնն են, ինչ Թրակացու Թարգմանչինը: Վերջադիր չեն լինում ա, ե, ը, ո, օ: Վերջին երկուսը բայերի հրամայականում կարող են հանդես գալ առանց յ-ի:

Զեյթունցին վաղառուքյունն ու վանկը տարբերում է: Փաղառությունը բաղաձայն-ձայնավոր-բաղաձայն հնչյունական միացությունն է (վանկ), ինչպես մեղ, քոց, կար, իսկ վանկը կա՛մ բաղաձայն-ձայնավոր, կա՛մ ձայնավոր-բաղաձայն միացությունը՝ սա, դա, և եզ, եզր: Միայն ձայնավորով արտահայտվող վանկը կոչվում է պիտակ:

«Երկար» վանկերը լինում են 8 տեսակ՝ 3-ը բնությամբ, 5-ը դրությամբ:

Բնությամբ. ա — երբ վանկն ունի երկար ձայնավոր՝ է, օ. Մովսէս, խօսող:

բ — երբ երկամանակ ձայնավորին հաջորդում է «երկար ձայնորդ». սի-րով, բա-րով, գը-թով:

գ — երբ ունի երկբարբառ. հա-ուկ:

Դրությամբ. ա — երկամանակ + երկու բաղաձայն. աղց, անց:

բ — երկու բաղաձայն + ձայնավոր. տրամ, տնանկ:

գ — երբ կա ռկ հնչյունականակցություն, որի բաղադրիչներից մեկը միանում է առաջին ձայնավորին, մյուսը՝

երկրորդ. երկին, եր-կիր:

դ — կրկնակ բաղաձայնի առկայությամբ. հե-զիկ, նե-խեալ:

ե — ձայնավոր + կրկնակ բաղաձայն. աջ, ազ:

Վանկերը սուղ (կարճ) են լինում երկու դեպքում.

ա — սուղ ձայնավոր + ոչ կրկնակ բաղաձայն. նե-տող:

բ — երկամանակ ձայնավոր + ոչ կրկնակ բաղաձայն.

աղ-քատ:

Թվում է, թե Զեյթունցին «Հասարակաց շաղաշարաց» արտահայտությունը ըմբռնում է որպես բառերի կապակցություն կամ գոնե որպես բառերի հաջորդականություն (շարադասություն) խոսքի մեջ. «Այժմ յաղագս հասարակաց շաղաշարաց խօսի, որ ասի զուգաշարաց, այսինքն, շաբեցելոցսն ի հասարակաց խօս զուցատուրութեան և բա-

նից պատմութեան»: Բայց հետագա շարադրության մեջ նախորդ-
ների հետևողութեամբ խոսում է «հասարակաց» վանկի մասին, այ-
սինքն այն մասին, թե ինչպես պետք է որոշել վանկի բնույթը խոսքի
մեջ, հաջորդող բառի միջավայրում: Ըստ այնմ, դեռևս Թրակացու թարգ-
մանչի հետևողութեամբ հասարակաց վանկերը բաժանվում են երեք
մասի և բերվում են նույն օրինակ-նախադասությունները: Զեյթունցու
գործն այստեղ այն է միայն, որ նա փորձում է բացատրել հունական
աղբյուրից (Հոմերոս) քաղված տողերի իմաստը, տալ «բանի պատմու-
թիւնը»:

Բ Ա Ռ, Բ Ա Ն, Մ Ա Ս Ո Ւ Ն Ք Բ Ա Ն Ի

Զեյթունցին շունի բառի ինքնուրույն սահմանում, այլ աշխատում
է բացատրել Մործորեցուց քաղված սահմանումը՝ «Բառ է մասն բանի
դուզնաքեայ ըստ բաղդասութեան բանի»: Բառերը լինում են միավանկ՝
հաց, ջուր, երկվանկ՝ Դաւիթ, Մարկոս, եռավանկ՝ նեղություն, կամ
ավելի: Միավանկ բառերի օրինակները բոլորը լիմաստ են, ուստի
հավանաբար նա բառեր չի համարել նախդիրները:

Այս հատվածին հաջորդում է միայն Մատենադարանի № 2330 և
Երուսաղեմի № 1163 ձեռագրերում գտնվող հատվածը գրադարձի մա-
սին, որ, ինչպես ասվեց, բառացիորեն քաղված է Գևորգ Սկևռացու աշ-
խատությունից: Այս հատվածը բանասիրությանը ծանոթ է Լ. Խաչերյանի
«Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնա-
դարյան Հայաստանում» աշխատությունից:

Զեյթունցին «բանի» ուսումնասիրությունը համարում է քերակա-
նական գործի կատարելություն, այդ իսկ պատճառով շատ ընդարձակ է
ներկայացրել խոսքի մասերի ուսմունքը: «Բանը», ըստ Զեյթունցու,
«բառից շարադրութիւն» է. տառերի գումարը տալիս է վանկ, վանկե-
րինը՝ բառ, իսկ երբ բառերը կապենք իրար հետ, կունենանք «բան»,
որը ամբողջական է հայտնում խոսողի միտքը. «Ինքն յինքեան յայտ-
նելով զխորհուրդ և զգորութիւն բանին կատարեալ և հաւանական առնէ
լսողացն»: Ուրեմն, նախապայման են միտքը և հասկանալիությունը:

Խոսքի մասերի բաժանումն ավանդականն է. անուն, բայ, ընդու-
նելություն, հոգ, դեռանուն, նախադրություն (նախդիր), մակբայ և շաղ-
կապ: Խոսքի մասերի սահմանումները «Հարցերի» մեջ նույնն են Թրա-
կացու սահմանումների հետ: Բայց, ի տարբերություն նախորդ քերա-
կանների և իր սկզբնաղբյուրի, Զեյթունցին նախ կարճ ի կարճ սահ-

մանում է խոսքի բոլոր մասերը և հետո միայն անցնում դրանց առանձին քննությանը: Հենց այս սահմանումների մեջ էլ Զեյթունցին հանդես է բերում նշանակալից ինքնուրույնություն. խոսքի մասերը սահմանվում են ոչ միայն իրենց իմաստաբանական հատկանիշներով, այլ նկատի են առնվում նրանց գործառութիւնն ու քերականական հատկանիշները, այլ կերպ՝ Զեյթունցին խոսքի մասերի բնութագրման մեջ ընդգրկում է նաև նրանց շարահյուսական դերը:

Զեյթունցին անուն ասելով ենթադրում է միայն գոյական անուն. «Անուն է, որ յայտնէ զգոյացութեան սահման ի կարճոյ... մարդ, եղ, ձի և ամենայն գոյք»: Անունը կատարում է նաև առարկաները իրարից տարրորոշող դեր. «որպէս ասել մարդ, յայտնեցաւ սահմանն, զի է գոյացութիւն մարմնական, ներշնչական, զգայական, կենդանի, բանական... անուամբ զատին և որոշին ի միմեանց»: Անունը նախադասելի է բային, որովհետև առաջինը «գոյացութիւն» է արտահայտում, իսկ երկրորդը՝ գոյացութեան «ներգործութիւն»:

Բայը սահմանվում է որպես «ներգործութիւն և զկիրսն և զժամանակն» հայտնող բառ: Ժամանակի քերականական կարգը հիմնական տարբերակող հատկանիշն է բայի և անվան միջև. «Անուն զգոյացութիւն յայտնէ առանց ամանակի, և բայն զամանակսն և զամենայն պատահմունս նորա»:

Ընդունելությունն «ունի խառնումն յանուանէ և ի բայէ»: Նրա շարահյուսական հիմնական դերն ածականաբար գործածվելն է. եթե ընդունելությունը ցույց է տալիս «բարի և վայելուչ կիր», ուրեմն դրական հատկություն է արտահայտում, ինչպես «գովեալ, երանեալ, օրհնեալ» և այլն, իսկ եթե «վատ է կիրքն և գործն», բացասական հատկություն է արտահայտում՝ «պարսաւեալ, եպերեալ, նզովեալ» և այլն: Բերված բոլոր օրինակներն անցյալ դերբայով են և հիմնականում «կիր»՝ կրավորական իմաստով: Ընդգծվում է նաև գոյականական կիրառությունը (յաւնեղծութիւն, ըստ օրինակի). այս դեպքում ընդունելությունը նույնանում է բայանվան հետ:

Հոդ նշանակում է կցում «որ յօդեալ միանայ գիր յանգի, ալսինքն ի վերջ անուան կամ բայի»: Ըստ այնմ էլ ցույց է տալիս հեռավորություն, թիվ, դեմք: Այսպես.

առաջին դեմք. մարդ-ս -ս-ն և՛ դեմք է ցույց տալիս, և՛ մոտավորություն,
երկրորդ դեմք. մարդ-դ -դ-ն և՛ դեմք է ցույց տալիս, և՛ զրուցակից,

երրորդ դեմք. մարդ-ն -ն-ն և՛ դեմք է ցույց տալիս, և՛ հեռավորութ-
յուն:

Հոգ են համարվում նաև անվանական (հայր—հարք) և բայական (գնալ—գնան) հոգնակերտ վերջավորությունները: «Հոգի» այս դերն էլ համարվում է նրա «հոլովական» լինելու հատկանիշը:

Դերանունը կարող է լինել «նախագաղափար՝ ես, ածանցական՝ իմ և «ածանցից ածանց»՝ իմոյ:

Նախադրություն են նախաժանցները, որոնք «ըստ ինքեան ոչ ինչ նշանակեն, բայց դնին նախերգանք այլոց մասանց», օրինակ արտածայ-
նեալ, շաբաթայնեալ, մեքգործեալ, որտեղ ձայնեալ և գործեալ ընդու-
նելություն են և իմաստակիր, իսկ արտ, շաբ և մեք «հեզ միայն. որ ոչ ինչ խորհուրդ և ոչ յայտնէ իր, ինքն միայն ըստ ինքեան»:

Մակբայը սահմանվում է «բայ ի վերայ բայի»: Իսկ այդ բայի վրա դրվող բայը նույնպես «նշանակ ժամանակի» է, որովհետև բայը անու-
նից տարբերվում էր ժամանակային հատկանիշով:

Իսկ շաղկապը զուգակապ է, որ «իբրև զսօսինձ ամրացուցանէ և յեռէ, այսինքն կցէ, շաղէ և կապէ զմիտք ընդ միտս, զբան ընդ բանս, զձայն ընդ ձայնս»: Վերջին դերով հավանաբար նկատի ունի հոգակապը:

ԱՆՈՒՆ

Անունը խոսքի մյուս մասերից տարրորոշվում է նրանով, որ հոլո-
վական կամ «թավալական» է: Անունը դերանունից տարբերվում է նրա-
նով, որ գոյացություն է նշանակում «որակութեամբ», իսկ դերանունը «որակութեամբ» չի նշում, այսինքն հռչ ասելով հասկանում ենք հոգ
գոյացությունն իր բոլոր հատկանիշներով՝ սևությամբ, ցրտությամբ,
շորություն և այլն. «Յորժամ ասես հոգ, յայտնեցաւ գոյացութիւն և
որակն ի միասին»: Այս բացատրության համար Զինթունցին օգտագոր-
ծում է Արիստոտելի ուսմունքը որակի մասին և բավականին մատչելի
պարզաբանում փիլիսոփայական այդ կարգը: Անունը դերանվանը հա-
կադրվում է նաև նրանով, որ անունը գոյացություն է նշանակում կա՛մ
որպես «մարմին»՝ քար, կա՛մ որպես «իր» խրատ, «ի զգայարանաց
իմացմունսն... ձայն, և ի մտաց իմացմունսն՝ հրեշտակք», մինչդեռ
դերանունը ընդհանուր է իր բովանդակությամբ, որոշակի չի դառնում:
Ի հակադրություն բայի, անունը ժամանակ ցույց չի տալիս:

Անունները լինում են կամ հասարակ՝ «ընդհանուր իրս նշանակէ,
որպէս մարդ, որ ընդ բոլորէ է միոյ, այսինքն զազոն բովանդակ յայտնէ»

կամ հատուկ՝ «որ է առանձինն իսկիւ, որպէս Պօղոս, յատկացեալ ի տեսակէն անհատն, այսինքն զատեալ ի յազգէն մի մարդ»:

Գոյականն ունի երեք սեռ. արական, իգական, շեղոք: Զեյթունցին նշում է, որ հունարենում և լատիներենում սեռը արտահայտվում է հոդերի միջոցով: Հայերենում հոգային միջոցը փոխվում է որոշ բառերի օգտագործումով՝ բառից առաջ, օրինակ՝ կոշականի դեպքում ունենք այ, ծօ՝ արականի համար, քայ՝ իգականի և տղայ՝ շեղոքի: Կան նաև սեռանիշ վերջավորութիւններ, որոնք կցվում են գոյականին: Վերջադիր մասնիկներից նշվում են.

արական	-ով	խոսրով
իգական	-ուհի	խոսրովուհի
շեղոք	-դուխտ	խոսրովիդուխտ:

Անհասկանալի է հետևյալ նշումը. «Դարձեալ ընդ քեզ եմ՝ արական, այ դու՝ իգական, աղէ լսէ՝ շէղոք»: Նշվեց, որ այ-ը կոշականի դեպքում համարում էր արականի ցուցիչ, իսկ այստեղ՝ իգականի:

Բայց Զեյթունցին գիտի, որ «հայոցս ճապաղ և ցրիւ է և ոչ փակեալ մի վանգով»: Ուստի հայերենի համար տիպական է համարում առանձին բառերի օգտագործումը, ինչպես հայր՝ արական, մայր՝ իգական, զաւակ՝ շեղոք, կամ ուստր-դուստր-տղայ, կենդանիներից՝ խոյ-մաքի-գառ: Բայց այս շարքերի թվարկումը դառնում է անհնթեթ, հատկապես բույսերի և այլևայլ կենդանիների համար: Կա նաև սեռ արտահայտելու հարադիր միջոց. գոյականը հարադրվում է լեզվում լավ գիտակցված սեռ նշող բառերին, օրինակ արջ՝ որձ-արջ մատակ-արջ քօթոթ: Զեյթունցին փորձում է բառիմաստային տիպը տարածել նաև ածականների վրա, նկատի ունենալով նրանց փոխանունաբար գործածութիւնը, օրինակ արական՝ մոլի, իգամոլ, իգական՝ վաւաշ, կաթոտ: Երրորդ եղբը չի բերվում:

Անունները լինում են նախագաղափար՝ մարդ, երկիր, և ածանցական, «որ յէէն ունի զգոյութիւն»՝ մարդկային, երկրային: Ածանցականները բաժանվում են.

ա. Հայրանունական—ինչպես որդին՝ հորից: Ածանցներն են.

արական՝ -էն, -էլ, -իթ, -գէն, -էճ, -ակ

իգական՝ -ենի, -ուշ, -ուհի, -ոց:

բ. Ստացական — «որ ստացուածին անունն ի ներքոյ անկեալ է ստացողին»: Ածանցներն են -եան, -ական, -ունի:

- գ. Բաղդատական—բաղդատելիս և համեմատելիս «ամենայն իրօք առաւելուն իմանի»։ ածանցներ -գոյն, -գին։
- դ. Գերադրական—ցույց է տալիս առավելագոյնը առանց բաղդատութեան. ածանցներն են -եղն, -ելի, -ալի։
- ե. Փաղաքական—իրերի «նուազութիւն» է ցույց տալիս, առանց համեմատութեան. ածանցներն են -իկ, -ակ, -եկ, -ուկ։
- զ. Յարանուն—երկարմատ բաղադրութեամբ՝ տիրաճան։
- է. Բայածական—բայերից սերող ածական՝ սիրել-սիրուն։
Նկատելի է.

1. Ըստ բերված օրինակների յոթ տեսակներից միայն երեքն են գոյական անուն նշող՝ հայրանունական, փաղաքական և հարանուն։

2. Հարանունի դեպքում ունենք բարդութիւն և ոչ ածանցում։

3. Մյուս տեսակները հիմնականում գոյականից կազմված ածականներ են։

4. Ածականակերտ ածանցներից նշված են (մի մասը բերվում է ըստ օրինակների). -եան (Դաւթեան երիւար), -ունի (արքունի), -ական (պօղոսական), -գոյն (արագագոյն), -գին (ուժգին), -եղ (ուժեղ), -ելի (սքանչելի), -ալի (զարմանալի), -ուն (սիրուն)։

5. Զեյթունցին հակասութեան մեջ է, քանի որ նախապես անունը սահմանեց որպէս գոյական, իսկ այստեղ անվան մեջ ընդգրկում է և ածականը։ Կարծում ենք պատճառն այն ըմբռնումն է, ինչպէս նշվեց, ըստ որի անունը ցույց է տալիս գոյացութիւն իր հատկանիշներով, ուրեմն և հատկանիշը գոյի մասն է։

6. Հարանունին կրավորական իմաստ է վերագրում բխեցնելով «ի կրից», իսկ բայածականին՝ ներգործութիւն, այսինքն ուրախութիւնից ունենք ուրախ (գոյականից՝ ածական, որպէս պատճառ և հետեանք) և սիրելից ունենք սիրուն (բայից՝ ածական)։

Անվան «ձևերը», ինչպէս Թրակացու թարգմանչի և հետագա մեկնիչների երկերում, երեքն են։ Նա նույնպէս պարզ, բարդ և հարաբարդ (բարդ ածանցավոր) բառերի օրինակները ստեղծում է ածական-գոյական հարադրութեամբ, սակայն ընդգծելով, որ այդ հարադրութեան համար էական են բուն գոյականները, իսկ ածականները «պատահմունք» են. «Բարի լեռն, կամ կարճ կամ սեաւ կամ խարտեաշ կամ դեղնած» և այլն։ Բայց Զեյթունցին գիտակցում է բառերի բարդութեան և ածանցման բուն ձևերը ևս, խմբավորելով ըստ կատարյալ և անկատար բաղադրիչի, այսինքն, երկբաղադրիչ բառի ո՞ր մասն է իմաստակիր՝

առանձին կիրառելի կամ ամբողջական բառ: Ըստ այնմ ունենում ենք (կատարյալ+, անկատար—)

ա. բաղադրիչ բ. բաղադրիչ

+	+	Նորայր, Քաջ Լևոն
+	—	փոքրիկ, Պօղոսյան
—	+	սիրամարդ, տիրաշատ
—	—	ծռապատում, Մանայձ:

Անվան թվի հարցում Զեյթունցին ավելի հետևողական է, քան նախորդ բերականները: Թեև կրկնում է սկզբնաղբյուրի երեք թիվը՝ եզական, երկական, յոգնական, բայց գտնում է, որ բացի հունարենից և արաբերենից մյուս բոլոր լեզուները չունեն երկակի: Նրանք էլ «ոչ առաջագոյն ունեին», որովհետև ճշմարիտը «կամ մի է, կամ բազում», ինչպես հայերս ունենք: Այսպիսով, երկակի թիվը դուրս է մղվում, շնայած աղբյուրի ազդեցության տակ դեռևս պահվում է ձևականորեն:

Առանձնացվում են հավաքական իմաստ արտահայտող բառերը՝ «գծացք», ինչպես տոհմ, պար: Տարբերում է նաև հոգնակերտ ֆ մասնիկով եզակիի իմաստ արտահայտող բառերը՝ վարտիք, խոյարոնք: Կան նաև երկու առարկայի իմաստ արտահայտող բառեր՝ ձեռք, աչք, սրունք, որոնք հոգնակիի տակ պետք է դնել «զի ոչ ունիմք երկուորական նշանք»:

Զեյթունցու բերած ամենակարևոր նորությունը, իր նախորդների համեմատ, հոլովների ուսմունքի մեջ է: Թեև հոլովների անվանումները ստուգաբանելիս նա դեռևս չի ձեռքբաղատվում ավանդական սահմանումներից, օրինակ, «սեռական՝ ստացական և հայրենի», բայց ավելի խորն է թափանցում հոլովների էության մեջ և վերհանում նրանց շարահյուսական դերը՝ կիրառական նշանակությունը:

Ուղղականը բառի ուղիղ ձևն է «պարզ, մենակ, անշարադիր», օրինակ՝ աստուած, մարդ: Գոյականը ուղղական ձևով ստույգ է հայտնում «զամենայն էական» և այլ հոլովներ «ի սմանէ առաջ խաղան»:

Սեռականը ցույց է տալիս պատկանելություն («ստացուածք») և ծագում («նախնիք»), օրինակ՝ «ո՞յր է գաւառս ...ասել թէ Դաւթի», և «Դաւթի ո՞ւմ իցէ որդի... Գրիգորի»: Զեյթունցին տարբերում է նաև սեռականի ածականական իմաստը՝ «Պօղոսի գիրք, աշտինքն, պօղոսական գիրք»:

Տրականը կիրառվում է որպես՝

1. մատուցման անուղղակի խնդիր՝ «առ ո՞ր տուեր... ի մարդ»,

2. հանգման տեղի պարագա՝ «յո՞ւր գնացեր... ի քաղաքն, ի տուն»,
3. պատուիրական, այսինքն, թե ո՞ւմ է հանձնարարվել. «առ յո՞ւ
պատուիրեցեր... ի Դաւիթն»:

Նկատելի է.

1. Զեյթունցին ի կամ առ նախդիրով հայցականը համարում է տրական:

2. Քանի որ հոլովները թվելիս տրականի համար դնում է նաև
—ում վերջավորությամբ ձևը՝ «տրական՝ ի աստուած, կամ աստուածում», ապա Զեյթունցին տրականի համար ընդունում է երկու ձև:

Հայցականը կիրառվում է որպես ուղիղ խնդիր՝ «զո՞ւ խնդրես...
զԴաւիթ կամ զայլ ոք, որ ի դէպ իցէ»: Զեյթունցին հակադրվում է փաստական՝ պատճառ ցույց տվող իմաստի վերադրմանը հայցականին և առանձնացնում է նոր՝ բուն պատճառական (բացառական) հոլովը, ւսպուիչ կերպով նկարագրելով այն. «Այլ կամիմք յօրինել այսպէս. թէ հարցանէ ոք և ասէ յումմէ՞ ուսար... պատասխանէ թէ յաստուծոյ, կամ ի մարդոյ կամ ի հօրէ կամ ի քէն, և կամ թէ ասել է՞ր արարեր... պատասխանէ, ի քէն ուսայ... դնէ պատճառս զայլ ոք»: Պատճառականը ցույց է տալիս նաև ելման կետ՝ տեղի պարագա». «...յուստից կուգաս... ի Կոստանդինուպոլսէ... ի Սսոյ կամ յարեւելից կամ յարեւմտից և յայլ տեղաց»:

Զեյթունցին նաև կալմությամբ տարրորոշում է բացառականը մյուս հոլովներից. եթե մյուս հոլովները հոլովակազմիչ ստանում են կամ առաջից (նախդիր) կամ վերջից (վերջավորություն), ապա բացառականը ստանում է և՛ առաջից, և՛ վերջից. «Տես, զի զամենայն հոլովք կամ յառաջն, կամ ի վերջն առնու զհոլովս, և բառս այս ի սկիզբն յանդի առնու զյօդս հոլովման, որդոն՝ յաստուծոյ, ի մարդոյ»:

Առաջականը (գործիական) ավանդական ձևով ստուգաբանվում է, որպես մի հոլով, որ ցույց է տալիս, թե ում կողմից է առաքվել: Նախորդների նկատմամբ նորություն է միջոցի անուղղակի խնդիր իմաստի բացահայտումը՝ «Թէ որով առնես զայս... մարդով»:

Կռչականը (հռչական, առուվասական) ցույց է տալիս, թե ում է ուղղված խոսքը: Կազմվում է դոլականին նախադրելով ով, է, ո հոդերը:
Անվան իմաստային խմբերը քննելիս («ընդ անուամբ ենթանկեալ»)
Զեյթունցին կրկին հակասության մեջ է անվան իր առաջին սահմանման հետ, որովհետև այստեղ քննվում են և՛ անվան տարբեր իմաստային խմբեր, և՛ ածականներ, և՛ թվականներ: Դերանուններից թվում է միայն հարցական (ո՞ւ, ո՞ր, որքա՞ն), անորոշ (որ ոք, այսպիսի ոք),

ցուցական (այսպիսի, այսչափ) և մակբաշխ (ամենեցուն, իւրաքանչիւր) դերանունները, բայց նշում է, որ դրանք պետք է քննել դերանուններին վերաբերող գլխում, չնայած հետո չի անդրադառնում:

Առանձնացվում են գոյականի հետևյալ խմբերը.

ա. Իսկ—(հատուկ)—«առանձին մին անհատի անուն է»—Դավիթ:

բ. Առասական (հասարակ)—«զհասարակ էութիւն ցուցանէ»—մարդ, փառ:

գ. Առինշունակ (հականիշ)— «որ զմիմհանս ի մէջ ածեն կամ բառնան

հակադարձաբար»—տէր, ծառայ:

դ. Իբրառինշունակ (հականիշ)—«ոչ բառնան զմիմհանս»—տիւ, գիշեր
գարուն, սմառ

ե. Հոմանուն (նույնանուն)—ալի ծովու և ալի մարդոյ:

զ. Փաղանուն (հոմանիշ)—«մի իրս, որ ղբաղումս անուանս ունի»—
սաւառ, յանգ, վերջ:

է. Երկանուն—երկու անուն մի մարդու վրա—Պետրոս Կեփաս:

ը. Մականուն—«անուն ի վիրայ անուան»—Յովհաննէս Ձայն Գոշման:

թ. Աղգական—հայ, վրացի:

ժ. Բազմաձական (հավաքական)—երամ, տարմ:

ժա. Պարունակ— որ պարունակում է իր մեջ—ծաղկոց, Հայաստան:

ժբ. Քերթեալ—«ըստ պաճուճաբանութեան, քերթողաց»—բոմբին,
գանչին:

ժգ. Սեռական (տրոհելի)—«բազում տեսակս բաժանի»—կենդանի—ծի,
եզ...

ժդ. Յատկական (անտրոհելի) զանհատն ի տեսակէ»—ծի, արջառ:

ժե. Բացարձակ—«անմարմինք և անըմբռնելիք»—Աստուած, Բան:

Ածականները բաժանվում են.

ա. Մակադրական—«որ ի վերայ իսկիցն կամ առասականացն եղեալ է,

ըստ հոգւոյ—ողջախոն

ըստ մարմնոյ—զօրաւոր

ըստ արտաքինոց—աղփատ:

բ. Առինշունակ—երկայն-կարճ:

գ. Իբրառինշունակ—չոր-դալար:

դ. Բերանուն—ըստ իրերի և դրության բերման—«թէ յաղթէ՝ յաղթող, թէ
յաղթի՝ յաղթեալ
և դառն սգոյն՝ դառնասուգն»:

Թվականները բաժանվում են.

ա. Դասական—որով դասավորութիւնն է լինում ըստ աստիճանի—առաջին, երկրորդ, բայց և միջին, ներքին, վերին, աստի...:
բ. Թուական—մի, երկու և այլն:

Թուականն ու դասականը հակադիր են իրար դասավորութեան կայունութեամբ. դասականը խախտւում է, եթե նախկին դասավորութիւնը խախտվի, իսկ քուականի համար նշանակութիւն չունի այդ:

Նկատելի է. 1) «առինշունակ» և «իրարառինշունակ» խմբերն ընդգրկում են և՛ գոյական, և՛ ծածկան: 2) Զեյթունցին ֆեթեալներէ մեջ առանձնացնում է հատկապես բնածայնական բառերը՝ «ի ձայնի նմանացուցանել զանուն»: 3) Դասական թվականը նա միայն որպէս թվական չի ըմբռնում, այլ ընդհանրապես դաս ցույց տվող բառերը համարում է դասական. դասի գաղափարին ձուլվում է նաև տեղի գաղափարը:

Անվան այս խմբավորումները կան դեռևս Թրակացու թարգմանութեան մեջ, և հետագայ մեկնիչների կողմից դրանք ավելի են հստակացվել: Զեյթունցին պարզապէս որոշ տեսակների բացատրութիւնը տվել է կարճ, բայց և սպառիչ բնութագրումով:

Ր Ա Յ

Եթե անունը գոյացութիւն է ցույց տալիս առանց ժամանակի, ապա բայը ցույց է տալիս անվան ներգործութիւնը ժամանակի մեջ, թեև բայը ինքն էլ գործողութեան անուն է, օրինակ՝ շինելու անունը շինել է: Բայը «անհոլով է և ընդունակ ժամանակաց», այսինքն, կարող է ունենալ անցյալ, ներկա և ապառնի: Այն կարող է ունենալ նաև երեք դեմք և երեք թիւ: Բայը իր մեջ համատեղում է երկու հատկանիշ՝ կրավորականութիւն (զրիմ) և ներգործութիւն (գրիմ): Գոյականը նույնպէս բաժանւում է այդ երկու տեսակի. «կիր» արտահայտող, օրինակ՝ դատել, աւարածք և ներգործութիւն արտահայտող՝ ընտրող, աւարիչ:

Զեյթունցին հետեւելով ավանդական քերականութեանը, թվում է հինգ եղանակ՝ «խոնարհութիւնք»՝ սահմանական, անհրկույթ, հրամայական, ըղծական և ստորադասական:

Սահմանականը որոշակիորեն սահմանում է ժամանակ և դեմք, իսկ անհրկույթը ո՛չ ժամանակ է հայտնում և ո՛չ դեմք: Սրանով նրանք հակադրւում են. քանի որ բայը ժամանակ պետք է արտահայտի և դեմք (բայի ըմբռնումը նույնանում է ստորոգյալի ըմբռնման հետ), ուստի անհրկույթը կարծեք դադարում է եղանակ համարվելուց, քանի որ նա գործողութեան անուն է:

Հրամայականը ենթադրում է հրաման «յայլ ումեքէ»։ Ըղձականը «որպէս մեծաւ ցանկութեամբ առնիցէ ղբնաւան»։ Ստորագրասականը Զեյթունցու ըմբռնմամբ սլամանականի իմաստ է ստանում. «որպէս թէ յետ այլոց և ես գործեմ»։ Նա զգուշացնում է շշփոթել սահմանականն ու ստորագրասականը. նրանք իրարից տարբերվում են, որովհետև «սահմանականն ի ներկային վերաբերի, իբր թէ կու գրեմ, կու գրես, կու գրէ, կու կոփեմ, կու գործեմ, իսկ ստորագրասականն յապաւունին ձգի... գրեմ, կոփեմ»։ Ուրեմն, սահմանականը ստորագրասականից տարբերվում է կու մասնիկով։ Գրաբարի ներկան դարձել է ստորագրասականի ձև։ Իսկ ըղձականը արտահայտում է գրաբարի ստորագրասականի ձև-վերով՝ գրիցեմ աղիւք։ Ինչպես նկատվեց, Զեյթունցին կարողանում է ձեռքադատվել սկզբնաղբյուրի աղղեցությունից և եղանակները նկարագրում է իր ժամանակի լեզվի վիճակով և ոչ թե դասական գրաբարի։ Բացառություն է ըղձականի ձևը, որ ճիշտ չէ։

Զեյթունցին ընդունում է երեք հիմնական ժամանակ, որովհետև բոլոր երևույթները կամ կատարվել, ավարտվել են, կամ լինելուիցն մեջ են և կամ պիտի լինեն. «ամենայն իրքն եղեալ են, կամ լինելումն են, կամ լինելոց են»։ Հետևաբար կունենանք անցյալ, ներկա, ապառնի։ Զեյթունցին թվում է անցյալի շորս տարբերակ, ըստ սկզբնաղբյուրի, բայց անմիջապես բացառում է անոռոշը որպես ժամանակային ձև, քանի որ այն «ոչ յայտնէ ժամանակն կամ թիւը կամ դէմն, այլ աներևոյթ թողո՞ւ», մյուս երեք տարբերակներն են.

Յարաձգական—գործողությունը սկսվել է, բայց չի ավարտվել. «Որ սկսեալ է և դեռևս ոչ է կատարեալ»։ Նույնանում է անցյալ անկատարին. կոփէի, կու կոփէի։

Յարակայ—գործողությունը նոր է ավարտվել. «Որ ի մօտոյ կատարեալ է»։ Նույնանում է անցյալ կատարյալի հետ. կոփեցի։

Կերակաւոր—«Առաւելակատար... որ վաղուց և նախաժամանակաւ կատարեալ է»։ Նույնանում է վաղակատարին. կոփեալ էի։

Ժամանակների թվարկման մեջ Զեյթունցին ինքը շարադրելով նյութը, «գերակատարի» համար բերում է գաւնել եմ, կեբել եմ, ըմպել եմ ձևերը, որոնք ավելի հարազատ պետք է լինեին իր ժամանակի լեզվին։ Սկզբնաղբյուրի աղղեցությամբ է, որ հետագա շարադրանքում օրինակ է բերում գրաբարի անցյալ դերբայի ձևերով՝ գրեալ էի, հուկառակ դեպքում պետք է ղնիր ժամանակակից վաղակատարի ձևերը, ինչպես սահմանականի ներկայի համար ընդունվում են կու-ով ձևերը միայն (ձայնավորից առաջ՝ կ- կաշեմ, կանեմ)։ Առաւելու համար

երեք ձևեր են բերվում առանց անվանելու. կոփեմ-կտրեմ, իր նշած ստորադասականի ձևերը (կոփեցից, կտրեցից, կերայց, արբից), զրաբարի հրկրորդ ապառնու ձևերը, բուն ապառնի արտահայտող (կոփելոց եմ, կտրելոց եմ): Իր նշած ըղձականի ձևերը՝ զրիցեմ, չի մտցնում ապառնու մեջ:

Բայի սեռերը («տրամադրութիւնք») երեքն են. ներգործական՝ գանեմ, կտրեմ, «դոր ես այլոց դործեմ որպէս իշխող».

կիր՝ զանիմ, կտրիմ.

միջին՝ մեռանիմ: Չեղորք, ըստ բերված օրինակների, հստակ չի դիտակցվում:

Բայը նույնպես ունի նախադադափար ձև՝ ոռոգեմ և ածանցական ձև՝ ոռոգանեմ: Օգտագործելով հանդերձ ոռոգեցուցանող ձևը, չի նշում այն որպես առանձին ձև, այլ ածանցականի հիմնական տիպը լինում է -ան ածանցով ձևը, որին պատճառական իմաստ է վերագրում. «նախադադափարն ոռոգեմ, այսինքն ես ոռոգեմ և ածանցական որպէս ոռոգանեմ, այսինքն միջնորդով ոռոգանեմ. ես ոռոգեցուցանող և ջուրն ոռոգող և տունկն ոռոգեալ»: Ածանցականի երկրորդ տիպ է համարվում բայարմատը (նախադադափար) -ել վերջավորութեամբ՝ շէն—շիւնել:

Թիվը երեքն է. սկզբնաղբյուրից բերում է երկակի ձևը՝ գործոմ, առնոմ, բայց ընդգծվում է. «այս ոչ գոյ մեղ և այլում սղղաց, բայց միայն յունացն գտանի»:

Դեմքը նույնպես երեքն է. «նախ՝ յորմէ (խոսող), երկրորդ՝ առյո (խոսակից), երրորդ՝ սակս որոյ (որի մասին խոսվում է), որդոն... կոփեմ ես, կոփես դու, կոփէ նա»:

«Յաղագս լծորդութեան» գլխում Զեյթունցին խոնարհման կազմութեան մասին է խոսում և կատարում ձևաբանական հետաքրքիր դիտողություններ, առաջ անցնելով իր նախորդներից: Ընդգծում է լծարդների կարևորությունը «ի կարգաւոր խոնարհութիւն բայից», այսինքն, նկատի պետք է ունենալ խոնարհիչ ձայնավորները, հատկապես բայը պետք է խոնարհել ըստ դիմային հաջորդականություն և ոչ թե խառնիխառն: Բայերի խոնարհված ձևերի իմաստը հստակացնելու համար դրանք օգտագործվում են նախադասությունների մեջ:

Առանձնացվում են դեմքերի վերջավորությունները. ստորադասականի (նաև ներկայի) համար՝

	եղակի	հոգնակի
ա. դեմք	-մ	-մք

բ. դեմք	-ս	-էք
գ. դեմք	-է	-են,

անցյալի համար միայն եզակի -ի, -եր, -աւ: Նկատելի է, որ եզակի երկրորդ դեմքի համար բերում է միջին հայերենին հարազատ ձև՝ առաւ, փոխանակ գրաբարի առ-էառ ձևերի: Անկասկած, ճշգրիտ կոչներ նաև բացակա (անցյալի հոգնակի) վերջավորությունները, որովհետև երևում է հեղինակի վերլուծող միտքը: Այսպես օրինակ, շատ սուր դիտողականությամբ Զեյթունցին նշում է, որ գործեցի, կու գործեմ և գործեցից ձևերի մեջ -ի, -մ և -ից վերջավորությունները համապատասխանաբար նշում են անցյալ, ներկա և ապառնի ժամանակներ: Սկզբունքը ճիշտ է գտնված, բայց, դժբախտաբար, կաշկանդվածությունը սկզբնաղբյուրով խանգարում է, և նկարագրությունը չի ընդգրկում ողջ բաական համակարգը:

Ընդունելությունը ո՛չ կատարյալ անուն է և ո՛չ կատարյալ բայ: Բայից տարբերվում է նրանով, որ դեմք և ժամանակ չի արտահայտում: Այլ տեղ, սակայն, Զեյթունցին նշում է, որ անորոշը (-ել) «լի-նելոց» (ապառնի), իսկ անցյալ դերբայը (-եալ) «եղեալ» իր են ցույց տալիս: Ընդունելությունը որպես դերբայ սահմանափակվում է անցյալ դերբայով: Անորոշը համարվում է բայ՝ անեբեւոյք եղանակ, իսկ ենթակայականը՝ ներգործություն ցույց տվող անուն՝ ընտրող: Ընդունելություն է նաև -ութիւն ածանցով անունը՝ որդեգութիւն: Ընդունելությունը հոլովվում է գոյականի բոլոր հոլովներով. աբարեալ, աբարեւոյ, աբարեւում, աբարեւով, զարարեալն, ով աբարեալ (չի նշում բացառականի ձևը): Հոլովական լինելու հատկանիշով նույնպես հակադրվում է բային:

Հ Ո Պ

Հոդի ըմբռնումը Զեյթունցու գործում ավանդական է. «Յօդին կցել լսի, որ յարի, յօդի, կցի ի սկիզբն կամ ի վերջն բառի»: Հոդը հոլովում է անունը, խոնարհում բայը և դրվում խոսքի այլ մասերի վրա, ցույց է տալիս դեմք, թիվ, նույնիսկ ժամանակ, մի խոսքով հոդ են համարվում բոլոր նախդիրներն ու վերջավորությունները: Հոդ են նաև այս, այդ, այն ցուցական դերանունները իրենց բոլոր հոլովածեանով՝ այս, այսր, այսմ, այսու, դայսով: Իսկ սա, դա, նա-ն դերանուններ են: Զեյթունցին այստեղ սկզբնաղբյուրի ազդեցության տակ

է: Հոլովման «նախադասական» հոդերն են ա(այս), ո, ի, ըզ, օ, է, ու, որոնց մի մասը կոչականի ցուցիչներ են:

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

Դերանվան մասին խոսելիս Զեյթունցին կրկնում է Ծործորեցու սահմանումը, որը նույնական է Թրակացու մեկնիչների բացատրության հետ. «Դերանուն է մասն բանի հոլովական, եղեալ ի տեղի յատուկ անուան, որ ստոյգ դէմն նշանակէ»: Հետաքրքիր է «դերանունդ առ հասարակ երթայ» դիտողությունը, որով Զեյթունցին ակնարկում է, որ դերանունը միայն անվան շի փոխարինում, այլ կերպ՝ հեղինակը ընդգծում է ընդհանուր վերացարկման գաղափարը: Ժխտում է սեռը դերանվան մեջ, ինչպես նաև հայերենին խորթ է համարում երկակի թիվը, ինչպես բայի և անվան դեպքում: Մեռական-ստացական դերանունները համարվում են «ածանցական»: Անվան և դերանվան հոլովման տարբերությունը մատնանշվում է նրանով, որ անունը հոլովվում է մեկ դեմքով (նկատի ունի ծառ՝ երրորդ դեմք), իսկ դերանունը՝ երեք: Այսպիսով դեմքը դառնում է անվան և դերանվան տարբերակիչ հատկանիշ:

Անձնական դերանունները հոլովվում են.

ուղղ.	ես	դու	նա
սեռ.	իմոյ	քոյոյ	նորոյ
տրկ.	ինձ	քեզ	նմա
հայց.	դիս	դքեզ	դնա
գործ.	ինև	քև	նովաւ

Իսկ ածանցականները (ստացական) հետևյալ ձևով.

ուղղ.	իմ	քո	նորա
սեռ.	իմոյն	քոյոյն	նորայոյն
տրկ.	իմում	քոյում	նորայում
առաք.	իմովն	քոյովն	նորայովն
հայց.	դիմ	դքո	զնորա
հոշակ.	իմ	դու	

Նկատելի է.

1. Զեյթունցին այստեղ անհետևողականություն է ցուցաբերում, որովհետև դերանունների համար հարացույցում պատճառական հոլո-

վաճեւ չի դնում, շնայած այլ տեղ դնում է ի քոյոյն, ի նորոյն, ի մերոց, ի ձերոց, ի նոցայոց, ի սոցայոց և այլն:

2. Հոգնակիի հարացույց չկա, հիշվում են առանձին ձևեր միայն:

3. Երկու դերանունների սեռականների տարբերակիչը -ն հոգն է առաջին և երկրորդ դեմքերում. հստակ տարբերակված է միայն նա դերանվան ձևը:

4. Կոշականի ձևերը պարզ չեն պատկերացվում. իմ-ը կոշական իմաստ չունի:

Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախադրությունը կոչվում է նաև նախդիր: Առանձին թվելուց բացի, բոլոր նախդիրները տրվում են նաև օրինակների մեջ, որով բնութագրվում է նրանց կիրառական ոլորտը: Զեյթունցին շնայած չի առանձնացնում նախադրություններն ու նախածանցները (ընդ, արտ-), բայց յուրովի բաժանում է երկու մասի. ա. մի մասը բարդվում է անվան և բայի վրա «իբրև զաւելորդ, ի զարդ միայն և ոչ ի լրումն թերութեան», բ. մյուսները բարդվում են «առ ի լրումն բառից, և թէ ոչ դիցես, ոչ է կատարեալ»: Դժբախտաբար օրինակներ չի բերում, որից հստակ կլինեի, թե ինչ նկատի ունի. բայց եթե նկատի ունենանք, որ այլուր նախածանցները համարում է անիմաստ նախամասնիկներ, ուստի առաջին խմբի տակ պետք է դնել նախածանցները: Սրանից հետևություն, որ Զեյթունցին նախդիրները, այսինքն քերականական իմաստ արտահայտող՝ բառերը լեզվի համար համարում է ավելի անհրաժեշտ, քան ածանցները: Նշվում են և երեք հտադրություններ: Կան նաև կամայական հատույթավորման դեպքեր՝ զկնի-զկնիք, իռ-իռամիկն, իռետին և այլն:

Մ Ա Կ Ր Ա Յ

Մակբայը սահմանվում է որպես «կրկնաբայ կամ բայ ի վերայ բայի»: Մակբայը չի թերվում՝ «անխաղաց» է, որովհետև չի ընդունում անվան հոլովները և բայի խոնարհումը: Կարող է դրվել կամ բայից առաջ՝ վաղ գամ, կամ բայից հետո՝ շինեմ ես նախքան զքեզ: Մակբայները կազմությամբ լինում են պարզ՝ նախ, վաղ «ջոկադիր, իբր զպարզն կրկնելով»՝ նախավաղ, վաղվաղ, և «ջոկաման» (հարաբարդ)՝ վաղվաղակի: Ըստ իմաստի մակբայները խմբավորվում են

ալմանդական խմբավորումով (35 խումբ): Այդ դասակարգման մեջ նկատելի է.

1. Մակբայների մեջ են ընդգրկվել նաև ձայնարկությունները. ի՜շ, ո՜, ա՜խ, ա՜հ և այլն:

2. Առանձնացվում են հետևյալ մակբայակերտ ածանցները. ց- (ցայսքան), -իւ (վաղիւ), -ոք (բարութ), -եմ (ամենեմ), -օքէն (համ-օրէն), -պէս (յատկապէս), -բար (տարմաբար), -ցի (մուրցացի, -ան (ապաժաման), -գոն (որգոն), -այնք (միանգամայնք), -իկ (սաստիկ), -ելի (ուտելի):

Շ Ա Ղ Ա Ս Պ

Շաղկապի մասին ասածով նույնպես Զեյթունցին հետևում է Մոր-ծորեցուն: Չնայած շաղկապի մասին իր հատվածը համարում է «յա-ղագս շաղկապիդ սլարզ մեկնութիւն», սակայն կրկնում է սկզբնաղբյուրի և նախորդ մեկնիչների խառն դասակարգումը: Այդ դասակարգման մեջ նկատելի է.

1. «Շաղկապ է բառ, որ շաղկապէ զտրամախոհութիւն ոճով, այս-ինքն զմիտ առ միտս և զբառ առ բառ» սահմանումը ըմբռնվում է որպես ընդհանրապես փոխհարաբերություն բառերի և մտքերի միջև: Իսկ նա-խադասության մեջ բառերի միջև փոխհարաբերություն ստեղծելուն ծա-ռայում են ոչ միայն շաղկապները, այլև հոլովական և խոնարհման վերջավորությունները. այդ իսկ պատճառով շաղկապներ են համարվում նաև այլևայլ վերջավորություններ, օրինակ բայական՝ -եաց (ընտրե-աց), -իկ (սակաւիկ): Ըստ որում Զեյթունցին դրանք բաժանում է երեք մասի. առաջադիրք, միջակք և ստորադիրք:

2. Շաղկապներին վերագրվում է դեմք զանազանելու հատկություն. օրինակ, «անշատականները», ինչպես՝ կամ և կամ թէ:

3. «Փաստբանական» շաղկապները ըստ էության պատճառի կամ նպատակի սլարադայի իմաստով գործածված հարցական դերանուն են: Առավել հստակ են ստորադասական շաղկապները, որոնք նույնիսկ ըստ իմաստի են խմբավորվել՝ սլայման, կասկած, պատճառ, նպատակ և այլ իմաստներ արտահայտող:

4. Շաղկապը ոչ միայն միացնում, կցում է մտքերն ու բառերը, այլև կատարում է դրանք իրարից զանազանելու դեր, որպես սահման, այդպիսով օգնելով խոսքի ընդարձակմանը:

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ և ՈՏՔԻ մասին Զեյթունցին ավելի շատ է խոսում ըստ սկզբնաղբյուրի, քան մյուս հատվածներում: Պարզապես զգացվում է Զեյթունցու ճիգը՝ իր նյութը առավել պարզ, հստակ և հասկանալի մատուցելու համար. մի նպատակ, որ հաջողվում է նրան, ինչպես գործի մեջ ընդհանրապես, այնպես էլ այս հարցադրումների ժամանակ: Եթե առոգանության մասին գիտելիքը գործնական կարևորություն ունեւ հայոց լեզվի յուրացման տեսակետից (ընթերցման, ուղղագրության և ուղղախոսության համար), ապա ռոքի մասին ուսմունքը կապ չունեւ հայերենի իրական լեզվավիճակի հետ, որովհետև հիմքում ունեւ երկար և կարճ ձայնավորների առկայությունը, որ խորթ է հայերենին:

Ե. ԶԵՅԹՈՒՆՅՈՒՆ ԵՎ ԼԱՏԻՆԱՏԻՊ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Զահուկյանն իր «Գրաբարի քերականության պատմություն» աշխատության մեջ XVII դարը հայ քերականական մտքի զարգացման ընթացքում համարում է լատինատիպ քերականությունների շրջան: Այդ շրջանը, ըստ քերականական աշխատությունների բնույթի, բաժանվում է երկու մասի. առաջին՝ «լատինատիպ տեխնիկական քերականություններ» և «լատինատիպ ռացիոնալիստական քերականություններ» (XVII դարի առաջին կես) և երկրորդ՝ «Հունա-լատինատիպ քերականություններ» (XVII դարի 30-ական թվականներից մինչև 90-ական թվականներ): Առաջին բաժնում քննվում են Ռիվոլայի, Գալանոսի, Ոսկան Երևանցու և Հովհաննես Հոլովի քերականությունները, որոնք ունեն շեշտված լատինաբանություն, ավելին, գրաբարի քերականությունը տեղ-տեղ ձևում են լատիներենի օրինաչափությունների վրա, ստեղծելով բավականին արհեստական ձևեր, լատիներենի այս կամ այն քերականական իրակությունը հայերենում տեսնելու համար (համտ. օրինակ Գալանոս, *gerundium*-ի՝ («գործակալ») մասին եղած հատվածը): Սա լատինաբան դպրոցի բացասական դերն էր գրաբարի քերականության նկարագրության մեջ: Բայց այդ դպրոցն ունեցավ նաև իր բազմաթիվ առավելությունները, որոնցից ամենահիմնականն այն էր, որ գրաբարի լեզվական վիճակի նկարագրությունը հասավ իր ամենաճշգրիտ և մանրամասն մակարդակին: Երկրորդ բաժնում են Սիմեոն Զուղայեցու, Հովհաննես Մրբուզի և խաչատուր Կարնեցու քերականությունները: Այս բաժանման հիմքն այն է, թե այդ քերականներից յուրաքանչյուրն ինչքանով է հենված հայ քերականական մտքի նախորդ նվաճումների վրա, որքան է տեղ հատկացնում հունարան քերականների համակարգին: Առաջին ուղղության ներկայացուցիչները «հաճախ են դիմում հունաբան դպրոցի հոլովման և խոնարհման արհեստական ձևվերին, օգտագործում նրանց կերտած ածանցները: Սակայն... այնուամենայնիվ, հունաբան երկերն օգտագործվում են իբրև պատրաստի

նյութ և մասամբ իբրև միջոց իրենց լատինաբան կառուցումները հիմնավորելու համար. այդ երկերից նրանք օգտվում են միայն երկրորդաբար», իսկ երկրորդ ուղղութիւնն երկակայացուցիչները «Թրակացու քերականութիւնը և նրա մեկնութիւնները դիտելով իբրև հայկական մտքի իսկական արտադրանք, ազատ կերպով օգտվում են նրանցից, թեև, ապրելով լատինաբանութիւնով սնված միջավայրում, ստիպված են մեծ ջափով տուրք տալ և լատինատիպ քերականութիւններին»¹:

Գ. Զահուկյանը սխատեմի չի վերածում լատինաբան քերականութիւնն առանցքային հատկանիշները, այլ առանձին հատկանիշներ ընդգծում է այս կամ այն քերականի գործի նկարագրութիւնն և վերլուծութիւնն ժամանակ, ուստի այս աշխատութիւնների նկարագրային համեմատութիւնը մեզ հնարավորութիւն է տալիս Զեյթունցու գործը դասել հունա-լատինատիպ քերականութիւնների շարքը, և քանի որ Զեյթունցու քերականութիւնը իր ժամանակով նախորդում է այդ բոլորին (հավանաբար XVI դարի շրջանում քառորդ), կարելի է լատինատիպ քերականութիւնն սկզբնավորումը տառնել ավելի վաղ, քան XVII դարի առաջին քառորդը: Այս պնդումը նույնպես կարող է վերջնական չլինել, եթե նկատի ունենանք, որ լատիններեն լեզվի փաստերի նկարագրութիւնը կա դեռևս Հովհաննես Մործորեցու գործում²:

Ինչպես արդեն ասվեց, Զեյթունցին իր քերականական համակարգով հենվում է հունաբան քերականների վրա, ուստի նրա գործում լատինաբանութիւնը չէր կարող այն մակարդակի լինել, ինչ, ասենք, Ջուղայեցու կամ Խաչատուր Կարնեցու գործում: Օրինակ, Ջուղայեցին շարահյուսութիւնն լայն ըմբռնում ունի և քերականութիւնը բաժանում է կիրառելիքի և կիրառվողի, քերականական այլևայլ երևույթներ քննելով նախ խոսքից դուրս, հետո միայն խոսքի մեջ՝ որպես «կիրառութիւն»: Շարահյուսութիւնն ավելի մեծ չափերով քննվում է Գալանոսի, հատկապես Հոլովի մոտ: Ուստի քերականութիւնն այս երկատումը դառնում է լատինաբանութիւնն զլիսավոր հատկանիշներից մեկը: Զեյթունցին այս հարցում ավելի հետևում է ավանդական քերականութիւնն՝ ընդարձակ են քննվում քերականութիւնն մասերի բաժանման, տառի, վանկի վերաբերյալ հարցերը, իսկ շարահյուսական տեղեկութիւններ դրեթե

¹ Գ. Զահուկյան, Գրաբարի քերականութիւնն պատմութիւն, Երևան, 1974, էջ 120:

² Աշխատանքը պատրաստ էր հրատարակութիւն, երբ լույս տեսավ Հովհաննես Քոնեցու «Յաղագս Քերականի» երկը Լ. Խաչիկյանի և Ս. Ալազյանի բանասիրական և լեզվաբանական ընդարձակ և սպառիչ ներածականով: Համոզիչ է լատինատիպ քերականութիւնն սկզբնավորման մասին այնտեղ արտահայտված կարծիքը:

չկան: Զեյթունցիին շարահյուսական քննության մոտեցում է ցուցաբերում միայն հոլովների կիրառության հարցում, զգալիորեն առաջ անցնելով իր նախորդներից: Լեզվի վիճակի ճշգրիտ քննության արդյունք էր և պատճառական հոլովի տարբերակումը որպես առանձին հոլով: Առաջին շրջանի լատինաբանները հոլովների թիվը հասցրին տասի, որպես առանձին հոլով ընդունելով և՛ ներգոյականը (ի նմա), և՛ պատմականը (զնմանէ), և՛ պարտականը (զնովաւ): Այլ բան է, թե ինչքանով էր ճիշտ այդ ձևերի առանձնացումը որպես հոլովներ, կարևորն այն էր, որ լեզուն ուներ այդ ձևերը և լատինաբանները նկարագրեցին դրանք: Զեյթունցիին մի քայլ առաջ անցնելով իր նախորդներից և սկզբնաղբյուրներից, ավելի ճիշտ մոտեցավ հարցին և առանձնացրեց բացառականը («պատճառական»), ձևաբանորեն պատճառաբանելով այդ հոլովի ինքնուրույնությունը:

Լատինաբաններին բնորոշ լեզվի մանրամասն քննության հատկանիշը կա նաև Զեյթունցու բայի քննության բաժնում, որտեղ նա ձևաբանորեն և իմաստով այնպես հստակ է տարբերակել սահմանական և ստորադասական եղանակները, որպիսի հստակության չհասան նույնիսկ Գալանոսն ու Հոլովը: Երկուսն էլ սահմանականն ու ստորադասականը ձևով համարում են նույնական և վերջինիս համար օգտագործում են միայն եղանակավորող բառեր՝ երանի թէ, օշ թէ և այլն: Իսկ Զեյթունցիին նկատեց, որ սահմանականը ցույց է տալիս ներկա և ստույգ գործողություն և արտահայտվում է կա գրեմ ձևով, իսկ ստորադասականը՝ ապառնի և պայմանական գործողություն՝ «որպէս թէ յետ այլոց և ես գործեմ», և արտահայտվում է դասական գրաբարի սահմանական ներկայի ձևով:

Մյուս կողմից, սակայն, Զեյթունցիին ավանդական է խոսքի մասերի բաժանման մոտեցումով: Եթե Զուղայեցիին հունաբան է այդ հարցում, ապա Գալանոսն ընդունելով հունաբանների 8 խոսքի մասերը, ավելացնում է իններորդը՝ միջարկությունը, որ նախորդների կողմից քննվում էր մակբայների մեջ: Ոսկան Երևանցիին միջարկությունը չի առանձնացնում, բայց հոգը որպես առանձին խոսքի մաս չի ընդունում, այն համարելով այս, այդ, այն դերանունների կրճատ ձևեր: Հովհաննես Հոլովը հոգը հանում է, բայց առանձնացնում է միջարկությունը: Իսկ Զեյթունցիին հոգը քննում է որպես առանձին խոսքի մաս, հոգ համարելով նաև հոլովման և խոնարհման վերջամասնիկները, նույնիսկ այս, այդ, այն ցուցականները, տալով այս դերանվան հոլովումը, ինչպես հունաբանները:

Զեյթունցիին լատինաբաններին կանխեց նաև մի այլ մոտեցումով, որ հետագա քերականների մոտ դառնալու էր օրինաչափություն: Հունաբան քերականների նկարագրությունների մեջ նշվում է բայի ժամանակային հատկանիշը, բայց ոչ որպես ամենագլխավորը, մինչդեռ լատինաբանների համար բայի ժամանակային հատկանիշը ածինականարևորն է, որով և նա տարբերվում է գոյականից և մյուս խոսքի մասերից. նրանք ժամանակային որոշակի հատկանիշ են վերագրում նաև ընդունելությանը՝ իր տարբեր արտահայտություններով: Այս տեսակետից Զեյթունցիին հստակ կերպով ընդգծում է, որ անվան և բայի հակադրությունը հիմնված է ժամանակի հատկանիշի վրա. անունը արտահայտում է գոյացություն առանց ժամանակի, իսկ բայը արտահայտում է կիր կամ ներգործություն միայն ժամանակի մեջ. այս իսկ պատճառով նա ժամանակի հատկանիշ չի վերագրում դերբայներին, նույնիսկ անորոշը համարում է գործողության անուն՝ շինելու անունը շինել է, ըստ այնմ էլ անորոշը հոլովվում է, բայց նա չի հասնում դրա տարբերակմանը որպես առանձին բայական ձև (gerundium), ինչպես այն կա Գալանոսի մոտ, որպես «գործակալ»: Ավելին, Զեյթունցիին իմաստաբանական հակադրություն է տեսնում նաև գոյականի և դերանվան միջև. անունը գոյացություն է հայտնում որակությանմ՝ իր բոլոր հատկանիշներով, իսկ դերանունը՝ գոյացություն առանց որակության, այսինքն՝ դերանունը ընդհանուր իմաստ է արտահայտում: Այս ընդհանրացմանը չհասան լատինաբանները, նույնիսկ խաշատուր Կարենցիին, որը քերականությունը «փիլիսոփայական» քննության է ենթարկում: Զեյթունցու գործում դերանվան արհեստական ձևեր կան սկզբնաղբյուրից, որոնք հարադատ են հունաբան դպրոցին: Զեյթունցին Թրակացու մեկնիչների շարունակողն է նաև դերանունների խմբավորման հարցում. հարցական, հարաբերական և անորոշ դերանունները նրա կողմից դիտվում են որպես անվան տեսակներ, թեև նա խոստանում է, որ դրանց մանրամասն կանդրադառնա դերանվան մասին խոսելիս, բայց չի անդրադառնում:

Զեյթունցիին լատինաբան դպրոցի հետ ունի և այլ շփման կետ: Լատինաբանները հստակորեն տարբերում են գոյականն ու ածականը, շարահյուսության մեջ քննելով նրանց հարաբերությունը, իսկ հունաբան քերականներն ածականը չեն առանձնացնում, այլ դիտում են գոյականի ածանցականի խմբեր: Զեյթունցիին անվան բարդ և հարաբարդ կազմությունների մասին խոսելիս, քննելով գոյականի և ածականի

հարաբերությունը, այդ կազմության հիմնական անդամ է համարում անունը, իսկ վերադիրը՝ «պատահամամբ», որ կարող է նույն արժեքով դրվել այս կամ այն գոյականի վրա, կամ գոյականը կարող է ստանալ այս կամ այն վերադիրը բարդ կամ հարաբարդ բառ դառնալու համար: Այսքանով Զեյթունցին ընդհուպ մոտենում է ածականի առանձնացման խնդրին, թեև ածականի համեմատության աստիճանները ներկայացնում է որպես սնվան ածանցական այլ խմբեր:

Մինչև Զեյթունցու քերականությունը, գրաբարի քերականները խոսում էին երկակի թվի մասին, համառոտն կրկնելով Բրակացու թարգմանչի պատճենումը: Զեյթունցին թեև իր սկզբնաղբյուրի աղբյուրցյան տակ գոնե հարցադրումներում դնում է երկակի ձևը, բայց միշտ դրանք դուրս է մղում, ընդգծելով, որ այն հարադատ չէ մեր լեզվին, և՛ անվան, և՛ բայի ու դերանվան կարգերում նա բացառում է երկակի թվի առկայությունը: Դրանով իսկ Զեյթունցին բարձրացավ լեզվի ճշգրիտ նկարագրության: Լատինաբանների երկակի թվի դուրս մղումը նորութուն չէր Զեյթունցու համեմատությամբ:

Զեյթունցին նախորդ քերականներից մի քայլ առաջ անցավ նաև թվականի նկարագրության մեջ, ընդգծելով պարզ և դասական թվականների անփոխանցելիությունը, չնայած չհասավ լատինաբանների հըստակությանը, որոնք առանձնացնում էին նաև բաշխական թվականները. Զեյթունցին դրանք թվում է անվան տիպակների մեջ (մակրաշխ):

Լատինաբան դպրոցի ներկայացուցիչների համար հատկանշական է և այն, որ նրանք քերականական հարցերի նկատմամբ կիրառելով տրամաբանական մոտեցում, այլևայլ խոսքի մասերի սահմանման մեջ հիմնական շեշտը դնում են իմաստաբանական կողմի վրա, քան ձևաբանական, լավագույն դեպքում դրանք քննում են առանձին: Զեյթունցին նույնպես, ինչպես նկարագրվեց վերևում, խոսքի մասերի սահմանման մեջ լայն տեղ է հատկացնում իմաստային կողմին, երբեմն այն դարձրելով գլխավոր տարբերակիչ հատկանիշ տարբեր խոսքի մասերի հակադրության մեջ, ինչպես անվան և դերանվան, բայի և ընդունելության: Զեյթունցին իմաստաբանական հատկանիշն է դնում նաև «բանի» սահմանման հիմքում, կարևոր համարելով խոսքի մասերի իմաստային կապակցվածությունը «բանի» մեջ և ամենակարևորը՝ միտք արտահայտելը: Իմաստաբանական-տրամաբանական այդ մոտեցմամբ են տողորված Զեյթունցու գրքի բոլոր հարցադրումները. նա խստապահանք է գտնելու ամենատրամաբանական պատասխանը հունաբան քերականների կողմից առաջադրված բոլոր հարցերին, անհրաժեշտա-

բար գիմեկով և հարցերի փիլիսոփայական քննման, ինչպես, օրինակ, որակի մասին հատվածը, որտեղ բացատրում է Արիստոտելի բնորոշումը: Փիլիսոփայական հարցադրում է դարձյալ՝ «Հարց. ժամանակն ի գոյի՞ց է, թէ յո՞ւզ գոյից»: Պատասխանը նորից շարադրում է ըստ Արիստոտելի կարծիքի:

Անժխտելի լատինաբանությունն է Զեյթունցու քերականության մեջ հայերենում անվան սեռի քննության փաստը: Այստեղ Զեյթունցին շատ զիտակ ձեռով նշում է, որ հունարենում և լատիներենում արական, իգական և շեղոք սեռերը արտահայտվում են առանձին վերջավորությունների միջոցով, իսկ հայերենում այդպիսի վերջավորություններ չկան (առանձնացնում է -ով, -ուհի, -գույտ): Մանրամասն է նկարագրում սեռ արտահայտող վերջավորությունները լատիներենում՝ «պատահական» անվանց (ածականների) համար -ուս, -ա, -ում և «էական» անունների համար բառից առաջ իք, էք, օք: Այս կա նաև Զեյթունցու սկզբնաղբյուրի՝ Մործորեսցու գործում³, բայց սա միայն բանաբաղում չէ, որովհետև Զեյթունցին տարբերում է ածականական և անվանական վերջավորությունները: Ապրիլով կոչվում՝ լատինաբան ազդեցության միջավայրում, բացառված չէ, որ Զեյթունցին լավ լատիներեն իմացած լինի և իր քերականության համար օգտված լինի լատիներենի տեղա քերականություններից:

Զեյթունցին լատինաբաններից առաջ հաստատեց նաև քերականության անհրաժեշտության ու նպատակի նոր ըմբռնումը: Հունաբան քերականների համար քերականությունը անհրաժեշտ բանալի էր մյուս գիտություններին հասնելու համար. այդ մասին են վկայում քերականության մասերի բաժանումը՝ հաղնեբզության մասին, ստուգաբանության մասին, տաղաչափության մասին և այլն: Մինչդեռ Զեյթունցու համար քերականությունը այդ անհրաժեշտությունից բացի ունի և գործնական նպատակ՝ սովորեցնել ճիշտ գրել, կարդալ և հատկապես խոսել. ուղղախոսությունը լատինաբան քերականների համար դառնում է հիմնական նպատակ:

Զեյթունցին բազմաթիվ շփման կետեր ունի որպես լատինաբան դպրոց հայտնի քերականական ուղղության հետ, ուստի նախորդելով XVII դարում որպես այդ դպրոցի ներկայացուցիչներ ներկայացված բոլոր քերականներին, կարող է համարվել հունա-լատինատիպ քերականության սկզբնավորող:

³ Տե՛ս Լեոն Խալիկյան, Արտադի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 178:

Զ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Ձեյթունցու քերականութիւնը մեզ հասել է ամբողջական և թերի արտագրութիւններով՝ 10 ձեռագրերում: Համահաւաք բնագրի կազմութեան համար օգտագործել ենք միայն 8 օրինակներ: Ձեռն օգտագործված Վիեննայի 2 օրինակները, որոնց մանրաժապավենները ըստացանք ուշացումով:

Համահաւաք բնագիր կազմելիս առաջնորդվել ենք այդօրինակ աշխատանքների ժանոթ փորձերով՝ Ն. Ադոնցի և Լ. Խաչերյանի կազմած բնագրերի սկզբունքներով: Անկախ ձեռագրերի մատուցած տարբերակներից, ուղղագրութիւնը միասնականացված է, ավելի հարազատ մնալով դասական գրաբարի ուղղագրութեանը: Տարբերացումների համար կիրառված է այսպիսի մոտեցում. ուղղագրական և քերականական արժեք չներկայացնող տարբերակները մեծաւ մասամբ չեն նշվել, համարվելով գրչագրական անուշագրութեան սխալ. օրինակ՝ մարկայինս, ածանցանց, վազն, ի միանց և այլն: Իսկ եթե նշվել են, ապա այն նպատակով, որ պատկերացում տանք տվյալ գրչագրի մասին: Որոշ դեպքերում մի տարբերակ ակնհայտ սխալ լինելու պատճառով չի նշվել, բայց այդ նույն տարբերակի այլ սխալագրութիւնը նշվել է, որովհետև ունեցել է ուղղագրական կամ քերականական արժեք. օրինակ՝ Արտաւազ չի նշվել, իսկ Արտաւազտ նշվել է: Տարբերացվածքները չժանրաբեռնելու համար խուսափել ենք նշել ն որոշիչ հոգի առկայութեան կամ բացակայութեան բոլոր դեպքերը. առաջնորդվել ենք քերականական անհրաժեշտութեամբ և բարեհնչունութեամբ: Նույն նպատակով խուսափել ենք միշտ նշել հարցադրումների «Վասն է՞ր ասէ» և «է՞ր ասէ» տարբերակները: Նույն տողի այլ բառերի տարբերացումները բաժանված են միջակետով, այլ տողերինը՝ վերջակետով:

Եթե քերականորեն գրաբարին որոշ չափով խորթ, բայց միջին հայերենին հարազատ ձևերի նախընտրութեան հարց է ծագել, նախապատ-

վությունը տվել ենք միջին հայերենի ձևերին, նկատի ունենալով հեղինակի ժամանակաշրջանի լեզուն, դրանով ևս ընդգծելով, որ քերականության լեզուն նույնպես չկարողացավ խուսափել (բանավոր) խոսակցական լեզվի ազդեցությունից, ընդգրկեց միջին հայերենի տարրերը:

Զեյթունցու քերականությունը բովանդակող ձեռագրերն իրար նկատմամբ առնչակցության տեսակետից կարելի է ենթարկել որոշակի խմբավորման: Առանձին խումբ կկազմեն Վիեննայի ձեռագրերը՝ երկու օրինակ, ըստ Հակոբոս Տաշյանի ձեռագրացուցակի.

1. № 84 «Հաւաքումն քերականութեանց»: Զեյթունցու քերականությունը ամբողջական է: Գրիչ՝ Պարոն Պողոտանայ որդի Զատիկ: Ժամանակ՝ 1613 (սա թվագրվածներից ամենահինն է): Թերթ՝ 178: Զեյթունցու աշխատությունը գրավում է 9ա—95բ երեսները: Շղագիր և նոտրգիր: Ունի հեղինակային հիշատակարան: Բառարանը նախորդում է քերականությանը:

2. № 95 «Քերականութիւն Դաւթի»: Գրիչ՝ անհայտ: Ժամանակ՝ 1682-ից առաջ: Թերթ՝ 82: Զեյթունցու քերականությունը գրավում է 1ա—74 էջերը: Բոլորգիր: Չունի հեղինակային հիշատակարանը (զոհե Տաշյանը չի քաղել): Քերականությանը հաջորդում է բառարանը:

Տաշյանը անվանացանկում երկուսն էլ վերագրում է Դավիթ Անհաղթին:

Մյուս ձեռագրերը կբաժանվեն երեք խմբի՝ ա., բ., գ.: ա. խումբը ամենակարևորն է, որովհետև Զեյթունցու քերականության բնագրի ամբողջական վերականգման համար ունեն բազմաթիվ տողեր և արտահայտություններ, որոնք պակասում են բ. խմբի ձեռագրերում: ա. խմբի ձեռագրերն են. Մատենադարանի

Ա. № 3883 Քերականական և այլ նյութերի ժողովածու: Գրիչ՝ անհայտ: Ժամանակ՝ «Ձեռագրացուցակում» համարվում է XVI դարը: Որոշակի կա միայն «Եսայի վարդ. 1630 (ՌՀԹ)» թվակիր կնիքը, որը հաստատապես ավելի ուշ է: ա. խմբի երեք ձեռագրերը խիստ առնչակից են, գրեթե նույնական, և անհավանական չէ, որ սա լինի մայրօրինակ, որովհետև ավելի ճշգրիտ է, քան մյուս երկու արտագրությունները: Նյութն ամբողջական է՝ 123բ—206բ: Կա հիշատակարանի միայն վերջին տողը. թերևս ընկած է հղել նախատիպ օրինակում: Ունի բառարանը:

Բ. № 2380 Քերականական նյութերի ժողովածու: Գրիչ՝ Եսայի Վարդ., Վարդերես Լեհրցի, ԳԺՆԽՄՇԲԳՍ, Դավիթ: Ժամանակ՝ 1635, էջմիածին: Թերթ՝ 447: Նոտրգիր: Նյութը ամբողջական է՝ 318ա—389բ:

Ոչ սկզբից, ոչ էլ հիշատակարանում չկա հեղինակի անունը: Ունի բառարանը: Նույնն է, ինչ որ Ն. Ադոնցը նշել է կող. 2359: Դրչագիրը հատկանշական է նրանով, որ նաև բաց վանկում հաճախ կիրառում է աւ-ի օ գրություն:

Գ. № 1841 Քերականական աշխատությունների ժողովածու: Գրիչ՝ Գրիգոր որդի: Ստացող՝ Զաքարիա Կախկոպոս: Ժամանակ՝ 1731, էջմիածին: Թերթ՝ 392: Բոլորգիր: Ամբողջական է, 271—328 էջերը: Ունի հիշատակարան: Բառարանը չի արտագրվել. հավանաբար ավելորդ է նկատվել գրչի՝ ղփչաղներին շիմանալու պատճառով:

Բ. խմբի ձեռագրերը երկուսն են, որոնցից մեկը թերի է: Երկուսն էլ բովանդակում են Սկևռացու գործից քաղված հատվածը՝ գրագարծի մասին, որ պակասում էր ա. խմբի ձեռագրերում: Սակայն մյուս կողմից, ա. խմբի ձեռագրերի հետ համեմատած բավական շատ են արտահայտությունների և տողերի բացթողումները: Առնչակից են և գրեթե նույնական, չնայած Երուսաղեմի պատրիարքաջանի ձեռագրատան ձեռագիրը նմանություններ ցույց է տալիս նաև ա. խմբի ձեռագրերի հետ: Բ. խմբի ձեռագրերն են.

Դ. № 2336 (Մատենադարան) Քերականական նյութերի ժողովածու: Գրիչ՝ Ստեփանոս Մշկոցի, Վրդանես Դպիր: Ստացող՝ Մինաս Բաբերդացի: Երկրորդ գրիչի հիշատակարանի հիման վրա ձեռագիրը համարվում է 1633-ի արտագրություն: Բայց Վրդանես Դպրի ձեռագիրը բոլորովին այլ է, քան Դավթի հատվածը, ուստի և, կարծում ենք, արտագրվել է 1633-ից առաջ, որովհետև Վրդանեսի կողմից կատարված ուղղումներ կան Դավթի տեքստում: Վայր՝ Կաֆա: Թերթ՝ 231: Նոտրգիր: Դործը ամբողջական է՝ 103ա—183ա:

- 15 Պատ. Սուղ բուն սուղսն ասէ, որ են ե,ո,ւ, և սղացելոյ՝ զերկամանակսն ասէ, որ են ա,ը,ի, որ երբեմն երկարին և երբեմն սղանան վասն ձայնորդին պատահելոյ: Իսկ որ սսի տատրակ, տիւնն և ըէն ի վերջին այքն փաղառի ի յետուստ կուսէ, և երկարի, զի մին միշտ յառաջագիր կարէ լինել, որպէս տիւնն ըէին, այսպէս. տատ-րակ,

- 20 տր-գալ, Տր-դատ, տր-ամ, տն-անկ, տղայ, տմարդ, կր-ակ: Կոչի սա դրութեամբ երկար, զի երկրորդ ձայնորդն նայ գոլով, տայ թոյլ առաջի ձայնորդին անցանել ի վերջին ձայնաւորն. և սա զերկրորդ տեղին ընկալաւ:

Հարց. Զի՞նչ է. և կամ ի պարզ ձայնորդն յանգեսցի և զհետինն ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, որպիսի եր-կիր:

- 25 Պատ. Վասն զի ըէն պարզ գոլով և ոչ ի կրկնակացն, զկեն առնելով, զերկրորդ ձայնորդն սկիզբ առնէ երկրորդ փաղառութեան, երկարացոյց զին, այսպէս. եր-կիր, եր-կին, եր-կիւղ, վասնզի կենդ հաւասար մատուցանէ զբաժանումն եչիդ և ինիդ, զի ոչ կարէ ըէն կենին առաջադասիլ: Տես զի սոքա երեքեանք ընդդէմ են միմեանց՝
- 30 տատրակն աղցին և երկիրն տատրակին. աղցն ձգէ զերկու բաղաձայնսն յառաջ կոյս ձայնաւորին և տատրակն ի վերջինն, և երկիրն

1 ԱՐ զառաջի. ԱԳԴՆ զերրորդ: 2 ԱԳՆ որոց. ԱԳ զերկրորդ: 3 ԲԳԴԴ չի՞՝ զաւուկ: 5 Բ երկուս, 5—6 Գ բաղաձայնք: 7 ԴՆ միամօրօք փխ. միամօր ոք: 10 ԳԴ սակաւ. Բ քէն փխ. գեր. Ա չի՞՝ սակայն գեր քան զկնիսն, որ են դրութեամբ. ԳՆ զկնիսն: 12 ԴՆ չի՞՝ է: 12—13 Բ վերաբերեսցեն: 14 Գ սուղն(ասէ): 15 ԱԳՆ յերբեմն յերկարին և յերբեմն: 17 ԱԳԴՆ չի՞՝ ի(յետուստ): 19 ԱՐ տղա. Գ մարդ: 24 Գ ի երկիր: 25 Ա չի՞՝ ի. Գ կէն. Ա առնըլով: 27 ԱԳԴՆ երկիր: 29 Բ յառաջադասիլ. Դ երկրեքեանք: 31 Գ չի՞՝ ի:

տայ զմին յառաջ կոչս ձայնաւորին և զմիւան վերջի կոչսի ձայնաւորի երրորդ:

Հարց. Զի՞նչ է. և կամ յորժամ ի կրկին ձայնորդն վերաբերեսցի, որպիսի՞ հեղիկ:

5 Պատ. Վասն զի զայն կրկնակ գոլով, զերկուց բաղաձայնից ուժ ունի, քանզի ի սէէ և ի դայէ բաղկանայ ըստ յունաց, վասն որոյ ընդդէմ է պարզին, զի զօրութեամբ զայն եչին տայ ձեռն, իսկ կիտին ի նոյդ, այսպէս. հեղիկ, հեռիկ- հեցիկ, դաքար, շաքար, նեխեալ, մրջին:

10 Հարց. Զի՞նչ է. և կամ յորժամ ի կրկին ձայնորդն յանդեսցի միով փաղառութեամբ, որպիսի՞ աջ:

Պատ. Քանզի ջէն կրկնակ գոլով ի ճէէ և ի ձայէ, երկարացոյց զայբըն, կետիւ և զօրութեամբ այբին տայ ձեռն, այսպէս. աջ, ախ, աք, առ, աշ, աղ, ալ, աչ, աց և այլ սոյնպիսիք: Այս է զանազանութիւն

15 փաղառութեանց երկարից բնականապէս և ըստ պատուոյ եղեալ ութ եղանակաւ:

Յ Ա Ղ Ա Գ Ն Ս Ո Ւ Ղ Վ Ա Ն Դ Ի

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. սուղ փաղառութիւն լինի ըստ երկուս եղանակս, յորժամ ունիցի եչ ինչ ի բնէ աղօտացն, հիշան՝ նեւտող:

20 Պատ. Ըստ սղութեան և կարճութեան այսպէս զհղանակն պակաս ունի, քանզի ի տառից բաժանմունն ցուցաւ բնութեամբ սուղ գոյե, ու: Արդ զառաջին եղանակն ի բուն նուազիցն յիշէ, որով լինի սուղ վանդ երեք, քանզի իւրաքանչիւր ոք ի սոցանէ յորժամ ի մի բաղաձայն յանդի, որ ոչ է կրկնակ, սուղ փաղառութիւն առնէ, որ-

25 պէս՝ նեւտող, նեւրող, նեւտոր, քանզի եչ և ո սուղք են:

Հարց. է՞ր ասէ և կամ յորժամ ունիցի զմի ինչ յերկամանակացն ըստ ամփոփման, որդան՝ ս-ղօտ, սղ-քատ:

Պատ. Յուցաւ և այս, թէ իրկամանակք երեք են՝ ալլի: Արդ յորժամ զմի ոք ի դոցանէ ի բաղաձայնս յանգեսցի, որ ոչ է կրկնակ,

1 և կոչսի 3 և զին վիւ. զի՞նչ է. Գ վերայբերեցի, Դ և վերայբերեցի 5 Դ և ձուժ 8 Դ և ի նոյն. ԱԲԳ դա-խար. ԲԳ շա-խար, Ա շար-խար 9 Դ և չի՞ նեխեալ, մրջին 10 և չի՞ է. Գ անգեսցի. Ա ով վիւ. միով 12 Գ երկարակոյց 13 Ա զկետիւ, Գ կիտիւ. Դ և չի՞՝ ար: 15 Ա խաղառութեանս. Ա բնականապէս. Ե պատույ 16 ԱԲԳԴ և զանազաւ 18 Գ երկուց, Դ և յերկուս 19 ԳԴ չի՞՝ ունիցի. ԱԳ եղ վիւ. եչ. Բ աղօտիցն 20 Ա չի՞՝ Պատ. Ա զեղանան, Բ զեղանակն 20—21 Ա պակասութիւն վիւ. պակաս ունի 22 Դ և չեղանակն 23 Դ և չի՞՝ երեք 25 Ա նեւտոր. ԱԳԴ և եչ 26 Ա չի՞՝ Հարց. Դ և ըստ(յերկամանակացն): 27 ԱԳԴ և աղատ 28 Ա չի՞՝ Պատ.

լինի և այս ըստ երկրորդ եղանակի սուղ փաղառութիւն, որպէս ա-ղօտ, աղ-քատ, քանդի երկամանակ գոլով այբին ամփոփի ի տիւնն և սղի:

Հարց. է՞ր ասէ. յաղագս հասարակաց շաղաշարաց:

- 5 Պատ. Ըստ կարգի զարուեստ աճեցուցանէ, քանդի նախ զվանդս և զփաղառութիւնս ուսոյց: Այժմ յաղագս հասարակաց շաղաշարաց խօսի, որ ասի զուգաշարաց, այսինքն շարեցեկոցսն ի հասարակաց խօս զրուցատրութեան և բանից պատմութեան:

- 10 Հարց. է՞ր ասէ. հասարակաց վանդ լինի ըստ եղանակս երիս՝ յոր-ժամ ի ձայնաւոր երկար յանգեացի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որդան՝ «ինձ բնաւ ես ոչ դու իրիք պատճառ արեւ, այլ աստուածքըն»:

- Պատ. Հասարակապէս առնու զայս ըստ չափոյ երկայնիցն և սղիցն, և ըստ խորհրդոյն մատուցանէ ի տեղիս օժանդակութիւն, զի մի միտք ինչ բանի զանխլացեալ ի դժուարին չափոցն ծածկեցցին: Եւ լինի սա ըստ երիս եղանակս, զի որպէս մարդ յերից ունի գոյութիւն և երիւք ժամանակօք կատարի, այսպէս և հասարակութիւն խօսից երիւք ձեռիւս այսոքիւք աւարտի, զորոյ զօրինակն ի Հոմե-րոնի գիւտիցն դնէ առաջի: Արդ առաջին վանդդ ի տաղս եթէ բնութեամբ և թէ դրութեամբ միշտ զերկայն և եթ խնդրէ, իսկ երկրորդ վանդդ ի ձայնաւոր երկայն յանգեցաւ երկբարբառ, և ի դիմի յարուցեալ եւ, խորտակելով և արգելով սաստկաբար օրինակ իմն զալիս ծովու վիմի պատահել, արար սուղն, որ է ստեղն, այսինքն՝ միջակ, նմանապէս և հրորորդ վանդն ի ձայնաւոր երկարն յանդի, 25 այսպէս՝ ի-րիք, պատ-ճառ, ա-րեւ, և զչետինն ունիցի ի ձայնաւորէ, որդոն՝ այլ աստ-ուած-քըն, որով սա սղացաւ որպէս զառաջինն, իսկ պատմութիւնք առաջին եղանակիս այսպիսի է. Պրիսմոս տրո-վացի, զորոյ զկիւնն յսփշտակեալ էր հելլենացւոցն, պղծեալ և թո-

1 Դե ըստ երկու: 2 ԱԴե աղատ. Դե շի՛՛ այբին: 4 Գ շի՛՛ է՞ր ասէ. Ա շաղաշարաց: 5 Գ ըստ կարի. Գ արուեստ: 6 Ա փաղառութեան. ԱԲե ուսոց, ԳԳ ուսուց: 7 Գ շի՛՛ որ ասի. Բ շարեցեկոցն, Դ շարեցեկոյն. ԳԴ ի հասարակ: 8 Բ պատմութեանց: 9 ԱԲԳԴ յերիս: 10 Դե ձայնաւոր է. ԱԲԳԵ երկայն. Ա յարգեցի: 14 Ե երկայնիցն երկայնիցն (կրկն.): 15 Դե շի՛՛ միտք. Ե ծածկեցին: 16 ԱԲ յերիս. ԱԲԳԴԵ յեղանակս. ԴԵ զգոյութիւն: 17 Բ Երեւ: 18 Ա զորո, Գ զորս. ԴԵ ի Հոմերոնէ: 19 Դե շի՛՛ ի տաղս: 22 Գ և եղ: 21 Ա յարգեցաւ: 22 Ա խորտակելով. Բ արգելով. ԲԴԵ օրինակին: 25 ԲԴ զհետինն: 27 Գ յառաջին. ԱԲԳԴԵ յեղանակս. ԴԵ շի՛՛ այսպիսի է. Դ Պրիսպոս: 28 Գ զոր. Ա հելլենացւոցն, Բ հելլենացոցն:

- դին զնա, և որդին նորա Պրիամոս քննելով զի վերայ եղելոցն գործն, ասելով ցաղչիկն. «Եկ այսր, արդ զի ոչ ես դու պատճառ, այլ աստուածքն, որ ոչ հառուն մեղ յաղթութիւն»:
- Հարց. Վասն է՞ր ասէ. և կամ յորժամ աղօտի կամ աղօտացելոյ
- 5 ձայնաւորի վերաբերիցին երկու ձայնորդքն, որոց երկրորդն նայ է, իսկ առաջնորդն ըստ եղածայն, հիշան՝ «Պատրոկղէ, ինձ հիգիս կարի յոյժ սիրեցեալ անձին»:
- Պատ. Սովորութիւն է նային, զօրէն մոմոյ, երբեմն կակղանալ և երբեմն խստանալ: Արդ յառաջին վանդն կակղացաւ ըէն և թոյլ ետ
- 10 գերազանցեալ ձայնին, զի արասցէ երկայն, իսկ երկրորդն խստացաւ դատն և արգել վատաւայնն, առնելով սուղ, որ է ստեղն, և յորժամ կամիս սղացուցանել, ըստ այսմ օրինակի զվանդն ձայնաւորի պէտք են կամ սղի կամ երկամանակի, որ աղօտանայ, զգուշանալով յայլոց ձայնաւորաց, և զնային վատաւայնին զնոյն
- 15 սլահել խտրութիւն, զոր ասացաւ առաջագոյն աղօտ՝ ե, ու, և աղօտացեալ՝ զերկամանակք ա, ք, ի, և նայք՝ զմ, ն, ր, զոր աստ աղօտ և աղօտացեալ ձայնաւորք զո և զայքն ասէ, իսկ երկու ձայնորդ՝ զկենն և զտիւնն, և երկու նայ՝ զըէն և զդատն, իսկ եղածայն առաջնորդ զպէն, վասնզի ի լերկիցն է և ոչ ի կրկնակացն, որդոն՝ Պատ-
- 20 րոկղէ, քանզի իբրեւ հոռիս Աքիլլես զՊատրոկղէ մեռեալ լալով զհարճն, վասն զի Աքիլլեսայ դայակի որդի է Պատրոկղէ և քաջութեամբ մեռաւ ի պատերազմին, և հարճն իւր, զոր խոստացեալ էր տալ նմա, լայր զնա, և Աքիլլես մխիթարելով զնա ասէ. «Պատրոկղէ, ինձ հիգիս կարի յոյժ սիրեցեալ անձին», այսինքն ողորմելոյս կամ թշուառականիս յոյժ սիրեցեալ անձին:
- 25 Հարց. Զի՞նչ է. և կամ յորժամ սուղ իցէ և եղբրիցի ի մասն բանի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որպիսի՝ «Զնեստոր ոչ խաբեաց խօշիւն, թէպէտ և յումպէր»:
- Պատ. Յորժամ յերկրորդ վանգին ձայնաւոր սուղ դիպիցի միով բա-
- 30 ղաձայնի և բանն երկու վանգիւ միայն ղկատարումն առնուցու և առաջնորդ վանգն ի ձայնաւորէ հաւիցի, լինի համբոյր, թէպէտ և սուղէ ըստ այլումն կարծեաց:

2 Գ շիֆ՝ ալլ: 3 Ա շիֆ՝ մեզ: 4 Գ աղօտացելոց: 5 Դե շիֆ՝ ձայնաւորի՝. Բ ի վերայ բերիցին. Ա ձայնաւորքն փխ. ձայնորդքն. Ա նա է: 6 Գ Պատրոկղէ: 8 Դե շիֆ՝ է: 9 կակղացօրէն: 13 Դե պետք. ԲԳ աղօտանա: 14 ԱԲԳ նայն: 17 ԱԳ ձայնաւոր. Բ շիֆ՝ ձայնաւորք: 23 Դե շիֆ՝ և Աքիլլես մխիթարելով զնա: 23—24 ԴԴ Պատրոկղէ: 24 ԱԲ հիգիս: 24—25 Գ շիֆ՝ ապինքն ողորմելոյս կամ թշուառականիս յոյժ սիրեցեալ անձին: 25 ԱԲե թշուառակիս: 29 Դե շիֆ՝ Յորժամ. Դե դիպիցէ: 31 Գ շիֆ՝ ի. Ա հաւիցն:

Հարց. Եւ յորմէ՞ մնացեալ է գաղափարս այս:

- Պատ. Ի Հոմերոսէ, զոր ասեն ի պատմութենէ, եթէ Նեստոր ոմն ծեր, հմուտ պատերազմի, զոր տուեալ ցմաքսան բժիշկ վիրա-
տրեալ զի դարմանեսցէ, որոյ դարմանելով զվէրսն, տայր նմա հաց
5 և սեաւ գինի, բայց իբր խօշիւն ամբոխի լսէր ի պատերազմի, այ-
սինքն յոյժ ամբոխումն գործոյ պատերազմի լսելի լինէր նմա և ոչ
սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյն, քան թէ երթեալ ի գործ պա-
տերազմին: Այս պատմութիւն ըստ մեկնութեան Դաւթի այսպէս
եղեալ է: Այլ Մագիստրոս, որ զմեկնութիւն քերականին շարադրե-
10 աց առ միմեանս, այսպէս եղեալ է, թէ տայր նմա ըմպել ի խաշոյ
իրի ջուր, զոր ասէր, թէ գինի է սեաւ, իսկ նորա ըմպեալ ծանեաւ,
թէ ոչ է գինի, այլ խաշոյ: Եթէ այսպէս է և թէ այնպէս, ոչ է մեզ
հարկիւ պիտանի պատմութիւնք սոցոս, այլ վասն վանգաշափու-
թեան եղեալ է Հոմերոս: Իսկ ըստ յալումն մեկնութեան այլ օրի-
15 նակաւ յայտարարութիւն հասարակաց վանգի, որ լինի ըստ եղա-
նակս երեք. յորժամ ի ձայնաւոր երկայն յանգեսցի և ղյետինն
ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որդան՝ այլ և ի յաշ-խարհա-ժո-
ղո-վու-թե-նէն անդր եթէ ոք հասանիցէ, զոր ի Մագիստրոսին
այսպէս եղեալ է. այլ և ի նաշխարհաժահութենէն անդ եթէ ոք հա-
20 սանիցէ, և կամ յորժամ աղօտի կամ աղօտացելոյ վերաբերիցին
երկու ձայնորդք, որոց երկրորդն նայ է, իսկ առաջնորդն ըստ եղա-
ձայն հիզան՝ «Բոլոր և փոքրագոյն ի տէրութեանն ընդ արեգական
է յանց». և յորժամ սուղ իցէ և եղիրիցի ի մասն բանի և ղյետինն
ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որպիսի՝ ի տրամաբանելն ընդ-
25 հանուր երկրի ածողեալ զնա: Այլ զի ասաց, եթէ հասարակ վանգ
լինի ըստ եղանակս երեք հասարակութիւնս այս ըստ երկուց իմն
ունի նշանակութիւնս, ըստ ձիոյ և շանն, որ ի յանուան մասին է,

1 ԱՐ շի՛ֆ՝ Եւ 2 Ա Նեստորմն ի/ս. Նեստոր ոմն 3 ուզեալ, Ե զուեալ փ/ս. զոր
տուեալ 5 Դն ամփոխի փ/ս. ամբոխի. ԱԳԴն շի՛ֆ՝ ի 6 Բ ամփոխումն, Դ ամպոխումն,
Գ յորժամ բախումն փ/ս. յոյժ ամբոխումն. Գն լինէ, 7 ԱԴն գինոյն, 9 Գ Մագիստրոս.
Գ մեկնութիւն 11 Դ էր 12 Ա շի՛ֆ՝ է(և), 13 Դ տրամութիւնք փ/ս. պատմութիւնք. ԱՐԳ
վանգս շափութեան 14—15 Բ յօրինակաւ 15 Գ յայտարարութիւն. ԱՐ վանգ. ԱՐԳԴն յեղա-
նակս 16—17 Ա շի՛ֆ՝ ի ձայնաւոր երկայն յանգեսցի և ղյետինն ունիցի. ԲԳԴն ղյետինն:
17—18 Գ յաշխարհաժողութենէն 19 Դ նաշխարհաժողութենէ, Ե նաշխարհաժողութենէն:
20 Ա շի՛ֆ՝ կամ (յորժամ), 21 Ե նայն է 22 Դ բոլորի. Դ տեսութեան փ/ս. տէրութեանն.
Ա ըստ փ/ս. ընդ 26 ԱՐԳԴն յեղանակըս. ԱՐն հասարակութիւն 27 Գ յանուն:

- որ առանձնանայ էզն ձայնիւ ինչ յարուէն, նոյնպէս և արուն փա-
ղանունապէս ինչ ի նմանէ այլ ինչ կոչմամբ զնոյն նշանակեալ
նոյնպէս երեք. սոքա զի առաջինն երկբարբառով աւարտեալ և եչն
առ նմին հանդիպեալ, փոխէ զբնութիւն սղացուցանելով և առնէ
5 ստեղն և զհաւեղն իսկ երկրորդ տաղին, որ թողացուցանէ զվատա-
ձայն երկայնել և յաջորդ վանդին տաղն արգելու շարաձայնն շուրջ
զինքեամբ, և մեղկացուցանէ զհնչումն և երրորդն՝ յորժամ նախ-
կինն երկայն լինի և ըստ նմանէն սուղ բաղաձայնիւ և բանն ըզ-
կատարումն առնուցու և միւսն ևս ի ձայնաւորէ սկսեալ լինի իշխա-
10 նութիւն է առնել համբոյր: Այսչափ ցոյց օրինակի յաղագս հասա-
րակ շաղաշարացդ:

1 Ա աղանձնաձնա, Բ աղանձնանա, Դն առանձնայ: 3 Գ սոյնպէս փխ. սորա: 4 Ա
զբնութիւնսն, Բ բնութիւն. Ե սղացուցանելով, 5 Դն շիւհ՝ և(զհաւեղն). Ա զհաւելն,
Գ զհաւեչն: 6 Բ աջորդ: 8—9 Գ զկատարման: 9 Դն միւսն. Գ ի ձայն օտարէ փխ. ի
ձայնաւորէ:

Յ Ա Ղ Ա Գ Ս Բ Ա Ռ Ի

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. բառ է մասն բանի դուզնաքեայ, ըստ բաղ-
դասութեան բանի:

- Պատ. Բառն խօսք լսի, որ լինի մի հեգիւ, որգոն՝ հաց կամ ջուր,
5 հուր, յօդ, կամ երկու հեգիւ, որգան՝ Դաւիթ, Մարկոս, կամ երեք
հեգիւ, հիզան՝ նեղութիւն կամ արքայութիւն: Սոյնպէս և ի բայիցն
լինի, որպէս՝ առ կամ տուր կամ նիստ, կամ երկու հեգօք, որպակ՝
շինեա, գործեա կամ այլ աւելի, թէ անուն, թէ բայ և այլ մասունս
բանին, մի ըստ միողէ բառ ասին, վասն այն ասէ, թէ բառ է մասն
10 բանի: Եւ այն, որ ասէ դուզնաքեայ, որ է նուազ, այսինքն փոքրիկ:
Եւ այն, որ ասէ, թէ ըստ բաղդասութեան բանի, բազմ մի լսի և դա-
սութիւն՝ շարադասելն, այսինքն շարագրելն է, այսինքն յորժամ
դասես և կարգես ընդ միմեանս զութ բառն և միաւորես, այն լինի
բան, կամ որ չափես և կշռես և կամ համեմատես զբառն և զբանն
15 ընդ միմեանսն, և է փոքր բառն առ բանին մեծութեան, վասն այ-
սորիկ ասէ, ըստ բաղդասութեան բանին:

- Յայսպէս ամենայն երկար բանք բաղկանան ի բառիցն շարա-
դրութեան, իսկ բառքն ի հեգից և հեգն ի տառից: Եւ արդ, այսպէս
իմասշիր զարուեստ հեգիցն կապելոյ և զբաժանումն տառիցն ի
20 շինել զհեգսն, զի յորժամ անունն կամ բայն կամ այլքն բաղում
հեգիւք բաղկանան, մարթասցես բաժանել զիրան անձայնս ի վերայ
ձայնաւորացն, զի յորժամ մի բառ երկու ձայնաւոր գիր ունիցի և
ի մէջ երկուցն մի անձայն, որգոն՝ ապա, արա, արի, զառաշին
ձայնաւորն միայն արա հեգ և զանձայնն վերջին ձայնաւորին տուր,
25 այսպէս՝ ա-պա,ա-րա, ա-րի, իսկ եթէ երկու անձայն իցեն ի մէջ
երկուց ձայնաւորացն, առաջնոյ ձայնաւորին տուր զերկու կամ զե-
րեք անձայնսն և զմի մնացեալ անձայն երկրորդ ձայնաւորին
սկիզբն տուր. այսպէս՝ ինքն-ա-կալ, ըմբռ-նող: Այսպէս, և թէ ան-

1 Գ չի՛ք՝ ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻ, 4 ԱՐԵ ի մի. Ա հեգիւ: 5 Ա հեգիւ: 6 Ե արգայութիւն: 11 Բ չի՛ք՝
թէ, 12 Դ չի՛ք՝ է: 13 Գ միմիմանս. Ա զգութ վի՛ս. զութ 14 Ա համեմատես: 16 ԱՐԳ
չի՛ք՝ միմէ և: 95-ի վերջը: 25 ԴԵ արի: 28 ԴԵ ըմբռ-նող:

- 5 ձայն իցէ առաջին զիր բառին և ձայնաւոր զկնի և ի միջոցի, դար-
 ձեալ անձայն և ապա այլ ձայնաւոր և երկու կամ երեք հնգով բառն
 կատարի զմիջոցացն անձայնսն ի վերայ ձայնաւորացն բաժանեա
 և միշտ վերջին հնգին, թէ ի մէջ բառին իցէ և թէ ի վերջն, անձայն
 5 զիր զիր իւր սկիզբն, որչափ հնար իցէ, այսպէս՝ Թարգ-մա-նու-
 Թիւն, շշն-ջիւն, տրտն-ջիւն, չքա-ւո-րու-թիւն: Իսկ յորժամ մի
 ձայնաւոր կայցէ ի բառն թէ յառաջն, թէ ի մէջն, թէ ի վերջն, ինքն
 առնու զանձայնսն, որչափ և իցեն, և կատարէ նոքօք զբառն: Այս-
 պէս է արհեստ հնգիցն կազմութեան:
- 10 Աստի ուսցիա և զարուեստ գրադարձին ի յարհեստ գրչութեան:
 Զի յորժամ ի սպառուած տողին կատարի բառն և կամ բանն իսկ
 բովանդակի ի միւս տողին սկիզբն անկասկած դնելի է, զհետ գայ
 բանին սկիզբն, թէ ձայնաւոր իցէ առաջին զիրն և թէ անձայն, զի
 15 բառին և բանին սկիզբնն տիրապէս լինի և տողին սկիզբնն, իսկ
 եթէ մօտ ի սպառուած տողին կատարի բառ և մնայ երկու կամ
 երեք կամ ևս աւելի հնգովք իցէ և յոլովք են տառքն, այսպէս կշռել
 պարտ է. զի առաջին ձայնաւորին տացէ յանձայնից որչափ բառն
 հրամայէ գրով մի և երկուք, թէ հարկ լիցի, կամ գրով և կիսով եւա-
 20 նել քան զչափ տողին ի դուրս մինչև կապի հնգ, և միւս տողին
 սկիզբն անձայն զիր մի զիցէ սկիզբն հնգի և զձայնաւորն զհետ
 նորին անմիջոց: Եւ ի կարճոյ այսպէս իմա: Ամենայն զիր, որ
 սկիզբն իցէ հնգի, թէ ի սկիզբն բառին և թէ ի միջոցին, թէ ի վերջին
 հնգն, նա կարէ ի մէջ բառին լինել այլոյ տողին սկիզբն, յորժամ
 ի սպառուած տողին թերի մնայցէ բառն, վասն այսորիկ վերագոյն
 25 զարուեստ հնգիցն ցուցի, որպէս ի քերթողացն և յիմաստասիրացն
 է աւանդեալ, և ոչ որպէս այժմ առնեն անարուեստաբար, այլ
 իմաստնոցն աւանդելոյ, զոր և ուզոն յունաց ունի հաստատուն
 զարուեստ հնգիս: Վասն որոյ պարտ է զգոյշ լինել և զմիաւոր գիր
 ի բառէ կամ ի հնգէ ոչ յառաջին տողին ի սպառուածն դնել, այս-
 30 ինքն զհետագայ բանին առաջին զիրն, և ոչ յերկրորդ տողին սկիզբն
 զթերի բառին կամ հնգի մնացեալ մի զիրն, մանաւանդ զանձայն
 գիրսն նկատեսցես զգուշութեամբ շղենել: Իսկ եթէ բանին առաջին
 զիրն ձայնաւոր իցէ և ինքն միայն հնգ, որպէս՝ ա-ուաշ-խա-րու-
 35 պիլն թէ ի վերջս տողից երկու գրոյ տեղ կայցէ, ապա-աշխարու-

20 Դ շիւ՛ սկիզբն անձայն զիր մի զիցէ: 23 Դ այլս: 25 Դ իմաստասիրացն: 28 Ե
 հնգիցս: 32 Ե առաջի:

Յ Ա Ղ Ա Գ Ս Բ Ա Ն Ի

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. յաղագս բանի:

Պատ. Ամենայն արուեստաւորի սովորութիւն է, որ զպէսպէս նիւթսն յաղագս գործոյն հաւաքել: Որպէս և յոգնիմաստ արուեստաւորս
5 զգանազան մասունս բանի պատրաստեաց ի տառիցն, այսինքն ի գրոցն սկսեալ, այժմ կատարելութեան գործոյն սկիզբն առնէ, որ է բանն, որպէսզի ցուցցէ և զսորայն մասունս և զայլ ևս կիրս ի սմանէ պաշտեցեալս, այսինքն ի սմանէ յառաջ եկեալ շահն և օգուտն:

10 Հարց. Վասն է՞ր ասէ. բան է հետեակ բառի շարադրութիւն՝ ըդտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով:

Պատ. Բանն է, որ հետեւի բառի, այսինքն զհետ երթայ բառից շարադրութիւն, այսինքն յորժամ շարեւ զտառսն և յարեւ ի միմեանս, վանդ կամ փաղառութիւն լինին, և յորժամ զվանդս շարադրեւս,
15 բառ լինին, որ է մի խօսն առանձինն կամ անուն, կամ բայ, կամ այլ մասունք բանի: Եւ յորժամ զբառսն կարգեւ շարադրելով զհետ միմեանց, լինի բան կատարեալ, ինքն յինքեան յայտնելով, այսինքն բացերեկցուցանէ զտրամախոհութիւն, այսինքն զխորհուրդ և զզօրութիւն բանին կատրեալ և հաւանական առնէ լսողացն: Այն
20 է, որ ասէ, թէ բան է հետեակ բառի շարադրութիւն, զտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով:

Հարց. Վասն է՞ր ասէ. և մասունք են նորա ութ. անուն, բայ, ընդունելութիւն, յօդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ:

Պատ. Սոքա են ութ մասունք բանին, զոր սոքօք կատարի տեսու-
25 թիւն բանին անսխալ, և ի յայտ գայ ստորակիտովն և աւարտեցե-

1 Դն չի՞ 3ԱՂԱԳՍ ԲԱՆԻ. Դ 3ԱՂԱԳՍ Ը. ԲԱՆԻՆ ՄԱՍԱՆՅ, 2 Դն չի՞ լրիւ տողը: 3 ԲԴն 3ամենայն. Ա պէսպէս 4 Դ արուեստաւոր, 5 Դ զանազան. Դն չի՞ բանի: 6 Դ սկիսըն: 7 Ա զստորայն վի՛ս. զսորայն. Դն ի մասունս. Դ այլ 12—13 Դ չի՞ այսինքն զհետ երթայ բառից շարադրութիւն: 13 Դն միմեանցս: 15 ԱԲն խօսս: 15—16 Ա կամ այլ մասունք բանի (կրկն.): 16 Դն շարադրով: 17 ԱԲԴն ինքեան: 18 Դն չի՞ զտրամախոհութիւն: 20 Դ չի՞ ասէ: 22 Դ Զ(վեց) վի՛ս. ութ: 24 Դն Եւ սոքա: 25 Դ ստորակէտովն. ԱԲԴն աւարտեցովն:

լովն և միջակիտովն. այսպէս՝ «Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն և ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա».

«Աստուած(ա) հաստատեաց(բ) զմարդ-ն(գ) յան-(դ) եղծութիւն(ե)

անուն բայ յօդ նախդիր ընդունելութիւն

5 և(զ) ի պատկեր(է) իւրոյ բարերարութեան արար զնա(ը)»:
շաղկապ մակբայ դերանուն

եւ այլ բազումք սոյնպիսիք, զոր թէ որոնես և գտանես, տեսանես ահաւասիկ զիա՞րդ յայտնեցաւ խորհուրդ և տեսութիւն բանին անսխալ, այսինքն անպակաս: Այն է, որ ասէ. մասունք են նորա ութ՝

10 անուն, բայ և այլն:

Հարց. է՞ր զսոսա մասունս ասէ և ոչ տեսակք, քանզի սեռն ի տեսակս բաժանի և տեսակն յանհատս և անհատն որպէս բոլոր՝ ի մասունս:

Պատ. Այդ այդպէս է: Բայց արուեստաւորս աստ փոխեաց զկերպ

15 բանին, քանզի առնու զբանն իբր բոլոր և բաժանէ ի մասունս, այսինքն յանուն և ի բայ և յայլսն, և մեծացուցանէ, այսինքն աւագեցուցանէ զմասն և առնու ի տեղ սեռի և բաժանէ ի տեսակս, այսինքն ի հետեւմունս, եթէ անուան հետեւմունս և եթէ բայի և այլոցն, զոր յետոյ ուսանելոց եմք:

20 Հարց. Վասն է՞ր նախ դնէ զանունն և զկնի նորա զբայն:

Պատ. Կամիմ աստ այժմ համառօտ, այսինքն կարճ ի կարճոյ յայտնել զութ մասնունս բանին:

Այսպէս. ԱնՈՒՆ է, որ յայտնէ զգոյացութեան սահման ի կար-

25 ցոութիւն մարմնական, ներշնչական, զգայական, կենդանի, բանական, մակացութեանց ընդունակ, իսկ միայն մարդ կոչելով յայտնեցաւ ամենայն բաղկացութիւն ընդ նմա. սոյնպէս և եզ, ձի և ամենայն գոյք, եթէ մարմնական և եթէ անմարմին, եթէ շնչական և եթէ անշունչ, եթէ զգայական և եթէ անզգայ, և ամենայն կեն-

30 դանի, եթէ բանական և եթէ անբան: Ամենեքեան սոքա ընդ անուամբ անկեալ, այսինքն ի ներքոյ անուան անկեալ կան և անուամբ զատին և որոշին ի միմեանց և յայտնին միայն անուամբ, վասն այն նախ եղիր զանունն և զկնի նորին զբայն:

Դ միջակիտովն: 3—6 ԱՐԳԴԵ ճովնիմաստ տարբեր դասավորւոյուններ: 10 Բ շիֆ՝ անուն, բայ և այլն: 11 Ե շիԲ՝ Հարց. ԴՅ Վասն է՞ր 12 Բ անհատն. Դ և յանհատն: 13 ԴՅ մասուն: 14 Դ փոփեաց: 16 ԱՐԳ այլսն: 23 Բ գոյացութեան: 26 ԴՅ մակացութեան: 27 Գ շիԲ՝ և (եզ): 29 Գ անշունչ. Ա անզայ:

Հարց. Զի՞նչ է բայն:

Պատ. Բայ է, որ ղնդործութիւն և զկիրն և զժամանակն յայտնէ, որդան ասել Դաւիթ զհացն առաւ և կերաւ երէկ կամ այսօր: Տես և միտք դիր աստ, քանզի Դաւիթն և հացն անունը են, առաւն և կերաւն, երէկն և այսօրն՝ բայք, այսինքն առաւն ներգործութիւն և կերաւն կիր, երէկն և այսօրն ամանակ: Սոյնպէս բազում են ի խօսս, քանզի անուն ղգոյացութիւն յայտնէ առանց ամանակի և բայն ղամանակն և ղամենայն պատահմունս նորա. վասն այն նախադասէ ղանունն և ղկնի նորա զբայն:

10 Հարց. Զի՞նչ է ընդունելութիւն:

Պատ. Ընդունելութիւն լսի, այսինքն իմանի, անուն և բայ խառնեալ, քանզի բառս այս ունի խառնումն յանուանէ և ի բայէ, եթէ անունն վայելչական կրիւք է ունակացեալ, այսինքն բարի և վայելուչ կիր ունի, ընդունելութիւն բառին պատուեն, այսպէս՝ զովեալ, երանեալ, օրհնեալ, բարեբանեալ, ճոխացեալ, փառաւորեալ, պերճացեալ, զարդարեալ. քանզի սոքա և սոյնպիսիք ամենեքեան ընդունելութիւնք են և են վայելչական բառք: Իսկ թէ անվայելչականագունիւքն, այսինքն եթէ վատ է կիրքն և դործն, զնա պարսաւանաց բառիւք եպերեն, այսպէս՝ պարսաւեալ, եպերեալ, թշուառացեալ, նզովեալ, եղծեալ, անարգեալ, յետնեալ և այլք սոյնպիսիք ամենեքեան ընդունելութիւնք են և են նախատանաց բառք: Վասն այն ասէ. ընդունելութիւն է բառ ընդունական բայից և անուանց յատկութեանց:

Հարց. Զի՞նչ է յօղն:

25 Պատ. Յօղն կցումն ասի, սոյսինքն որ յօղեալ միանայ գիր յանգի, այսինքն ի վերջ անուան կամ բայի, և ցուցանէ զմերձաւորն կամ զհեռաւորն և կամ ղդէմս կամ ղթիւն: Այսպէս. զմերձաւորն, յորժամ ասես մարդս և զհեռաւորն, յորժամ ասես մարդն, և մարդդ առ ով որ խօսիս, և յայտնէ զերիս դէմս. մարդս՝ այս, մարդդ՝ այդ, մարդըն՝ այն, և ղթիւն այսպէս. եղբայր, որ է եղական, եղբաւրք, որ է

2 Ե լիք՝ և զժամանակն: 3 Դ երեկ, Ա էրէկ: 4 Դ քեզ ի փխ. քանզի: 4—5 Ա լիք՝ առաւն և կերաւն, երէկն, և այսօրն՝ բայք, այսինքն: 5—6 Գ չիք՝ բայք, այսինքն առաւն ներգործութիւն և կերաւն կիր, երէկն և այսօրն ամանակ: 7 Դ քան. Բ ղգոյութիւն: 9 Գ բայն: 10 Ա ընդունելութեան: 12 ԳԴն անուանէ: 13 Գ ունականացեալ: 14 Ա ղայսպէս: 15 փառաւորեալ: 16 ԳԴ չիք՝ զարդարեալ: 17 ԳԴն փառք: 17—18 Ե անվայելչականաբունիւքն: 18—19 Դն պարսաւանեաց: 19—20 Ա թուառացեալ, Ե թշուառացեալ: 20 Ան նըզովեալ: 21 Գ ամենեան. Գ ընդունելութիւն: 24 ԱԲԳ և յօղն: 25 Դն ասէ. Գ չիք՝ այսինքն: 28 Գ հեռաւորն: 29 Գ չիք՝ որ. ԱԳԴն խօսի: 30 Ա եղայրք, ԲԴն եղբայրք:

բազմատրական. սոյնպէս և այլքն որպէս՝ հայր-նարք, աստուած-
աստուածք, տէր-տէրք, և բայք՝ որդան զնամ, զնաս, զնայ, զնամք,
զնան: Այդ է, որ ասէ. յօդ է մասն բանի հոլովական:

Հարց. Զի՞նչ է դերանուն:

- 5 Պատ. Դերանունս թերանուն լսի կամ տիրանուն կամ փոխանուն,
որպէս յորժամ թողլով զանունսն և ասել ես, դու, նա, մեք, դուք,
նոքա, սոքա, դոքա, որ են սոքա նախագաղափար, իսկ իմ, քո,
նորա, սորա, դորա, մեր, ձեր, նոցա, սոցա, դոցա. ածանցք են սո-
քա. իմոյ, քոյոյ, նորայնոյ, մերոց, ձերոց, նոցայց. ածանցիցն

- 10 ածանցք են սոքա:
Հարց. Զի՞նչ է, որ ասէ նախադրութիւն:

- Պատ. Նախադրութիւն առաջադրութիւն ասի, որ ըստ ինքեան ոչ
ինչ նշանակեն բայց դնին նախերգանք այլոց մասանց, զի յոր-
ժամ զբանն ճոխացուցանել կամիմք, հեզ ինչ փոքրիկ նախ առաջի
15 դասեմք, որպէս յորժամ ասեմք արտածայնեալ, շարածայնեալ,
ներգործեալ. արդ՝ ձայնեալն և գործեալն խօսք են, ի յընդունելու-
թեան բառիցն են և իր յայտնեն, այսինքն բան, իսկ արտն և շարն
և ներն հեզ միայն, այսինքն սոսկ, որ ոչ ինչ խորհուրդ և ոչ յայտնէ
իր, ինքն միայն ըստ ինքեան: Բայց դժոխալուր, այսինքն դժ-
20 ուարալուր առնէ զասացեալսն, որզան՝ շարայարեալ, շարամանեալ.
տես զի շար-ն նախդիր միայն է, իսկ զայլն իւրում տեղին ուսցիս
երկար:

Հարց. Զի՞նչ է մակբայն:

- Պատ. Մակբայն կրկնաբայ ասի կամ վերնաբայ, այսինքն բայ ի
25 վերայ բայի, որ ունի սոսկ ինչ նշանակ ժամանակի, որպէս որ ասի
իւրաքանչիւր, միանգամայն, վաղվաղակի, նախավաղ և այլ սոյն-
պիսիք, զորս ի տեղի իւր ուսցիս:

Հարց. Զի՞նչ է շաղկապն:

- Պատ. Շաղկապն ասի, որ զօրէն սօսնծոյ, այսինքն իբրև զսօսինձ
30 ամրացուցանէ և յեռէ, այսինքն կցէ, շաղէ և կապէ զմիտք ընդ
միտս, զբան ընդ բանս, զձայն ընդ ձայնս, որ են սոքա. և, իբրև,

1 Դն շիֆ՝ որպէս. Դն հայրք, Գ հայք: 2 Ա որ է զան. Գ գնաք փխ. գնամք: 3 Ա գնայնք.
ԱԳ Արդ. ԱԳ շիֆ՝ է (որ): 5 Ա շիֆ՝ Պատ.: 6 Բ յորժամ որպէս ասես թողլով զանունն (շա-
րադ.). ԳԱ ասէ: 7 Գ շիֆ՝ որ են սոքա: 8 ԱԳ ածանց: 9 ԱԳ նորայնոց. Բ մերոյ, ձերոյ.
Դն նոցայն: 11 ԱԲ շիֆ՝ որ ասէ: 12 ԳԴն առաջադասութիւն. Ա որ ինչ: 14 Ա հէզ: 15 Գ
դասեմ. Գ շիֆ՝ շարածայնեալ: 18 Դն շիֆ՝ հեզ միայն, այսինքն սոսկ: 20 Ա ասացեալն
Գ զասացեալն: 21 Գ տեսցից փխ. ուսցիս: 24 Դ կրկնաբայն: 26 Դն շիֆ՝ իւրաքանչիւր:
29 Ա սոսնծոյ, Գ սօսընծոյ, ԲԴն սոսնծոյ:

թէ, եթէ, դի, կամ, ոչ, մինչ, քան, որպէս, որքան, որչափ, իբր, ապաք ցապաք, ապաքէն, ուրեմն, ումեմն, չէ, չե ևս, մինչ այն, որչափից, որքանից, այլ, բայց, մի, զոր, զոր ոչ, սոքա են գրոց բանից շաղկապ:

- 5 Ահա այսք են զօրութիւնք մասանց բանին, զոր ասաց թէ բանի մասունք են ութ. անուն, բայ, ընդունելութիւն, յօդ, դերանուն, նախդիր, մակբայ, շաղկապ, զոր համառօտ աստ ասացաւ, հսկ զբովանդակ բացատրութիւն սոցին ի կարգի քննելոցս տեսցուք:

1 Դ՛ն խ՛ք՝ քան որպէս, որքան, որչափ: 8 Ա՛ն զբովանդակն, Գ բովանդակ. Գ բացադրութիւն:

3 ԱՂԱԳՍ ԱՆՈՒԱՆ

Հարց. Վասն է՞ր ասէ. անուն է մասն բանի հոլովական:

Պատ. Կամի իմաստասէրն, որ զբնութիւն անուան քննել, վասն որոյ և սահմանաւ որոշէ, որով ի բայէ և յայլոց մասանց բանին

- 5 զատուցանէ: Քանզի անուն մասն է բանի, և զի յովով են մասունք բանի, բայց զսա հոլովական ասէ, այսինքն թաւալական, որզան ուղղական՝ Աստուած, սեռական՝ Աստուծոյ, տրական՝ ի յԱստուած, առաքական՝ Աստուծով, հայցական՝ զԱստուած, կոչական՝ ո Աստուած:

- 10 Հարց. Վասն է՞ր ոմանք ասեն. անուն է մասն բանի, որ նշանակէ զգոյացութիւն որակութեամբ:

Պատ. Բազում անգամ ասացաք, թէ անուն ի ութ մասանց բանին է, և թէ զգոյացութիւն ցուցանէ սահմանաւ, որպէս՝ մարդ, ձի կամ հոգ, ջուր, օդ, հոտ, և որակութեամբ ասելովն որոշէ ի դերանունու-

- 15 թենէն, զի դերանուն զգոյացութիւն որակութեամբ ոչ նշանակէ:

Հարց. Զի՞նչ է որակութիւն:

Պատ. Որակն ի տաս ստորոգութեանցն Արիստոտելի է, և սահմանաւ ոչ ծանուցանի, այլ ի տեսակս բաժանելով ի յայտ գայ: Բայց աստ սակաւ ծանուցից վասն որակի: Ըստ զգայարանաց որակ ասի,

- 20 զոր աշօքն տեսանի, եթէ գոյնք և եթէ ձևք, և զոր ականջօքն լսի՝ ամենայն ձայնք, և զոր ռնգօքն հոտոտի՝ ամենայն հոտք, և զոր ճաշակելովքն ախորժի՝ ամենայն համք, և զոր ձեռօքն շոշափի՝ ամենայն շոշափելիք, այսինքն ծանր և թեթև, պինտն և կակուղն, ջերմն և ցուրտն, սուրն և գուլն և այլ կիրք մարմնոյն՝ հիւանդու-

- 25 թիւն և առողջութիւն, և հոգոյն՝ շարութիւն և բարութիւն, այլ ամեն-

1 ԱՐԳԴԵ ՀԻՖ՝ ՅԱՂԱԳՍ ԱՆՈՒԱՆ, 3 Գ իմաստասէր: 4 Գ այլոց: 5 Բ յանուն: 6 ԲԳԵ ՀԻՖ՝ ասէ. ԱԴԵ թաւական: 7 ԴԵ ի աստուած, Գ յաստուած: 8—9 Գ ուլ աստուած: 10 Գ բանին: 14 ԱՐԴԵ յօդ. Գ ի դերանունութենէն: 15 Գ զգոյութիւն. Ա որ փխ. ոչ: 16 ԱԲ Եւ զի՞նչ: 17 Ա ստորոգութեանց ստորոգութեանց (կրկն.). Ա Արիստոտելի: 20 Գ ՀԻՖ՝ և (եթէ): 21 Գ հօտոտի: 22 Ա շոշարի, Գ շոշափին: 23 Ա շոշարելիք: 24 Գ մարմնոյ: 25 ԱՐԴԵ հոգոյն. Դ շարութիւնք:

այն տեսակը և մասունք սոցին, զոր թէ կամիս ի «Ստորոգութիւնսն Արիստոտէլի», յորակին ճառին ուսանիս զբովանդակն: Եւ այն, որ ասէ, անուն է մասն բանի, որ նշանակէ զգոյացութիւն որակութեամբ, քանզի հռոմ գոյացութիւն է և ունի որակն՝ սեռութիւն և ցրտութիւն և շորութիւն, և յորժամ թէ ասես՝ հռոմ, յայտնեցաւ գոյացութիւն և որակն ի միասին, նոյնպէս և ջուրն գոյացութիւն է, կայ որակութիւն ի նմա՝ սպիտակութիւն և խոնաւութիւն և ցրտութիւն, սոյնպէս և օդն գոյացութիւն է և ունի որակ՝ կապուտ և խոնաւութիւն և ջերմութիւն, սոյնպէս և հռոմ ունի դեղնութիւն և ջերմութիւն և շորութիւն: Այսպէս և զամենեւեան իմացիր: Վասն այն ասէ, թէ անուն է մասն բանի հոլովական:

Հարց. Եւ այն զի՞նչ է, որ ասէ Արիստոտէլ. անուն է ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ամանակի:

Պատ. Սահմանէ զանունն, զի զատուցէ ի բայէն, զի նա, այսինքն 15 բայն, զի ամանակի յայտնիչ է և անունն ոչ, վասն այն ասէ, անուն է մասն բանի հոլովական և նշանակէ զգոյացութիւն որակութեամբ և ձայն նշանակ առանց ամանակի: Տեսանե՞ս, թէ ինչ գեղեցիկ զատուց զանունն յայլ մասանց բանին: Այս է սահման անուանն:

Հարց. Վասն էր ասէ. մարմին կամ իր նշանակելով, մարմին՝ որ- 20 զան քար, և իր՝ որպէս խրատ:

Պատ. Այսու դարձեալ որոշէ զնա ի դերանունութենէն, քանզի նա ոչ մարմին և ոչ իր յայտնէ այսպէս. իմ, քո, նորա դերանուն են որպէս ուսար, և յորժամ ասես իմ, ոչ յայտնեցաւ մարմին և ոչ իր, և յորժամ ասես թէ իմ քարն կամ իմ խրատն, ահա յայտնեցաւ 25 մարմին և իր, քանզի մարմին՝ որզան քար և իր՝ որպէս խրատ ասաց, քանզի քարն տեսանի աշօք և շօշափի ձեռօք, և ամենեքեան, որք տեսանին աշօք և շօշափին ձեռօք, նոքա մարմին են. վասն այն ասաց մարմին՝ որզան քար: Եւ այն, որ ասաց իր՝ որպէս խրատ, իսկ աստ անմարմին ասէ զիրն, և անմարմինն երկուս բա- 30 ժանի՝ ի զգայարանաց իմացմունսն և ի մտաց իմացմունսն: Զգայարանաց իմացմունքն են որպէս ձայնն, որ ականջօք լսէ և հաս-

1 Դ չի՞՛ թէ. Ա Ստորոգութիւն: 2 Արիստոտէլի. Բ որակին. Բ բովանդակն: 3 Դն յայտնէ. Վիս. նշանակէ: 6 ԱԳԴն կա: 8 ԱԲԳԴն յօդն. Ա չի՞ք՝ (ունի): 11 Դն չի՞՛ հոլովական: 12 Ա զոր. Դ նշանակեն: 14 Դն նայ: 18 Գ այլ: 21 Դ դերանունութեան, ԱԲ դերանունութենէ: 23 Դն յուսար: 24 Բ չի՞՛ թէ: Ե յայտնեցօւ: 25 Գ մզան վիս. որզան: 26—27 ԱԲԴն չի՞՛ ձեռօք: 30 ԱԲ ի մտաց իմացումս: 31 Դ չի՞՛ որ. Բ լսի:

- կանայ, այսինքն իմանայ, զոր խրատ ասաց, և հոտն, զոր ռնգօքն, այսինքն քթովն իմանայ, և համն, զոր բերանովն իմանայ, և այլ զգայական իմանալիքն և մտածական իմանալիքն անմարմինքն են, որպէս հրեշտակք և հոգիք, ևս առաւել վերագոյն պատճառն
- 5 ամենայն գոյից, այսինքն Աստուած, վասն այն ասաց անուն է մասն բանին հոլովական, մարմին կամ իր նշանակելով, մարմին՝ որզան քարն և իր՝ որպէս խրատ:
- Հարց. Զի՞նչ է, որ ասէ. հասարակաբար և հատկապէս, հասարակաբար որգունակ մարդ և յատկապէս՝ որգոն Պօղոս:
- 10 Պատ. Ամենայն անուն, ասէ, եթէ զգալի է և եթէ իմանալի, կամ ընդհանուր իրս նշանակէ, որպէս մարդ, որ ընդ բոլորէ է միոյ, այսինքն զազոն բովանդակ յայտնէ. այս է հասարակաբար կամ մասնական, որ է առանձինն իսկիւ, որպէս Պօղոս, յատկացեալ ի տեսակէն անհատն, այսինքն զատեալ ի յազգէն մի մարդ, որպէս՝
- 15 Պօղոս կամ Պետրոս կամ Դաւիթ և այլն: Քանզի ճշմարիտ հասարակ զազգականն ասէ բոլոր, որպէս՝ հրեշտակ, մարդ, ձի, կաքաւ, արջառ, հաւ, ձուկ և այլք, զի հասարակութիւն ընդհանուր է, և ըզյատկականն, որ է ինքնուրոյն, այսինքն միակ առանձին, որպէս՝ Գաբրիէլ, Մովսէսն, Դաւիթն, Պաղակ եղն, Խայտ եղն, Խայժակ ձին
- 20 և այլք սոյնպէս, որ յատկապէս անհատի անուն է և ոչ ըստ յոլովից: Այն է, որ ասէ. հասարակաբար՝ որգունակ մարդ և յատկապէս՝ որպէս Պօղոս:
- Հարց. Վասն է՞ր ասէ. և հետեւին անուան հինգ, այսինքն սերք, տեսակք, ձևք, թիւք, հոլովք:
- 25 Պատ. Գիտելի է աստ, զի սեր ասել զսեռն ոչ ասէ, որ տեսակս բաժանի, այլ զմի տեսակին զործն և զէզն և զչէզոքն, որգոն՝ այր, կին, տղայ. սոյնպէս և անասնոցն: Եւ տեսակք ասէ զայլմէ յառաջ եկեալսն, որզան յերկնէ՝ երկնային և յերկրէ՝ երկրային: Իսկ ձևք աստ զորպիսութիւն ասէ անուանց, որպէս՝ պարզ, բարդ և յարաստ զորպիսութիւն սուրբ՝ պարզ, սուրբ Դաւիթ՝ բարդ, սուրբ Դաւիթ մարգարէ՝ յարաբարդ, քանզի բարդեղն առաւելելն է, որ ի վերայ
- 30

1 ԱՐ ռնկօքն, Գ ընկունքն: 3 Գ մտացական. ԱԴԵ իմանալի: 6 Գ կամ կիր: 9 Գ Պողոս: 11 ԱՐ ընթհանուր, ԱՐ ըստ: 12 Գ զազոն, Ա յայտն: 13 Գ Պողոս, Դ Պօղոս. Ե զյատկականն, Ա յատկական: 15 ԴԵ և կամ (Պետրոս): 16 Գ կամ ձի: 17 ԱՐ ընթանուր, Դ ընդանուր: 19 Դ խաժակ: 20 Ա որպէս փխ. սոյնպէս: 22 ԴԵ Պողոս: 23 Գ անուանք: Ա սէրք: 25 Ա սէր. ԱՐԴԵ տեսակի: 27 ԴԵ զայլմէ: 28 Գ յերկնային: 29 Գ չի՞ բարդ:

միոյն միւս այլ ևս աւելես և յարաբարդելն, որ ի վերայ երկուքին
միւս այլ ևս աւելես: Այդ է, զոր ասելոց է, թէ ձեք երեք. պարզ,
բարդ, յարաբարդ: Եւ թիւք զհամարս ասէ, որ թուես, որպէս՝ մէկ,
երկու, երեք, և զոր ասելոց է յիւրում տեղին, թէ թիւք երեք՝ եղա-
5 կան, երկուորական, յոգնական, որդոն՝ Պետրոս, Պետրու, Պետ-
րոսք և այլքն: Եւ հոլովք զշրջումն ասէ, զոր ի վերոյ ասացաք և ի
վերջոյ ասելոց եմք, այսինքն զհոլովս անուանց, հիւբար՝ Դաւիթ,
Դաւթի, Դաւիթ, Դաւթով, զԴաւիթ, ի Դաւթէ, ով Դաւիթ, զոր ասէ
ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, պատ-
10 ճառական, հոշական:

Սորա են, որ ասէ, հետեւին անուան հինգ. սերք, տեսակք, ձեք,
թիւք, հոլովք, զոր կարճ աստ ծանուցի, այլ իւրաքանչիւր ճառի
ուսանիցիս զբովանդակն:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. և են սերք արական, իգական, չէզոք:

15 Պատ. Զայրն և զէգն և զչէզոքն անուամբ որոշել ի միմեանց, զոր
ի յունին և ի հռոմայեցին լիով է և յատուկ անուն արականին և
իգականին և չէզոքին: Քանզի յունացն, որք յի սկզբմունս ունի ով,
արականք են, և որք ունին ի իգականք են, որք ունին առ չէզոք են,
որդան՝ ով այլ արական, ի այլայ իգական, առ իաժէ չէզոք է,
25 այսինքն սուրբ այր, սուրբ կին, սուրբ տղայ: Ունին և այլ նշանս
ի վերջն անուանց գրով մի կամ վանդիւ մի:

Հարց. Եւ ո՞րք են հռոմայեցւոցն:

Պատ. Սորա են. հիզան՝ ուս, ա, ում. ուս՝ արական, ա՝ իգական, ում՝
չէզոք, որդան ասել ալպուս, ալպա, ալպում: Զսոսա ի պատահա-
30 կան անուանս ասեն, իսկ էականս որդունակ՝ իֆ, էֆ, օֆ յի առաջս
անուանց. իֆ՝ արական, էֆ՝ իգական, օֆ՝ չէզոք:

Հարց. Եւ հայոց ո՞րք են յանգի անուանց նշանակիչ արուաց և իգաց
և չէզոքաց:

Պատ. Ի հայոց լեզուս այսպէս. որ յառաջսն կամ ի վերջսն անուանց
35 գտանին մի վանդիւ նշանակիչք արականաց և իգականաց և չէզոք-

1 Գ ի միոյն. Ա միւս. Բ չիֆ՝ այլ. 1—2 ԱԴն չիֆ՝ և յարաբարդելն, որ ի վերայ
երկուքին միւս այլ ևս աւելես 2 Ե բարդ 3 զհամարսն 4 Դն ասէ վիս. ասելոց է. Գ չիֆ՝
թիւք: 5 Գ երկրաւորական. Ե յոգնական: 7 Ա հոլովս ուղական: 13 Դն ուսանիս:
14 Ա սէրք: 15 Դն զէնքն. Ա չիթ՝ ի. ԴԴ և զոր 16 Գ հռոմայեցիսն. Բ արկանինք և իգա-
կանինք: 17 Դ որ. Գ ի վիս. յի: 18 Գ արանք. Գ յիգականք: 19 Դն իսայիայ: 19—20 Դ
տիաժէ: 20 Գ չիֆ՝ է, Դն են վիս. է: 21 Բ ի վերջի: 22 ԱԳ հռոմայեցոցն, Դն հռոմայե-
ցոցն: 25 ԱԳ էականն, Դն էականսն. Դն առաջ 26 Դ էք իրի. օք: 28 Դնձ չէզոքաց: 29 Ա
չիֆ՝ կամ ի վերջսն: 30 Զ վանկիւ. Դ արականի, Ե արականք, Զէ՛Ը արական. Ան չէզոքայ:

- քաց սակաւք են՝ որդան՝ այ կամ ծօ արկան, քայ՝ իգական, տղայ՝ չէզոք: Դարձեալ ի վերջս անուանց ուլ, ունի, դուխտ, քանզի ուլ՝ արական, ունի իգական, դուխտ՝ չէզոք, որդան՝ խոսարով, խոսարովունի, խոսարովիդուխտ: Դարձեալ. ընդ քեզ եմ՝ արական, այ դու իգական, աղէ լսէ՝ չէզոք: Բայց գիտելի է, զի հայոցս ճապաղ և ցրիւ է և ոչ փակեալ մի վանդով արական և իգական և չէզոք, այլ յատուկ և առանձին կոչին արականք՝ հայր, որդի, ուստր, համբակ, կտրիճ, և իգականք՝ մայր, ճաւաղեթ, դուստր, աղջիկ, իսկ չէզոք որդոն՝ տղայ, մանուկ, զաւակ, ժաւանգ, դիւցիկ, ստնդեաց, տարրախորշ, 10. փրզունդ, հարազատ: Նոյնպէս և այլք ի կենդանեաց և ի տնկոց ունի զայս նշանակութիւն՝ որպէս՝ ցուլ, կով, մողի կամ հորթ - և զանց են սորա-, և խոյ, մաքի, շիշակ, գառ - սորա ոչխարաց են-, և քօշ, այծ, ուլ, բոռիտ - սորա այծուց են-, յովտակք կամ այդրր, մատակ, քուռակ - սորա ձիոց են-, և շուն, քած կամ քենթ, լակոտ-սորա շանց-, 15 և որձ առիծ, մատակ առիծ, կորիւն առիծոյ-սորա առիծուց-, և որձ արշ, մատակ արշ, արշթօթօթ-սորա արշոց-, և որձ ուղտ, էգ ուղտ, ուղտակիղեռ-սորա ուղտուց են-, և աքաղաղ, հաւ, ձագ, կամ խօսող, վառեկ, շրլթօն ձագ - սորա հաւուց-, և պապի, մարի, ձագ՝ հասարակ ամենայն թռչնոց ասի:
- 20 Հաւց. Եւ ո՞րք են ի դոցանէ արականք և իգականք և չէզոք: Պատ. Եթէ կամիս, փաղանունաբար ծանուցից քեզ սակաւիկ մի: Այսպէս. արջառոցն արականքն սորա են. եղ, եղջերու, խաշնակ, փոյ, և իգականքն՝ կով, եղ, երինջ և չէզոքն՝ մողի, հորթ: Եւ ձիոցն արականքն սորա են. յովտակ, նժոյզ, փահլ, երիվար, գեղազատ 25 և իգականքն՝ մատակ, զամբիկ, ճայիկ, զոր ճակ անուանեն, այսինքն կոչեն, և չէզոքն՝ որպիսի՝ քուռակ, բաղահատ, մատաղածի, խեշակ, դզի, բոշոյ, անդրաւար, փալանիկ: Եւ ոչխարացն արա-

1 Ձ քա. Գձէ՛լ տղա 2 լ շի՛ք՝ քանզի ուլ՝ արական, ունի՛ իգական, դուխտ 4 լ խոսարովիդուխտ. լ էմ: 5 Դնէ՛ հայոց. Դ ապաղ, լ ճաղապ: 6 Ձ վանիկ է: 7 Զէ՛լ անձին. Բ արական. Գ համակ. Դ կարիւն: 8 Դձ՛լ աղճիկ: 9 Գ դիւցիք, Դ դիւցիկ. ԱԲԳԴԵ ստնդիւց, Դն ստնդիւց, Զ ստնդիւց: 10 Դն փրզուն, Զ փրզունդ. Զ հազատ 11 Դն շի՛ք՝ կամ. ԱԲԳԴն հորդ: 12 Բ և մաքի. Զ գօշ: 13 ԱԲԴԵԶէ՛լ շի՛ք՝ բոռիտ. Գ յովտակք. Բ շի՛ք՝ կամ. Լ՝ մատակք: 14 ԱԲԴԵԶէ՛լ շի՛ք են. Դն կոտ փխ. լակոտ 15 Ե արխծ (քրդը տեղեւում): Լ՝ առիծու. Գ շի՛ք՝ սորա. ԱԶէ՛ առիծուց: 16 ԱԲԴԶէ՛լ առջ (քրդը տեղեւում). Դ քօթօթ առջ. Դն էք. 17 ուղտուկիղեռ, լ ուղտակիղեռ. Գ ուղտուց: 18 կօսող, Բ խօսող, Դ կօսող, Գձէ՛լ կօսող. Գ. կօսող, ճետ. Ա ֆառեկ, լ վառէկ. ԱԲԵ՛ հաւուց: 21 Դն սակաւ: 22 Գ արջոցն, Ե առջառոցն. Գ եղջուրու, Դն եղջիւրու. լ խաշնակ: 23 Գ գոյ փխ. փոյ. Դձէ՛լ իգականն, Ե իգականք, ԱԲԳԴն հորդ: 24 լ արեկանքն. Աձէ՛լ նժոյզ. ԲԴն քաղաղատ: 26 Գ մռնաղածի: 27 Բ խեշակ. Ա դզի արականք, Գ դզի. Բ փալանիք. Գ ոչխարարացն:

կանք սոքա են. խոյ, գոնշակ, վիդոն, դուար, մալ և իգականքն՝ մաքի, որոջ և չէզոքն՝ շիշակ, գառ: Եւ այծիցն արկանաց սոքա. քօշ, քաղ, նոխազ, բղսկ, և իգականացն՝ այծ, թալասմեղ և չէզոքացն՝ ալոշ, բուծ, ուլ: Եւ խողիցն արական՝ վարաղ, միաւոր, 5 իգական՝ խողամատակ և չէզոք՝ ջօթ, խոշորո: Եւ ուղտուց որձոց որգոն՝ որձ ուղտ, պէյսարաք, պօղուր և էգիցն՝ մատակ ուղտ, մայանայ և չէզոքաց՝ ուղտակոզեռ: Եւ առիւծոց արականն՝ որձ առիւծ կամ արու առիւծ և իգական՝ մատակ առիւծ և չէզոք՝ կո- 10 րին առիւծոյ: Եւ արջուց արական՝ արջ որձ, էգն՝ արջ մատակ կամ քայծ, չէզոք՝ արջքօթօթ: Եւ շանց արական՝ շուն որձ և իգա- կան շուն քայծ և չէզոք՝ շուն լակոտ: Բայց դայն գիտելի է, դի կարելի է կոշել ամենայն գազանացն այս ձևովս, դոր շանց ասա- ցաւ, կարելի է և կոշել ամենայն գրաստից սմբակաւորացն, որ- պէս վասն ձիոց ասացաւ, կարելի է և կոշել ամենայն եղջիւրաւոր 15 և կճղակաւոր անասնոցն, որպէս արջառոց ասացաւ:

Հարց. Եւ վասն վայրի էրէիցն զի՞նչ ասես:

Պատ. էրէից մաքրագունիցն հասարակ արականացն շիկերեայ և իգականաց՝ եղունք, այծեմունք և չէզոքիցն՝ կրկիսօք: Նոյնպէս 20 ընտանեաց ոչխար և եզանցն արջսռ, դարձեալ օդեաց և այծից սեռաբար անուն է պատրուակ:

Հարց. Զի՞նչ ասելի է վասն տանու հաւուցն:

Պատ. Արական՝ քարաղաղ կամ խօսող, շիֆուն և իգականաց՝ մարի, վառեկ և չէզոքն՝ ձագ, բարովդորք և բազէի արական՝ ճուռակ և շահենից և գաւազի՝ քուպիճ, իսկ ամենայն որսական հաւուց՝ 25 կանգ: Բայց դայն գիտացիր, զի կարելի է ըստ ձևոյ տանեցի հա-

1 ԱԳԴԵԶԷԼ շիֆ՝ են. Գ վիգոն, գուար: 2 Ը որոշ. Դ արականք սոքա են: 3 Բ նօխազ. Բ իգականքն. Ա թալասմեղ, Գ թալաւծեղ. Բ չէզոքն: 4 Բ արականքն սոքա են: 5 ԱԳԶԷ էգ, ԴԵԷ էք վիլ. իգական. ԳԶԷԼ խոզ, մատակ. Գ ուղտոց: 6 ԴԵ պէյսաքար, ԶԷԼ պէյսա- րազ. ԱԴԵԶԷԼ էքիցն: 7 Գ մայանա, Դ մայեայ, Զ մայնա. ԱԴԵԶԷԼ չէզոք. ԱՐԳԴԵ ուղտա- կոզեռ, Ը ուղտակիզեռ. Ե արիւծոց. Ը առիւծոյ: 8 Դ շիֆ՝ կամ արու առիւծ. Գ էգն. ԱԸ շիֆ՝ և (չէզոք): 9 Գ առիւծ. Դ առիւծոց, Ե արիւծոյ. Այստեղ ԶԷԼ ձեռագրեմք ունեն 4 Կորին առիւծոյ և այլն: Դարձեալ փառաւորայն (Ը փաղառ ձայն) ասի ի պարսիկ լեզվէն (Ը լեզվեն)» և ընդհատվում են մինչև վերջ: ԱՐԴ առջ...առջ: 10 Գ չէզոգն. ԱՐԳ քոթօթ: 11 Գ քած շուն քած (կրկն.). ԱԴԵ չէզոքաց, Գ չէզոքիցն. Ա գիտա- ցելի է, Գ գիտացես: 14 Գ ձիոյ. Գ եղջուրաւոր: 15 Գ արջառոց, ԴԵ առջառոց: 16 ԳԴԵ շիֆ՝ վասն: 17 Ե մաքրագունիցն. ԴԵ ամենայն արականեացն: 18 Գ զրկիակք, ԴԵ կրկիսոք: 19 Դ առչառ, Ե արչար: 20 սերաբար, Ե սերաբար: 22 ԱՐ շիֆ՝ Պատ. ԱՐԴԵ շիֆ՝ կամ. Ա կոսող, Գ կօսող, ԴԵ կօսող. Բ իգական, Գ իգացն. ԱԳԴԵ մայրի: 23 Գ բարովդորք: 24 Գ շահենից. Գ գազի. Ա հաւուց: 25 Դ տանիցի:

ւուցն կողել զամենայն հաւականաց զարականքն և զիգականքն և չէզոքն:

Հարց. Վասն բուսոց զի՞նչ:

- 5 Պատ. Ծառ՝ արական, թուփ՝ իգական, իսկ խոտ, խաւարտ և բանջար չէզոք: Եւ ծաղկանցն, որոց պինտ իցէ բազուկն իբրև զվարդի, արականք են, և որոց կակուղ իցէ իբրև զշուշանի, իգական է, և որոց միջակ իցէ իբրև զրահանի, չէզոք է: Սոյնպէս և զամենայն խոտ և զամենայն փայտ ծանիցես:

- 10 Դարձեալ նշանակութիւն է արկանաց՝ եպերակ, մոլի, պղծագործ, վիրագ, արուազէտ. սոքա արուամուլաց և անաստուածիցն: Եւ զարձեալ շիտիտի, տապղէ, իգամոլ արանց ասի, որ ի հետ կանանց պղծին, իսկ իգականք՝ վաւաշ, բորբորիտոն, կաթոտ, բող. սոքա պոռնիկ կանանցն ասի անուն:

- 15 Այսպէս և զամենեսեան, որ ինչ միանգամ էակք են, նշանակութիւնք են նախ քան զանունն գովասանութեամբ կամ սլարսականօք ճանաչել սահմանաւ, որպէս սակաւօք յայտնեցից. ոչ ասեմք ծառ, սակայն գովասանութեամբ ծանուցանեմք որպիսի՝ առոյգ, սաղարթացեալ, գեղեցկուղէշ, սոյնպէս բուսոց՝ դալարավայր, կանաչացեալ՝ ծաղկաւէտ, և ջուրց՝ քաղցրաճաշակ, կարկաշասահ, ականակիտ: Ահա առանց բնական անուանն ծանոցց
- 20 զիրն, այսինքն զծառն և զդրախտն և զշուրն և այլն զամենայն սոյնպէս:

- Հարց. Վասն է՞ր ասէ. և են ոմանք, որ յաւելուն ի սոսա այլ ևս երկու. հասարակ և մոկաւասար: Եւ է հասարակն ձի, շուն, իսկ
- 25 մակաւասարն՝ ծիծառն, աքիս:

- Պատ. Վասն սերին ասէ, զոր յառաջագոյն ասաց, թէ սերք են երեք, և այժմ ասէ. և հին ոմանք, որ յաւելուն ի սոսա այլ ևս երկու, որ լինին հինգ, այսինքն արական, իգական, չէզոք, հասարակ և մակաւասար: Եւ այն, զի ասէ, հին ոմանք, ոչ վասն իւր ասէ ար-
- 30 ուեստաւորս, այլ վասն այլ ումեմն եթովպացոյ՝ Սինա անուն, զի

1 Դն ամենայն: 3 Գ բուսոց. Բ զի՞նչ է: 4 Դն չի՞ք իսկ. Բ բանջոր: 5 Եւ պազուկն: 5—7 Բ իբր...իբր: 6 Բ արական. ԱՌԴն չի՞ք է: 7 Ա զըրահանի, Բ զըրահանի: 10 Դ արուղետք, Ե արուազետ. Ա արուայմուլեաց, Բ արուամուլեացն, Դ արուայմուլաց: 13 Ա կամացն փխ. կանանցն: 14 Գ ամենեսեան, Դն յամենեսեան. Դն էաքն: 15—16 Գ պարսաւօք: 16 Գ որ փխ. որպէս: 18 Ա սաղարդացեալ. Ա գեղեցկուղէշ, Դն գեղէցկուղէշ: 19 Գ կանաչացեալ: 21 Դն չի՞ք այլն: 23 Բ յօեւուն: 24 Բ մակաւասարն: 26 ԱԴն առաջագոյն: 27 Գ յայժմ. Դ այլ ևս երկու: 28 ԴԴն լինեն: 29 Դն իւրս: 30 ԱՌ Եթովպացոյ, Գ եթիովպացոյ:

- վասն նորա ասեն, թէ, մինչ էին իմաստասէրքն ի քննութիւն գոյից, և նպ ասաց թէ, հն ոմանք ի գոյիցս, որ ունին արական և իգական նշան յայտնի, զոր մարդիկ դիւրաւ կարեն ընտրել և որոշել ի միմեանց, որպէս՝ զձի և զշուն, զոր ասէ հասարակ, և, են,
- 5 որ ոչ ունին յայտնի նշան արականաց և իգականաց և դժուարաւ ճանաչին, և են, որ բնաւ ոչ ճանաչին ի մարդկանէ, որպէս ծիծառն և աքիսն, զորս ասաց մականասար, վասն այն ասէ, և են ոմանք, որ յաւելուն ի սոսա այլ ևս երկու, որ լինի սերք հինգ, այսինքն արական, իգական, և շէզոք և հասարակ և մականասար: Բայց զի-
- 10 տելի է, զի յոյնք մականասար վասն ծիծառն և արծուի ասեն, իսկ հայք քննեալ զարծուի և գտին նշան արական և իգական, բայց ի ծիծառն և ի աքիսն ոչ երևին նշանք արական և իգական, իսկ ծիծառն և աքիսն իգական անունք են և արծուի և առիւծ՝ արական, աղանին և տատրակն իգական անուն:
- 15 Հարց. Վասն է՞ր ասէ. և տեսակք են երկու՝ նախագաղափար և ածանցական: Եւ է նախագաղափար, որ ըստ առաջին գաղափարին կոչեցաւ, հիբար՝ երկիր, և ածանցական, որ յայլմէ զսեռութիւն ընկալաւ, որպիսի՝ երկրային:
- Պատ. Նախագաղափար, այսինքն առաջին օրինակ կոչի, որ է նա-
- 20 խատիպ, որպէս՝ Աստուած, մարդ, երկին, երկիր, յօդ, ծով, և որ ինչ միանգամ անուն է ուղղական, նշանակիչ մարմնոյ կամ իրի, որպէս յառաջագոյն ասուցաւ: Իսկ ածանցական է, որ յէջն ունի զգոյութիւն, որպէս յԱստուծոյ՝ զաստուածայինս, ի մարդոյ՝ մարդկայինս, յերկնէ՝ երկնայինք, յերկրէ՝ երկրայինք, յօդոյ՝ օդա-
- 25 յինք, ի ծովէ՝ ծովայինք, խնձոր՝ խնձորի, սալոր՝ սալորի, տանձ՝ տանձի, վարդ՝ վարդենի, զգայարանք՝ զգալի, տեսում՝ տեսանելիք, լուր՝ լսելիք, հոտ՝ հոտոտելիք, ճաշակ՝ ճաշակելիք, շօշափումն՝ շօշափելիք: Նոյնպէս և սա. խնձորն նախագաղափար և խնձորին ածանցական: Սոյնպէս զամենայն զիտելի է, քանզի բա-

2 Գ արուական 3 ԱԴԵ դիւրեաւ 4 Բ զորս 5 ԴԵ ունի ԴԵ չի՞ յայտնի. Գ յարականաց և իգականս, ԴԵ արական և իգական 6 ԴԵ ի մարդկան 7 Ա առիսն. Ա չի՞ են 8 ԱՐԴԵ երկու, հասարակ և մականասար, այսինքն ի վերայ երեքին այլ ևս երկու (կրկն.). Դ սեռք. Բ չի՞՞ յայսինքն 10 Ա զի ոյնք 12 Գ ի նաքիսն. ԴԵ իգականք 13 ԱԲԳ անուանք 16 Գ Պատ. Եւ է... ԱԲԳ նախագաղափարին 22 Ա քառաջագոյն. էյէն, ԴԵ չէյէն 23 Գ ի մարդոյ 24 ԲԳ մարդկային. Դ չիք՝ յերկրէ երկնայինք 24—25 ԱԲ յաւայինք 25 Գ խոնձորի 25—26 ԱՐԴԵ տանձ, տանձի 26 ԴԵ զգայարանք 27 Բ հոտոտելի 28 ԴԵ չի՞ և սա:

դում են տեսակը ածանցացն և անբաւ, բայց թողլով զայլոցն և յատուկ զբանաւորիս բունն հհար ուսուցանել:

Հարց. Քանի՞ են տեսակը ածանցացն:

Պատ. Եւթն են:

5 Հարց. Ո՞րք են:

Պատ. Հայրանունական, ստացական, բաղդատական, գերադրական, փաղաքշական, յարանունական, բայածական:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. հայրանունական է, որ իսկապէս ի հօրէ ձեւացեալ է, իսկ պիտականապէս, որ ի նախնեացն, հիբար՝ Համազասպեան Մանուէլ:

10

Պատ. Ստույգ հայրանունականն է, որ ըստ հարազատ զաւակին յառաջ խաղայ, իբր թէ, նոյնպէս և զանունն դնել, այսինքն որպէս որդին ի հօրէ ծնանի և յառաջ գայ, նոյնպէս և զանունն որդւոյն ի հօրն անուանէն դնել, որդան զի թէ հօր անունն Համազասպ է և

15

զորդւոյն Համազասպեան կոչել, և թէ Մանեան՝ զնորա որդւոյն Մանուէլ, և թէ Գրիգոր՝ զնորայն Գրիգորեան, Արտաւազդայ՝ Արտաւազդեան, Վարդանայ՝ Վարդանեան: Եւ այն, զի ասէ, իսկ պիտականապէս ի նախնեացն, այսինքն թոռին անունն լինի միայն ի պապէն կամ յայլ նախնեացն և ոչ իւր հօրէն, այսպէս՝ Տիրանայ թոռին՝ Տիրանեան և խոսրովայ՝ խոսրովեան կամ յայլ նախնեացն, որպէս Ադամեան, Նոյեան, Սեմեան, Քամեան, Աբէթեան, Աբրահամեան, Յակոբեան, Իսրայէլեան, ի Հայկայ՝ Հայկեան, ի յԱրամայ՝ Արամեան, ի Քրիստոսէ՝ քրիստոսեանք: Այս <է>, որ ասէ. հայրանունական է, որ ի հօրէ կամ ի նախնեաց ձեւացեալ է:

20

25

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. և գաղափարք հայրանուանցն արականացն վեց, որգոն՝ յէնն, յէլն, յիթն, գէնն, նէնն, յակն, որպիսի՝ Սամեան, Մանուէլ, Մանիթ, Բաբգէն, Մանէճ, Արտակ:

Պատ. Գաղափար օրինակ է, որպէս ասացաւ և հայրանունական է, որ զհօր անունն ունի գաղափարն, և զհայրանուանցդ այսպէս ծա-

30 նիր, որպէս թէ անունն որդւոյն զառաջին վանդն ի հօրէն ունիցի,

6 Գ բաղդատական: 7 Գ յարանունական: 8 ԱԳԴԵ չի՞՞ որ ասէ. Գ հայրանունական: 10 Գ Մանուէլ, Գ մանուէլ: 11 Գ չի՞՞ Պատ. Գ հայրանունական, Գ հայրանունական: 11—12 ԱԴԵ առաջ: 13 ԱԴ որդւոյն. Ե ի հօրն: 14 ԱԳԴԵ անուն (դնել): 15 ԱԴԴԵ զորդւոյն. ԱԴԳԴ (զնորա) որդւոյն: 16 Գ Մանուէլ, ԴԵ Մանուէլ: 16—17 Գ Արտաւազատ Արտաւազատեան: 18 Դ թոռն: 20 ԱԴԴԵ խոսրովոյ. ԲԴԵ այլ: 21 ԴԵ սէմ. ԴԵ Աբէթեան: 22 ԱԴ Յակովբեան. ԱԴԳԴԵ իէլեան. Գ չի՞՞ ի Հայկայ: 22—23 Բ յԱրամեան: 23 ԱԴԳԴԵ չի՞՞ (Այս) է. ԱԴ չի՞՞ է: 24 ԱԴԳ ձեւանա: 26 Գ չի՞՞ որգոն: Գ յելն. ԳԴԵ նեճն: 28 Բ ասաց: 29 Դ և փիլ. որ. ԲԳ և գաղափարին. Բ զհայրանունն գաղափարն: 30 ԱԴ որդւոյն:

որզան՝ ի Բաբայ՝ Բաբգէն, ի Սամհայ՝ Սամհան և ի Մանայն՝ Մանուէլ, սոյնպէս և այլն:

Հարց. Վասն է՞ր ասէ. և է Գորդայիցն յինքեանց գաղափար յատկական, որպիսի՝ Մանայն:

- 5 Պատ. Գորդա կոչէ զԿորճայ լեզուն, զոր և ի յունին Դորացի անուանեն լեզու, իսկ գաղափար սորին յատուկ է այս Մանայն կամ թէ զքաջացն որդիք այդուիկ անուանեն ածանցականիւ կամ թէ ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խօսս, և փոխանակ Մանէն ասելոյ Մանայն ասեն, այսինքն ծոեն զլեզուսն ի հասարակաց խօսիցն և ի
- 10 Մանէն ասելոյ տեղն Մանայն ասեն:

Հարց. Գորդայք ո՞րք են:

Պատ. Կորճայք են, և է սա գաւառ, որ ելից Մոկաց առ Ասորեստանիւ, ընդ ստորոտով Կորդուաց լերինն, և ձգի մինչ և ի Փոքր Ախբակ, այսինքն ի Մոկաց բռնէ և երթայ մինչ ի յԱսորեստան Գորդայ լերինն Եթեկովն: Ամենայն բնակիչք տեղւոյն Գորդայք կոչին անուամբ լերինն: Եւ սոցա լեզուս կարի թիւրեալ լինի ի հայկաղանցս, վասն մերձ գոլոյն մարաց և ասորոց:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ և իգականացն չորք՝ նինն, յուշն, նուհին, նոցն, որգոն՝ Վարդենի, Մանանուշ, Տրդատուհի, Վարդոց:

- 20 Պատ. Նովին ձեռով ըստ հայրանուանցն երեկ գաղափար կոչեցեալ իգականացն ի հարցն, որգոն՝ ի Մանա հօրէ Մանանուշ դուստր, այն է, որ ասէ ի Մանայ՝ Մանանուշ, Ի Տրդատայ՝ Տրդատուհի և ի Վարդենայ Վարդոց կամ Վարդենի: Տեսանես զայն, զի արդ զարական և զիգական անուանց նշանակն ի վերջին վանդն կարգեաց:

- 25 Հարց. Վասն է՞ր ասէ. և զիտասջիբ զի ընդ կանանց ոչ պճնէր Հոմերոս զհայրանունական տեսակս, այլ համբակագոյնքն:

Պատ. Երկակի այս լսի. կամ թէ Հոմերոս զքաջացն ածանցական անուանս ոչ զնէր ի մարցն, այլ ի հարցն, կամ թէ Հոմերոս ոչ համարեցաւ արժանի զկառնայն կամ հարց և կամ մարց անուամբ

- 30 կոչել, այլ համբակագոյնքն, այսինքն մանկագոյնքն, որ են յետնոցա աշակերտեալքն, վասն կարեկցութեան ոչ զատուցանել ըղ-

2 Դն շիֆ՝ սոյնպէս և այլն: ԳԴն շիֆ՝ և. Ա. զորդաիցն: 5 ԳԴն Գորդայ. ԲԳԴն զԿորճայ: 6 Դ սորա: 13—14 Ա. Ախաբակ: Գ. Աղրակ: 14 Գ մնչ և փխ. մինչ ի: 15 Գ Եթեկովն, Դ Եթեհովն. ԲԴն տեղոյն. ԱԴ Դորթայք: 16 ԲԳ հայկաղանս: 18 ԲԳ. նուհին: 19 ԲԳ Մանուշ: 21 Դ շիք՝ դուստր, այն է, որ ասէ Մանայ, Մանանուշ: 25—26 ԳԴն Հոմերոս: 26 ԱԲԴ զհայրանունական: 27 Ա. զբանչացն: 28 Գ զնէ. Գ շիֆ՝ այլ ի հարցն: 29 Դ շիֆ՝ կամ հարց և: 31 Դ զատուցեալ:

նոսա, այլ ի հարցն անուանէ կոչել, թէպէտ և ոչ ի մարցն, վասն որոյ գաղափարքն եղեալ նորավարժիցն է և ոչ Հոմերոսի, ուստի այս սովորութիւն եղև դատաւորացս, զի զտղայսն հարանցն աւանդել և ոչ մարցն:

- 5 Հարց. Զի՞նչ է, որ ասէ. իսկ ստացական է, որ ընդ ստացիւքն ստորանկեալ է, ներքակ առեալ ի ստացողէն, որզոն՝ Դաւթեան երիվարն, արքունի պատմունճան, Պօղոսեան գիրքն:

Պատ. Ստացական անուն զայն սսէ, որ ստացուածին անունն ի ներքոյ անկեալ է ստացողին անուանն, այսինքն շրջապատեալ է ստացողին անունն զստացուածն, որզոն՝ Դաւթեան ձին կամ եզն կամ ածուքն, Պօղոսական գիրքն, այսինքն Պօղոսի գիրքն կամ տունն կամ քաղաքն կամ գիւղն և այլ սոյնպիսիք, քանզի ստացողին անուամբ յատկանայ ստացուածն:

- 10 Հարց. Վասն է՞ր ասէ. բաղդատական է, որ հասարակութիւն ունի եղ առ մու նմանասերս, որզոն՝ Դաւիթ արուորագոյն քան զՍաւուղ, և կամ միոյ առ բաղումս յայասերս, որպիսի՝ Դաւիթ արուորագոյն քան զգեթացիսն:

Պատ. Համեմատութեանց տեղեկութիւն ուսուցանէ, որ մի է ի վեց մասանց քերականութեան: Եւ այն, զի ասէ, հասարակութիւն ունի եղ առ մու, այսինքն հաւասարութիւն ունի մի առ միւս նման ազգիս, այսինքն որ երկուս ի մի ազգէն լինին, որպէս Դաւիթ և Սաւուղ, որ զոյգ քաջք էին և ի համեմատեալ և ի բաղդատեալ, այսինքն ի չափել և ի կշռելն Դաւիթ արուորագոյն քան զՍաւուղ, այսինքն Դաւիթ առաւելագոյն գտաւ քան զՍաւուղ, զոր ասէին, թէ Սաւուղ

- 25 եհար զհազարս և Դաւիթ զքիւրս: Եւ այն, որ ասէ, կամ միոյ առ բաղումս յայասերս, որպիսի՝ Դաւիթ արուորագոյն քան զգեթացիսն, զայն ասէ, կամ զմին ընդ բաղում այլ ազգաց բաղդատեալ, որպէս զԴաւիթ ընդ գեթացիսն արուորագոյն, այսինքն քաջագոյն գտաւ քան զնոսա, և զայն ի քերականութեանցն հինգերորդ մասին

- 30 տես, յոր ասէ համեմատութեանցն տեղեկութիւն:

Հարց. Այն զի՞նչ է, որ ասէ. և բաղդատականացն. գաղափարք են

3 ԱՅն գաղայն 11 Գ Պողոսական (միշտ այսպէս). ԳԴն կամ փխ. այսինքն 12 ԱՅն սոյնպէս 13 Ա զստացուածն, Ե զստացուածն 14 Գ բաղդատական. Գ չի՞ք՝ ունի 15 ԱԳ նմանասէրս, Դն նման սերս 16 Ա այլասէրս, Դ այլասերս 17 ԲԴն քաջ 23 ԱՅն չի՞ք՝ ի (կշռելն): 23—24 ԳԴն չի՞ք՝ այսինքն Դաւիթ առաւելագոյն գտաւ քան զսաւուղ 25 Ե զփիւրս 26 Դ այլասերս 26—27 Ե զգեթացիսն 28 Բ որ արուորագոյն. Գ չի՞ք՝ այսինքն քաջագոյն 29 Գ այլն, Դ զայն 30 ԲԳ որ 31 Գ բաղդատականացն:

երկու՝ -գոյն և -գին, հիբար՝ արադագոյն, յամրագոյն և -գինն որգոն՝ սաստկագին, ուժգին:

- Պատ. Օրինակ բաղդատականացն այսոքիկ են, յորժամ յերկուց ընթացողացն ասել զմին արագ և զմիւսն յամր, այն զսակաւ արագութիւն կամ ղյամրութիւն նշանակէ, և որ ասէ արագագոյն կամ յամրագոյն, սոքա զառաւելութիւն յայտնեն, և կամ երկու մին արմատիցն ասել, զոմն քան զմիւսն ուժով կամ անուժ, նա ըզսակաւ ուժեղ կամ զանուժն նշանակէ և յորժամ ասել ուժգին կամ անուժգին զառաւելն նշանակէ, սոյնպէս սաստիկն և սաստկագինն, 10 այսինքն արագագոյն, սաստկագին և ուժգին ամենայն իրօք առաւելուն իմանի, որպէս ասէ:

- Հարց. Զի՞նչ է, որ ասէ. և գերադրական է մակսաստութիւն միոյ առ բաղումս յարառոցեալ ըմբաղդատութեամբ, և գաղափարք են նորա երկու՝ նեղն որգոն՝ արագեղ, յամրեղ և նեղին որպիսի՝ սքանչելի, զարմանալի: 15

- Պատ. Գերադրական ամենևին առանց բաղդատութեան իմանի ծայրից ծայրքն, այսինքն զառաւելագոյն հեռագոյնն ի միմեանց՝ բարին և ընդիմակն նորին, այսինքն առաւելագոյն բարին նոյնպէս և չարն, յորժամ ասիցի սքանչելի, զարմանալի, այսինքն հիացմամբ ասէ զառաւել գերազանցութիւն, որ յոյժ առաւելութեամբ զքնաւօքն գերազանցեալ է, և հզոր ասաց մակսաստութիւն միոյ առ բաղումս յարառոցեալ ըմբաղդատութեամբ, լուծումն. մական ի վեր կամ կրկին լսի, և սաստութիւն խիստ առաւել իմանի, և յարառոցեալ՝ միշտ առեալ զայն ասէ, թէ գերադրական է, յորժամ զմին 25 առ բաղումս առեալ համեմատես լինի խիստ ի վեր և կրկին քան զնոսա ուժով կամ անուժ, զայն ուժեղ կամ անուժեղ, արագեղ կամ յամրեղ, զոր ի վերոյ ստացաւ:

- Հարց. Եւ այն զի՞նչ է, որ ասէ մեկնիւն Մովսէս. երկուս ըստ իմանալեաց, երկուս ըստ տեսանելեաց և ըստ միոյ յերկուց զգալեաց: 30

- Պատ. Երկու իմացող երկու ականջն և երկու տեսող երկու աչքն և

1 Գ արագագոյն, Բ յարադագոյն. ԱԳԴ յարմարագոյն: 3 Գ չի՞ Պատ. Գ և օրինակ. Բ երկուց: 4 ԱԳԴն ամր: 5 ԱԳԴն զամրութիւն: 6 ԱՐԳԴն ամրագոյն. Ա յայտնէ: 8 Գ չի՞ կամ (զանուժն). Բ ասեն: 9 Գ չի՞ անուժգին: 10 Գ յամենայն. Դ յառաւելուն: 12 Դ յմակսաստութիւն: 13 Ե յարարոցեալ: 14 ԱԴԵ չի՞ նեղն. Բ յարագեղ: 16 Ա չի՞ Պատ.: 20 ըզառաւել: 21 Դ յգերազանց. Դ յի՞ և. Դ յմակսաստութիւն: 22 Ե յարարոցեալ: 23 ԳԴԵ չի՞ և. Դ յսաստութիւն. Գ խիստ խիստ (կրկն.): 25 Դ յի՞ ի վեր. ԱՐԴԵ կրկին կրկին (կրկն.): 27 ԱԳԴն ամրեղ: 28 Ա ինչ: 29 ԲԴԵ երկուց: 30 ԲԴԵ իմանող. ԱՐԳ

տեսանող:

5 երկրորդեան միապէս լսին և տեսանին, և յորժամ բաղդատես ըզ-
 լսելիքն և զտեսանելիքն, և տեսանելն արագեղ գտանի քան զլսելն:
 Դարձեալ երկու իմանալիք զհրեշտակս և զհոգիս մարդկան ասէ և
 երկու տեսանելիք՝ զգայական և անզգայական մարմինքն, և թէ
 10 բաղդատես զսոսա իսկ, հրեշտակք և միաք մարդկան գերազան-
 ցեալ են, քան զգայական և անզգայ մարմինքն: Եւ այն, զի ասէ,
 այլ ի կենդանութենէ չորք են, որ շարժին, և երկու են ի կենդանիքն
 գնայունք: Այս երկու տղգ իմանի. կամ զհրեշտակս և զմիտս, և
 15 զմարդս և զանասունսն, երկու անմարմին և երկու մարմին, որ ի
 կենդանութենէ շարժին, կամ զմարմնական կենդանիքն ասէ չորս
 տեսակք շարժման, այսինքն զօդային թռչունս և զծովային լողակս
 և զերկրային սողունս և զոտիւք գնայունս: Եւ այն, զի ասէ երկու
 20 գնայունք, այսինքն երկու ոտանիք և չորքոտանիք: Եւ այն, զի ասէ,
 որ ոչ անսկիւղքն առ սկսեալսն երեկն ի բանէս, այսինքն զարարիչ
 15 ընդ արարածոց ոչ համարիմ ի բանիս այսմիկ: Եւ այն, զի ասէ, և
 ջրոյ առ հողմոյ արագութիւն, այսինքն չորս տարերքն ունին արա-
 գութիւն և ամրութիւն, ծանրութիւն և թեթևութիւն, և թէ բաղդատես
 զնոսա ընդ միմեանսն, գտանին մին քան զմիւսն առաւել արագ և
 20 թեթև: Եւ այն, զի ասէ՝ նա միւս ոմն հաճելի և անհաճելի, որ ոչ
 էութիւն ինչ երեւալ ցուցաւ տեսակագունին, այլ անյայտ մնացեալ
 ցուցաւ ի խնդրողէ: Ձայն ասէ, թէ սչւ բանքս, զոր ասացեալ է
 աստ, անյայտ թողի զտեսական, քեզ ինչպէս հաճոյ է, այնպէս
 մեկնեա զբանսն:
 Զաւրց. Ձի՞նչ է, որ ասէ. և փաղաքշական է, որ զնուազութիւն նա-
 25 խագաղափարին անբաղդատականին յայտնէ, որգոն՝ այրիկ, քա-
 րուկ, քարիկ, խողբորակ:
 Պատ. Հինգերորդ տեսակ ածանցացն է փաղաքշական, այսինքն
 ողորձական, որ իբր գթով սիրոյ և ողորկելով խօսի՝ և զնուազութիւն
 իրացն ցուցանէ առանց համեմատութեան բանիւ, միայն, որպէս

1 ԱՐԳ երկրորեանքն. Ա չի՛ք և (յորժամ): 2 Ա տեսանելիքն. Դն արագեղ, ամրագեղ.
 Գ զլսելիքն, Դն զլսելու: 3 ԱՐԳ հրեշտակք և հոգիք. ԲԳ չի՛ք ասէ: 4 Դն զգականսն և
 զանզգայական. ԲԴն որ փխ. և (թէ): 6 Դն փխ. են. Ա զգայ, Գ զանզգայ: 7 ԱՐԳ թէ
 այլ: 8 Գ զգնայունք, Դ զնայունք. ԱՐԳ զհրեշտակք. Գ կամ փխ. և (զմարդս): 9 Դն
 զանասուն: 11 Ատեսակս, ԲԴն տեսակ. ԲԳ զյօդային. Դն զծովու: 12 ԱՐԴն զերկիր: 14 Գ
 անսկիւրքն. ԳԴն սկսեալ: 15 Դն արարածոյ. ԲԳ ի բանէս. ԱՐԳ չի՛ք և (ջրոյ): 18 ԱԴն
 չի՛ք ընդ միմեանսն: 20 Գ է յէյութիւն, Դն էյութիւն. Դն երեւցեալ. Ա յայտ: 21 Գ բան
 քան փխ. բանքս: 22 Դ թողին: 23 Գ զբանս: 24 Գ զանզելի փխ. զնուազութիւն: 25 Բ
 յայտէ. Ա քար: 26 Դ խողբորակ, քաղակ: 28 Ա իբրև. Գ զանզելի:

ասէ քարիկ, ծովիկ, ծովակ, փոքրիկ, ձագիկ կամ շագուկ, գառնիկ կամ գառնուկ, լուսիկ, արեւիկ, հոգեկս և սոյնպէս:

Հարց. Վասն է՞ր ասէ. յարանուն է, որ յար յանուն ինչ քերթուցեալ է, որպիսի՞ տիրաճան, խրախճան:

- 5 Պատ. Յարանուն ասի, զի ըստ առաջին վանգին միաբանի, իսկ ըստ վերջին փաղառութեան զանազանի, որպէս ինքն քերթողական արուեստիւ ի նախկին անունն յարեցուցանէ, այսինքն յօդէ և կցէ, որդոն, թէ զտէր ճանաչութիւն ունի, նորա կոչել տիրաճան և ի սիրելութենէն՝ սիրուն, առաքինութենէն՝ առաքինի և իմաստութենէն՝
- 10 իմաստուն, ի խրախճանութենէն՝ խրախճան, այսինքն ուրախութենէն՝ ուրախ, յառողջութենէն՝ առողջ և այլ սոյնպիսիք, որ ի կրիցն դնել զանունն, այն է յարանուն:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. բայաժական է, որ ըմբայէ ածանցուցեալ է, հիբար՝ սիրուն, իմաստուն, մարթուն:

- 15 Պատ. Բայաժական այն է, որ ի բայէ ածանցցի անունն, որդան՝ սիրուն, այսինքն ի սիրելութենէն՝ սիրուն և իմաստութենէն՝ իմաստուն, ի մարթելոյն՝ մարթուն, քանզի սիրելն բայ է, ի նմանէ առաջ ածէ և ասէ սիրուն, սոյնպէս իմաստասիրելն և մարթելն բայք են, վասն այն ասէ բայաժական, զի ի ներգործութենէ է:

- 20 Հարց. Զի՞նչ զանազանութիւն են յարանուանն և բայաժականին: Պատ. Յարանունն ի կրիցն լինի և բայաժական՝ ի ներգործութենէ: Հարց. Զի՞նչ է, որ ասէ. և ձեք անուանց երեք. պարզ, բարդ, յարաբարդ:

Պարզ որդոն՝ Մանան, և բարդ որպէս՝ քաջ Մանան և յարա-

- 25 բարդ՝ որդան քաջ Մանուէլ:

Պատ. Արդ է պարզն իբր մեկնակ ինչ անուն, և ի նույն յաւելեալ միւս ևս բառ ճանաչի, այսինքն լինի բարդ, և ի հետ բարդին կրկին ինչ յօդես, լինի յարաբարդ, որպէս ինքն ասէ պարզ, որդոն՝ Մանան, բարդ, որդոն՝ քաջ Մանան և յարաբարդ, որդոն՝ քաջ Մանուէլ:

- 30 սոյնպէս և Լեոն, քաջ Լեոն և քաջագոյն Լեոն: Բայց գիտելի է, զի

1 Գ իորրակ: 2 Գ կամ արեւիկ. Գ հոգեկ: 3 ԱԳԴ յարանուն. փխ. յար յանուն. Ա քերթուցէ: 4 Ե տիրիճան. Գ խրախճական: 5 ԱԳ առաջի: 6 Գ քերթողական: 8 ԱԲԴ շի՛ Ի. Ա սիրելութեան. սիրոցն: 9 Ա առաքինութեան. Գ իմաստութիւն: 11 ԴԵ առողջութիւնէն: 13 Բ շի՛ որ ասէ. Գ բայացականէն ըմբայէ. Գ բայացականն. Գ ածանցի: 16 Ա ի սիրելութեան. Ա իմաստութեան: 17 Բ մարթոյ: 19 Դ ի ներգործութիւն է: 20 ԳԴ զանազանութեամբ: 24 Դ շի՛ և (բարդ): 26 Դ շի՛ Պատ ...է, Գ շի՛ Պատ.: 27 ԴԵ ևս ևս (կրկն.): 27—28 ԴԵ շի՛ և ի հետ բարդին կրկին ինչ յօդես, լինի յարաբարդ, Բ շի՛ ինչ: 29 Գ Մանուել:

լևոնն, Մանանն, Վարդանն, Պողոսն, Պետրոսն էական անուանք
ին, և այլն, զոր բարդես և կամ յարաբարդես ընդ նա, պատահմունք
են, որգոն՝ Լևոն էական անուն է, քաջն և քաջագոյնն պատահմունք
են: Սոյնպէս բարի Լևոն, կամ շար կամ սեռ և կամ խարտեաշ կամ
5 դեղնած կամ երկայն կամ կարճ, շիշկօ և կամ այլ պատահմունք,
որ լինի:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. և բարդիցն զարմանազանութիւնք են չորք,
քանզի են ի նոցանէ, որ յերկուց աւարտելոց են, որզան՝ Նորայր,
և են, որ ներկուց ըմպակասեցելոց, որպիսի՝ իմաստապատում, և
10 են, որ ըմպակասեցելոյ և նաւարտացելոյ, որպիսի՝ սիրամարգ, և
են, որք ի լիոյ և ի պակասելոյ, որպիսի՝ մարդիթ:

Պատ. Զայն ասէ, զոր ի վերոյ ուսոյց, դձև անուանցն թէ պարզ,
բարդ և յարաբարդ, զոր տոյժմ դնէ չորս այլևայլութիւնք, քանզի են,
որ յերկուց կատարեալ բառից լինին, որպիսի՝ Նոր-այր, կոյր այր,
15 մեծ այր, Վարազ Տրդատ, քաջ Լևոն և այլ սոյնպիսիք: Եւ են, որ
երկուց անկատարից, որգոն՝ իմաստնա-պատում, ուղղա-պատում,
կուրա-պատում, ծուա-պատում, Մանայճ, գիրա-ճան և որք սոյն-
պիսիք: Իսկ ոմանք յանկատարէ և ի կատարելոյ, որպիսի սիրա-
մարգ, տիրա-սէր, տիրու-շար, տիրա-սպան, գունա-գեղ, վանա-
20 շէն, տիրա-տուր և այլ սոյնպիսիք: Իսկ ոմանք ի կատարելոյ և
յանկատարէ, որգոն՝ մարդիթ, մարդոց, մարդիկ, հայրիկ, մայրիկ,
փոքրիկ, Դաւթեան, Պողոսեան, Գրիգորեան, Գրիգորիս, Խոսրովեան
և որք սոյնպիսիք: Քանզի անհնար է, որպէս ասացաւ, անուն առանց
այսոցիկ լինել զարմանազանութեանց, զի կամ յերկուց լիոց, կամ
25 յերկուց պակասից, կամ լին յառաջ և պակասն զկնի, կամ պակասն
ի սկիզբն և լին ի վերջէ: Եւ այսուպէս ամենայն ձևք խօսից որոշին:

Հարց. Վասն է՞ր ասէ. և թիւք են երեք, եզական, երկական, յոդ-
նական, որգոն՝ Պետրոս, Պետրու, Պետրոսք:

Պատ. Զայն ասէ, թէ ամենայն խօսք կամ եզական է, այսինքն
30 միաւորական է, կամ հրկական, այսինքն երկուց, կամ յոգնական,

1 և Լեւոն. ԲԳԴ և Մանան, Գ Պողոսն. Ե յէական: 2 ԴԵ շի՛ւ՝ կամ: 3 ԲԳԴԵ և քաջ:
5 Գ երկան. Դ շիշկաւ. ԲԳ շի՛ւ՝ և: 7 Գ զանազանութիւնք: 8 Ա քան. ԱԳ երկուց. ԱԲԵ
աւարտեցելոց, Գ աւարտեցելոց: 9 Գ շի՛ւ՝ ըմպակասեցելոց, որպիսի իմաստապատում, և
են, որ, Բ իմաստապատում, ԴԵ սիրամարգ: 12 ԴԵ ի վերայ: 13 ԳԴ քանի: 14 Ա եր-
կուց: 17 Գ կոյրապատում, ԴԵ կուրապատում. Բ շի՛ւ՝ ծոպապատում. Գ գիրաճայն: 18—19
Գ սիրամարգ, ԴԵ սիրամարգ: 19 Դ տիրասէրք, Ե տիրասէրք (կրկ.). ԲԴ վանշեն: 21 Գ
մարթիթ. Գ շի՛ւ՝ մարդիկ: 22 Ա քուրիկ փխ. փոքրիկ: 23 Գ անհնարին. Բ ասաց: 24 ԱԳ
զարմանազանցութեանց. Բ երկուց: 25 Դ լինի: 26 Գ սկիսքն. Գ ձևօք. Դ խօսից. Գ որոշին:

- այսինքն բազմաւորական, որպէս զնէ զօրինակս եղական Պետրոս, երկական՝ Պետրու, յոգնական՝ Պատրոսը: Սոյնպէս մարդ, մարդու, մարդք կամ մարդիկը, զի յոգնականն ոչ յատկանայ ի քանիս, այլ անյայտ մնայ թիւն: Բայց գիտելի է, զի միայն յունական և յարա-
 5 բացի լեզուսն յայտնի եղական և երկական և յոգնական, և այլ ամենայն աղգաց եղական և յոգնական, զի ոչ ունին զերկուրա-
 կանդ: Իսկ և նոցա ոչ առաջագոյն ունէին, այլ յետոյ արարին աթե-
 նացւոց քերթողքն, այլ ճշմարիտն կամ մի է կամ բազում, զսր
 ունիմք հայք և այլ ամենայն աղգ:
- 10 Հարց. Զի՞նչ է, որ ասէ. են ոմանք գծածք եղականք և ի վերայ
 բազմաց ասացեալ, հիզան՝ տոհմ, պար, ամբոխ, հօտ:
 Պատ. Զայն ասէ, թէ ի տառսն են ոմանք եղականք և են ոմանք
 բազմաւորականք, բայց բազում անգամ կու հանդիպի, որ եղական
 տառքն ի յանգի անուանց կամ բայից բազմաւորականացն կու
 15 հանդիպի, որդան՝ տոհմ, պար, ամբոխ, հօտ, անդեայ, ջոխր,
 երամ, պարտակ, գունդ, սպայ, զօր, գեհ, մայրի, այգի, արտ,
 մարգ, դրախտ և որք սոյնպիսիք: Այդ է, որ ասէ գծածք եղականք:
 Հարց. Վասն է՞ր ասէ. և յոգնականք ի վերայ եղականացն և երկա-
 կանաց ասացեալ, որդան՝ խոյարօնք, ցրօնք:
- 20 Պատ. Սոքա ամենեքեան միաւորական անուանք են և մի մի են,
 իսկ գոլով քէդ յանգի, որ է բազմաւորական, ոչ զի բազում նշան
 են, այլ երկուս, որդոն՝ խոյարօնք, ցրօնք, վարտիք, Ենովք, Սե-
 րուք, Ղամեք, իսկ բազմաւորական ի վերայ երկուց, որդոն՝ երկուք,
 ընկերք, ոտք, ձեռք, աչք, ականջք, բարձք, ծունկք, սրունք, թաթք,
 25 բոյթք, քիթք, ընտերք, ճկոյթք, կօշիկք, մուճակք և այլք ևս, քանզի
 սոքա ամենեքեան երկուս երկուս են, բայց զի ոչ ունիմք երկուրա-
 կան նշանք, այլ յոգնականօք ասեմք, վասն այն ասէ. և յոգնականք
 ի վերայ եղականաց և երկականաց:

4—5 Բ արաբացի: 6—7 ԱԳ երկուորականդ, Դե եղկուորականդ: 7 ԱԲԳն նոցայն.
 Դ յառաջագոյն: 7—8 ԱԲԴն աթենացոյց: 10 Գ գծածք, Դե գծացք. Դե չի՞՝ եղականք:
 11 Ե ամփոխ. Դե չի՞՝ հօտ. Բ հօտ, անդեա: 12 ԱԲԳ Այն. Ա ոմանք որ (եղականք), ԲԳ
 ոմանց: 14 Դ տեառքն. Բ անուան-ըց (տողադարձ): 14—15 ԱԲԳ կու պատահի փխ. կու
 հանդիպի: 15 Բ անդեա: 16 Դ չի՞՝ պարտակ. Դ զոր: 17 Դե մարդ փխ. մարդ. Դե որ փխ.
 որք. Բ յսպիսիքս. Գ ասէին. Գ գծածք, Դե գծացք. ԱԳԴն չի՞՝ եղականք: 18—19 եր-
 կանաց: 20 Դ ամենեքեան, Ե ամէնէքեան. 21 ԱԴ և փխ. իսկ, Դե գէդ. ԳԴն չի՞՝ զի. ԱԳԴն
 չի՞՝ նշան: 22 Դե այլ մի. Ա խոյարօնք, Գ խորարօնք: 24 Ե աչք: 25 Դե չի՞՝ ընտերք,
 ճկոյթ. ԱԲԳԴն կոշիկք. Բ այլ. Դ սոյնպիսիք փխ. ևս: 26—27 Գ երկուրական: 27 Դե նշան:

Հարց. Զինել է, որ ասէ. հոլովք են անուանց վեց. ուղղական, սե-
ռական, տրական, առաքական, հայցական, հոշական կամ կո-
շական:

- Պատ. Զայն ասէ, թէ ամենայն անունք վեց կերպիւ հոլովին, այ-
5 սինքն թաւալին, այսպէս. Աստուած, որ է ուղղական, Աստուծոյ,
որ է սեռական, ի Աստուած կամ Աստուածում՝ տրական, Աստու-
ածով՝ առաքական, զԱստուած՝ հայցական, ով Աստուած՝ հոշական:
Հարց. Վասն է՞ր ասէ. և ասի ուղղականն անուանական և պարզ:

- Պատ. Իբրեւ սկիզբն իմն և պատուականագոյն զսա զնէ, զի սա է
10 ստոյգ անուն, որ յայտնէ զամենայն էական և այլքն ի սմանէ յառաջ
խաղան, իսկ պարզ՝ մենակ, անշարտդիր իբր Աստուած, մարդ,
յաղագս, որոյ նախադասեալ եղև:

Հարց. Վասն է՞ր ասէ. և սեռականն ստացական և հայրենի:

- Պատ. Ստացական զնէ ըստ ինքեան դիպեալ ստացուածոյ կամ
15 հայրենեաց, քանզի երկոքին սոքա սեռք ասին, ոյսինքն ստաց-
ուածք և նախնիքն, իբր. Աստուծոյ, մարդոյ, Դաւթի, Սաայեայ, Գրի-
գորի: Քանզի ի հարցանելն, թէ ո՞յր է երկինք և երկիր, պատաս-
խանի տայ և ասէ, թէ Աստուծոյ, սոյնպէս ո՞յր է գաւառս, կամ
քաղաք, կամ գիւղ, կամ տուն և այլ ստացուածք, և ասել, թէ Դաւթի,
20 և կրկնելն, թէ Դաւիթ ո՞ւմ իցէ ողի, ասել զհուպ սեռն ի նախ-
նեաց, թէ Սաայեայ կամ Գրիգորի և այլ սոյնպէս: Այն է, որ ասէ.
սեռականն ստացական և հայրենի:

Հարց. Վասն է՞ր ասէ. և տրականն պատուիրական:

- Պատ. Տրական որդոն հարցանել, թէ առ ո՞ տուեր զայս ինչ կամ
25 զայն և պատասխանէ, թէ յԱստուած կամ ի մարդ, ի Դաւիթն, ի
Պետրոս և այլ: Կամ հարցանել, թէ յո՞ւր գնացեր կամ կու երթաս և
կամ գնալոց ես և պատասխանեալ, թէ ի վեր կամ ի վայր, ի Բա-
ղաբն կամ յեկեղեցի կամ ի տուն կամ յագարակս և կամ ի յալ
տեղիս: Եւ պատուիրական որպէս ասել՝ առ յո՞ պատուիրեցեր, այս-

1 Արեւ Զինել են. Դն ուղական: 4 Գ անասունք, Դն անուանք: 5 Դն ուղական: 7 Ա
առաքական. Դ յաստուած, հայցական զաստուած հայցական (կրկն.): 8 Դն շի՛մ ասէ. և.
Գ անունական: 9 Գ սկիսքն. Դ պատուականագոյն, Ե պատուանագոյն. Դ ըսգա. Դ ասէ
փի. սա է: 10 ԲԴ շի՛մ անուն. Բ էական: 11 ԱՐԴն մեկնակ. Գ անշարտդիր: 13 Գ վե՞ր
փի. վասն է՞ր: 16 Ա իբրեւ. Ա յսսա, Բ յսսա, Դն յսնայ: 21 ԱՐԴ յսսեայ, յսնայ.
Ա այլ: 22 Գ սոցին փի. ստացական: 24 ԱՐԴն Զարական. Ե զայս զայս (կրկն): 25 Դն
է փի. պատասխանէ. ԱՐԴն ի աստուած, Գ ի յաստուած: 25—26 Գ և ի Պետրոս: 26 Գ
հարցելն. Գ ո՞ւր: 27 ԱՐԴն պատասխանել, Դ պատասխանել: 28 ԳԴ եկեղեցի: 29 Գ առ ո՞:

ինքն ապսպրեցեր զայս իր կամ զայն իր, պատասխանել, թէ
յԱստուած, ի Դաւիթն, ի Պետրոսն և այլ սոյնպիսիք: Վասն այն
ասէ. տրականն պատուիրական:

Հարց. Վասն է՞ր ասէ. և առաքականն ցուցական:

- 5 Պատ. Զայն ասէ, թէ ի հարցանելն, թէ որո՞վ առաքեցեր զայս ինչ
կամ զայն ինչ, կամ թէ որո՞վ առնես զայս կամ զայն, և ցուցանէ
թէ Աստուծով կամ մարդով, Դաւիթի, Պետրոսի և այլք: Վասն այն
ասէ առաքականն՝ ցուցական:

Հարց. Վասն է՞ր ասէ. և հայցականն խնդրական կամ ըստ հել-

- 10 լենացւոց լեզուին փաստական:

Պատ. Հայցականդ ի հայոց լեզուս յայտնի է: Յորժամ ասել, թէ
զո՞ւ խնդրես և պատասխանեալ թէ զՅիսուս կամ զԱստուած կամ
զԴաւիթ կամ զՊետրոս կամ զՊօղոս կամ զայլ ոք, որ ի դէպ իցէ:

- 15 Յորժամ ի շար ինչ կամ ի բարի կոչեսցի ոք, ընդ ձայնին զեկու-
ցանէ զպատճառն, այսինքն ծանուցանէ զպատճառն: Բայց ոմանք
կամեցան այսպէս ասել, եթէ պատճառականդ ոչ է նոյն ընդ հայ-
ցական հոլով և ոչ տրական և ոչ մի ի դոցանէ, զոր գրեցաք: Այլ

- 20 կամիմք օրինել այսպէս. թէ հարցանէ ոք և ասէ յումմէ՞ ուսա՞ր դու
զայդ ինչ կամ զայն ինչ, և նա պատասխանէ, թէ յԱստուծոյ կամ
ի մարդոյ կամ ի հօրէ կամ ի քէն. և կամ թէ ասել է՞ր արարե՞ր զայս
ինչ կամ զայն ինչ, նա պատասխանէ, թէ ի քէն ուսայ կամ ի նմանէ
կամ ի սմանէ, և դնէ պատճառս զայլ ոք: Սոյնպիսիք բազում ի

- 25 առնու զհոլովսն, և բառս այս ի սկիզբն և յանգի առնու զյօդս հո-
լովման, որպոն՝ յԱստուծոյ, ի մարդոյ, ի Դաւթէ, ի Պետրոսէ և այլ
սոյնպէս, և հարցանել թէ յուստի՞ց կուգաս, պատասխանել ի Կոս-
տանդինուպօլսէ, կամ ի Տաննգիւոյ, ի յՍաւէն, կամ ի Կամէնիցւոյ

1 ապսպրեցեր, Բ ապսքրեցեր. Ա շի՛ֆ՝ թէ, 2 Բ ի աստուած, Դն յաստուած. Ա շի՛ֆ՝
այն, 5 Դ շի՛ֆ՝ ինչ, 6 Գ շի՛ֆ՝ թէ (որո՞վ), 10 Գ լեզուն, 11 ԴԴ ասէ, 12 ԱԳԴն պատաս-
խանել 13 ԱԲԴն շի՛ֆ՝ կամ (զՊօղոս). Գ դէպ իցէ, ԲԴ ի դիպիցէ, 14 ԱԲԴն շի՛ֆ՝ ի (հելլ.).
Դ հելլենն. Դ իական փիւ. փաստական. Դ շի՛ֆ՝ որ է պատճառական 16 Ա ոմանք, 17 Դն
նոյնդ, 18 Դ տրական և ոչ հայցական (կրկն.). 19 Ա կամիք. Բ յօրինել. ԲԴն յուսար
20 ԱԲ և կամ: 21 Դ ի մարդս. Գ շի՛ֆ՝ կամ (հօրէ). Ե ի քեն, 24 Գ շի՛ֆ՝ տես ԱԲԳ
առաջն, 25 Դ շի՛ֆ՝ ի. Գ սկիսքն, 27 ԲԳ ուստից: 28 Գ ի Տաննգիւոյ: Բ ի յեաշէն, Դ ի
լեալովց փիւ. յեասէն. Ան քամէնէցւոյ, Դ կամէնէցւոյ. Դ շի՛ֆ՝ ի Կամէնիցւոյ կամ ի Պօղ-
տանոյ:

կամ ի Պօղոսանոյ, ի Ստոյ կամ ի Սսայ, կամ ի Հալպայ կամ յարեւելից կամ յարեւմտից և յայլ տեղեաց, և ասել յուստի՞ց է այդ ինչ կամ այն ինչ, պատասխանեալ՝ ի Լօվայ, կամ ի Կամէնէցոյ և այլն, որպէս ի վերոյ գրեցաւ:

5 Հարց. է՞ր ասէ. և հոշականն առասական:

Պատ. Հոշական, զոր ոմանք կոշական ասեն և առասական, թէ առ ով խօսի և կոչէ զանունն. այսպէս՝ ով Աստուած, ով մարդ, ով Դաւիթ, ով Գրիգոր և այլք սոյնպիսիք: Իսկ այլք հրաշականս <ասեն>, իբր թէ զուղղականն և հրաշս խառնէ, իբր թէ Աստուած է 10 նախախնամութիւն: Բայց զիտեւի է, զի երեք բառս զմի ազդումն ունին ի կոչմունս, որ են սոքա. ով, է, ո: Որգոն՝ ով տէր, է տէր, ո տէր, ով Աստուած, է Աստուած, ո Աստուած, ով հայր, է հայր, ո հայր, ով որդի, է որդի, ո որդի, ով հոգի, է հոգի, ո հոգի կամ այլ անուանք զինչ և իցէ, յորժամ դէմ առ դէմ կոչել և խօսել: Այն է, 15 որ ասէ հոշականն առասական, այսինքն առովասական:

Հարց. Վասն է՞ր ասէ. ենթանկեալ ընդ անուամբ և այսք, որք և սոքա տեսակք կոչին:

Պատ. Անուն ասէ ուղղականն իբր սեռ գոլով ըստ ինքեան ի ներքոյ անկեալ ունի և այլ ևս բազում մասունս, որք և տեսակք նմին յոր- 20 ջորչին, այսինքն կոչին, բայց ոչ իբր ի սեռէ բաժանեալս, այլ ձայնիւ միայն նշանակեալս:

Հարց. Ո՞րք են:

Պատ. Իսկ, առասական, մակդիր, առինչունակ, իբրառինչունակ, հոմանուն, փաղանուն, բերանուն, երկանուն, մականուն, ազգա- 25 կան, հարցական, անորիշ, վերաբերական, որ և նմանական և ցուցական և դերհատուցական կոչի, բալձաձական, մակբաշխ, պարունակ, քերթեալ, սեռական, յատուկ, դասական, թուական, բարարձակ: Զկնի ուսուցանելոյն զընդհանուր անուանց հետեմունս,

1 Բ Սիւտոյ, Գ Սսոյ. ԱՔԴն շիֆ՝ ի (Հալպայ): 2 ԱՔԳն այլ. ԱԳ տեղաց. Բ ասէ. Բ ուսդից, Գ ուստից: 3 Բ պատասխանեալ և ասէ. Գ թէ յԱմթա կամ ի Մշոյ փխ. ի Լօվայ կամ Կամէնէցոյ. Ան Քամէնէցոյ, Բ Քամէնէցոյ, Դ Կամէնէցոյ, 6 Բ շիֆ՝ ասեն. Գ առաքական: 8 Գ իսկ այլ: 9 Դն զուղականն. 11 Դ ազմունս: 14 Ա ինչ. Բ շիֆ՝ յորժամ դէմ առ դէմ կոչել և խօսել: Այն է, որ ասէ. Ե կօչել: 15 Դն շիֆ՝ առասական: 18 Ե ուղական. Դն ի ներքոյ: 19 ԱՔԴն այլս. ԱՔԴն շիֆ՝ ևս. Գ բազումս: 20 Գ բաժանեալ: 21 ԱՔԴն նշանակեալ: 24 Բ համանուն: 26 Ե թերհատուցական: 27 Դն շիֆ՝ դասական: 28 ԱՔ ընթանուր, ԳԴն ընդհանուր:

ասէ և զներքոյ անկեկոցն քանիօնութիւնս և զհանգամանս որսլիսութեանց զաղափարս ծանուցանէ:

Հարց. է՞ր ասէ. իսկ է, որ զինքեան գոյացութիւն ցուցանէ, որսլիսի Մարկոս:

- 5 Պատ. Զայն ասէ, թէ իսկ անունն առանձին մին անհատի անուն է, այսինքն մին մարդոյ, որպէս թէ Դաւիթ, Մարկոս, Սողոմոն և այլք: Եւ այն, որ ասէ, թե զինքեան գոյացութիւն ցուցանէ, այսինքն զյայտնի և զերեւելի գոյացութիւն զմանդիման ցուցանէ, իսկական անուն զմարդոյ և զայլ էակացն զինչ և իցէ, վասն որոյ ասէ, իսկ է, որ
- 10 զինքեան <գոյացութիւն ցուցանէ>:

Հարց. է՞ր ասէ. և առաստկան է, որ զհասարակ էութիւն ցուցանէ, որգոն՝ մարդ, ձի:

- Պատ. Երկրորդ զկնի առաջին գոյացութեան, որ է անհատն, զոր իսկ ասաց, այսինքն Մարկոս, զոր Արիստոտէլ առաջին գոյացութիւն ասաց ի «Ստորոգութիւնան», ի գոյացութեանց ճառին, զնէ զկնի նորա զտեսակաւորն և զսեռական անունն, որ երկրորդ գոյացութիւն է, զոր Արիստոտէլ վկայէ, թէպէտ Պլատոն զսեռն և ըզտեսակն առաջին ասէ և զանհատն՝ երկրորդ, այլ արուեստաւորս Արիստոտէլի կարծեացն հիտեի և առաստկան կոչէ և ասէ, թէ ըզ-
- 2) հասարակ էութիւն ցուցանէ, այսինքն զամենայն մարդ և զամենայն ձի և զամենայն եղ, ոչխար, կաքաւ, ձուկն, քար, փայտ, ծաղիկ: Վասն այսորիկ հասարական ասէ զայս, զի ի սոցանէ առեալ ասին անհատ գոյացութիւնք, որգոն՝ Ադամ, Սէթ, Ենոփս, Կայնան, Մադաղիէլ, Յարեդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամեք, Նոյ: Սոյնպէս և
- 25 զայլքն իմասցիս, թէ ի կենդանեաց և թէ անկենդանեաց, զմի մի անհատից անունն իսկ ասէ, և զսեռիցն և զտեսակացն առաստկան կոչէ:

Հարց. է՞ր ասէ. մականդրական է, որ ի վերայ իսկիցն և կամ առաստկանացն եղեալ է և յայտնէ գով կամ պարսաւ ինչ և առի եռակի.

- 30 նոգւոյ և մարմնոյ և նարտաքնոց: Նոգւոյ, իբրո թէ՛ ողջախոհ, բղջախոհ և մարմնոյ, իբր թէ՛ արագ, հեղզ և նարտաքնոցն, իբր թէ՛ փարթամ, աղքատ:

1 Դե զներքոյ. Ա անկեկոցն. Դե քանի օգնութիւն: 2 Ա զաղարաւ, Դ զաղարարաւ: 6 ԱԳ Սողոմոն: 7 Դե զի փխ. որ. Գ զայտնի: 8 Բ զսերեւելի. Դե շի՛ք՝ զմանդիման: 9 ԱՐԴե շի՛ք՝ ասէ: 10 Դե շի՛ք՝ որ զինքեան. ԱՐԳԴե շի՛ք՝ գոյացութիւն ցուցանէ: 11 Դե էլութիւն: 14 ԲԳ շի՛ք՝ զոր: 16 Ա զերկրորդ: 19—20 Բ զը-հասարակ (տողդ.). 20 Դե էլութիւն: 23—24 Ե Մադաղիէլ: 24 Ա Ղամէք: 29 ԱՐԳԴ ձածի փխ. առի. 30 Գ նոգոյ. Դե նարտաքնոց:

5 Պատ. Վասն զի ոմն անհատ ունի յատուկ ըստ ինքեան զիսկ
 անունն, ունի և զառասականն, որ է տեսակին, քանզի ասի Դաւիթ
 և մարգ. Դաւիթն իսկ անուն և մարդն՝ առասական: Արդ ասէ, թէ ի
 վերայ սոցա եղեալ լինի և այլ անունս գովելի կամ պարսաւելի, և
 10 առի եռակի, քանզի մարգ յերից է և յերից առնու զգովն կամ ըզ-
 պարսաւն, այսինքն ի հոգւոյ կամ ի մարմնոյ կամ ի ստացուածոց:
 Եւ զի պատուական է հոգի քան մարմին և մարմին քան զարտաքին
 ինչ, այսինքն քան զստացուածս, սակս որոյ ըստ կարգի դասէ:
 15 Ասէ. նոգւոյ, իբրու թէ՛ ողջախոհ, իմաստուն, գիտուն, մտացի,
 խոհեմ, հանճարեղ, հեղ, խոնարհ, պարկեշտ, սուրբ, բարի, ողոր-
 մած, ընկերասէր, աստուածասէր, պարզամիտ, որ են գովք, և
 բղջախոհ, անիմաստ, անգէտ, անմիտ, անխոհեմ, անհանճար, ամ-
 20 բարտաւան, հպարտ, անամօթ, պեղծ, շար, տմարդի կամ ան-
 ողորմ, ընկերատեաց, աստուածատեաց, նենգաւոր և այլ սոցն-
 պիսիք որ են պարսաւք և են հոգւոյ կիրք: Եւ զկնի զմարմնոյ զնէ և
 ասէ. արագ, ժիր, առողջ, փափկամարմին, յաղթանդամ, զօրաւոր,
 հզօր, քաջամարմին, գեղեցիկ, խարտեաշ, լայնաճակատ, գեղեց-
 30 կահեր, սպիտակ և կարմիր, գանգրահեր, ծովաչեր, մեծայակք,
 սրատես, հաստաբազուկ, լայնաթիկունք, բարձր, երկայնաձև և
 20 այլ սոցին նման, որ են մարմնոյ գովք, և պարսաւք ընդդէմ սոցա,
 որդոն՝ հեղգ, լոյծ, հիւանդ, վտիտ, լաղար, աւաղամարմին, տկար,
 անլօր, փանաքի, վատուծն, զազիր, դժնդակ, սեռւ. երկարեա ի
 սա, որչափ որ կարես: Իսկ նարտաքնոցն՝ փարթամ, աղբատ, ըն-
 25 չեղ, առատ, ռիշտ, բազմորդի, անորդի և այլք: Տես և զայն, զի
 նախ զլան կարգէ վատթարին յերից մասանց որոշմունսն, որ-
 պէսզի իմասցիս, թէ բարին և լաւն բնութեամբ և առաջին է ի մեզ,
 իսկ շարն և յոռին վերջին և եկամուտ:
 Հարց. է՞ր ասէ. և առինչունակ է իբրու թէ՛ հայր, ուստր, սիրելի,
 աջող:
 30 Պատ. Առինչ ասի այն, յորժամ ոք յասելն զնա և յանուանել, հար-
 կաւորաբար տայ իմանալ և զայլ ինչ, որպէս՝ թէ ասիցէ հայր, տաջ

1 Դ իսկ: 2 Գ շի՛՛ք է: 4 ԱԳԴԵ անուանու: 5 ԱՐԳ ասի փխ. առի. Բ երից...երից: 6 ԴԵ
 հոգոյ: 9 Դ նոգոյ: 12—13 ԱՐԴԵ ամպարտաւան: 13 Գ պիզ փխ. պեղծ: 15 ԳԴ իրք. ԱԳԴԵ
 մարմնոյ: 17 Գ շի՛՛ք հզօր: 18 Ա գանգրահեր, Ե գանգրահեր. Բ ծովաչեր, Գ ծովաչեր:
 20 Գ պարսաւք: 21 ԱԴԵ հեղք. ԱՐԵ վատիտ, Գ վասիս: 22 Ա դժանդակ. ԳԴԵ երկարեալ:
 24 Գ բազմորդի: 25 Դ կարկէ, Ե կարկէաց. Ա վատթարին. ԱԳԴԵ յերիս: 26 Դ զլան:
 28 Ա իբր. ԱԳ ուստ: 30 ԲԳ անուանել: 31 ԱԳ յիմանալ. Ա զայն. Գ շի՛՛ք հայր. Դ տալ:

իմանալ որդի, և յասելն սիրելի, հարկաւորաբար իմանի և ատելին, և ասելն աջող, իմանի եթէ է և ձախող, բայց ստոյգ առինչ է, որ զմիմեանս ի մէջ ածեն կամ բառնան հակադարձաբար, որպէս տէր առ ծառայ և հայր առ որդի և կէս առ կրկնապատիկ, մեծ առ փոքր, մայր-գոլաստր, եղբայր-քոյր, թոռն-հաւ, փեսայ-աներ, հարսն-սկե-սուր, տալ-նու, տիկին-աղախին, նօսր-թանձր, ստուար-բարակ, լայն-նուրբ, երկայն-կարճ և այլ սոյնալիսիք:

Հարց. Զի՞նչ է, որ ասէ. իբրառինչունակ է իբր թէ՛ դիշեր-օր:

Պատ. Սա ճշմարտապէս առինչունակ ոչ է, այլ նման է նորին, վասնդի ոչ բառնան զմիմեանս, որպէս՝ տիւ և գիշեր, լոյս և խա-լար, շոր և դալար, լեառն և դաշտ, դարուն և ամառն, աշուն և ձմեռն, քաղցր և դառն, ջերմ և ցուրտ և այլ սոյնալիսիք:

Հարց. Վասն է՞ր ասէ. հոմանուն է, որ ի վերայ բազմաց հոմանու-նակի եղեալ է ի վերայ իսկիցն, որպիսի՝ Յովհաննէս Զաքարեան և Յովհաննէս Զեբեթեան, իսկ ի վերայ առասականացն որդան՝ մուկն ծովային և մուկն երկրային:

Պատ. Հոմանուն է, որ միով անուամբ բազում իրս ինչ նշանակէ հրկուս կամ երեք կամ և այլ աւելի, և լինի սա պատահմամբ և ըստ մտածութեան, պատահմամբ՝ յորժամ երկուց իրաց նոյն դիպեացի անուն տիրական կամ առասական, որգոն՝ արծուի թռչուն և արծուի շինուած փայտի կամ քարի, ալի ծովու և ալի մարդու, իսկ մտածու-թեամբն՝ ըստ պատուոյ և ըստ յուսոյ, ըստ աղօթից. ըստ պատուոյ, որպէս՝ քահանայից, սարկաւադաց, թագաւորաց և իշխանաց, և ըստ յուսոյ, որպէս՝ հաւատացելոցն, ըստ աղօթիցն, որպէս՝ ճգնա-ւորաց և այլ ևս որգոն՝ քահանայ Գաւալար և քահանայ խաչատուր, և սարկաւադ՝ խաչքո և Իվաշքո, թագաւոր Կոստանդիանոս և թա-

1 Բ ասելն, Դ յաւելն (սիրելի): 4 Դ կրկնապատիկքն 5 քոյր բառով Երուսաղեմի Ե=1163 ձեռագիրը ընդհատվում է մինչև գործի վերջը: 5—6 Գ սկէսուր: 6 Բ նոս-ըր (տողդ): 7 Բ նուր-ըր (տողդ): Դ յերկայն: 8 Բ իբրառինչակ: 9 Ա կոչէ փխ. ոչ է: 11 Գ լիառն: 12 Բ այլք: 13 Ա և հոմանուն. Դ հմանուանակի: 14 Դ և ի վերայ. Դ յիրացն փխ. իսկիցն. Դ շիւ՛ որպիսի, Դ որպէս ի. ԱԲ ի Յովհաննէս. Ա Ովաննէս, Բ Ովյաննէս, Գ Յով-աննէս, Դ Ովհաննէս. Դ Զաքարիան: 15 Գ որդոն: 18 ԳԴ շիւ՛ և (այլ). Գ յաւելի. ԱԲԳ ըստ պատահմամբ. Դ շիւ՛ և (ըստ): 19 Դ շիւ՛ պատահմամբ. Դ որպէս փխ. յորժամ. ԲԳ յերկուց: 20 Դ շիւ՛ որգոն. Դ շիւ՛ արծուի թռչուն: 20—21 Դ արծուի շինուած: 21 ԱԲԳ շիւ՛ կամ քարի. Դ այլ փխ. ալի: 22 Դ ուսոյ. Դ աղօթից և: 24 Դ շիւ՛ ըստ (աղօթիցն). ԱԴ շիւ՛ որպէս: 25 ԲԴ Գաւալար: 26 ԱԲ Սարկաւադ Իվաշքոյ, սարկաւադ խաչքոյ (շա-րադ.), Դ սարգաւադ Յովաննէս և սարկաւադ Կիրակոս: Դ այլ և (թագաւոր). Բ Կոս-տանդիոս:

- գաւոր Տրդատ, իշխան Սահակ և իշխան Համազասպ, որ են ըստ պատուոյ, և ըստ յուսոյ որգոն՝ քրիստոնեայ Դաւիթ, քրիստոնեայ Յակոբ և այլն, և ըստ աղօթից՝ ճգնաւոր Անտօն, ճգնաւոր Մակար: Եւ այն զի ասէ ի վերայ իսկիցն որգոն՝ Յովհաննէս Զաքարեան և
- 5 Յովհաննէս Զեքեթեան, քանզի թէպէտ անունն երկուց մի է, այլ մերձաւոր սեռքն այլ են, որ են ծնողքն այլեայլ, թէպէտ և անհատ են տեսակաւ, այսինքն բնութեամբ, որպէս՝ Դաւիթ Յասեան և Դաւիթ Գրիգորեան, Մովսէս Աւետիքեան և Մուէս Յակոբեան, Զատիկ Պօղտանեան և Զատիկ Յակոբեան և այլ սոյնպիսիք, որ են
- 10 իսկ: Իսկ առասականացն, որգոն՝ մուկն ջրային և մուկն ցամաքային, խեցգետին ջրային և երկնային, ցուլ և խոյ երկնային և երկրային, ակն աչից և ակն աղբեր և ակն քարի պատուականի, մարդ կենդանի և նկարիւլ և այլք այսպիսիք, որոց անուանք մի, այլ բնութեամբ և գոյացութեամբ բաժանեալք և զանազանք, որ-
- 15 պէս՝ հայր երկնային և հայր երկրային: Հաւց. Վասն է՞ր ասէ. փաղանուն է, որ ի զանազան անուանս ըզնոյն ցուցանէ, որգոն՝ խաղ, դաւապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան:
- Պատ. փաղանուն ըստ քերթողացն ասի բաղմանուն, իբր թէ մի իրն,
- 20 որ զբազում անուանս ունի ընդ իւրեաւ բարդեալ: Իսկ ըստ իմաստասիրացն է փաղանուն, զի կենդանին զբազում անուանս փաղեաց, որգոն այլեայլ անուամբ կենդանի նշանակել, որպէս՝ հրեշտակ, մարդ, ձի, եղ, արծուի, ճնճղուկ և այլ տեսակք կենդանոյն, զի սոքա զանազան անուամբ զկենդանին յայտնեն: Այլ մեք զքերթո-
- 25 ղացն տեսցուք աստ, զի փաղանուն ասի, որ անուամբ այլեայլ և բնութեամբ մի իր գոլով բաղում անուամբ անուանի, որպէս՝ սու-

1 Դ շիւ՝ իշխան (Համազասպ). Գ Համազասպ: 2 Դ շիւ՝ քրիստոնեայ (Յակոբ): 3 ԱՔԳ շիւ՝ և այլն. Դ շիւ՝ ճգնաւոր Մակար: 4 ԱԳ Զաքարիայ: 6 ԲԴ յայլ (են). Ա ծնողքն: 7 Դ յսասեան: 8 Ա Աւետիքեան. Դ Յակոբեան և այլք: 9 Դ Զատիք Պօղոսեան. Կարապետ Սահակեան և Կարապետ Դաւթեան փխ. Զատիկ Պօղտանեան և Զատիկ Յատիկ (աղբեր). Դ պատմականի: 13 ԱՔԳ զրեալ փխ. նկարեալ. Դ այլ. Գ անուանց: 14 ԱՔԳ ակն (աղբեր). Դ պատմականի: 15 Բ երկնային...երկրային: 16 ԱԳ շիւ՝ է. Գ անուանց. Բ զնոյնս: 17 Դ խակ, դաւար: 19 Ա շիւ՝ Պատ: 20 Բ զբազումս, Գ բազում. Գ շիւ՝ ըստ: 24 Բ տեսակ. Գ կենդանու, Դ կենդանոյն: 26 Դ ասի, որ անուն ասի (կրկն.). Դ բնութեամբ այլեայլ և մի (շարալ.): 27 Գ շիւ՝ սուսերն:

սերն, զի կոչի խաղ, խարբ, դալալը, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան, և ևս անիւ, ճղուղ, աւարտ՝ յանդ, վերջ, կապերոտ՝ և գորգ, օթոց, կրկնոց, ձորձ, վիռոն, բիր՝ և մահակ, գաւաղան, որոց բնութիւնք և իր մի և անուանք այլք:

5 Հարց. Վասն է՞ր ասէ. բերանուն է, որ իմեքէ պատահմանէ եդեալ է, իբրու թէ՛ վանեալ և մեծասուգ:

Պատ. Զայն ասէ, բերանունս ի բերմանէ իրաց լինի, որդոն՝ թէ յաղթէ, յաղթող կոչի և թէ յաղթի՝ յաղթեալ, և դառն սգոյն՝ մեծասուգ, սաքար՝, վարձ, Մովսէս ի ջրոյ հանեալ կամ վիմածին, վասն մարտիրոսութեան՝ մարտիրոս, վասն ուրախանալոյ՝ ուրախացեալ, վասն արբելոյ՝ արբեալ, աշխատեալ, տառապեալ, շարշարեալ, կալանաւոր, զնտանեալ, քաղցեալ, ծարաւեալ և այլք բաղում այսպիսիք, որ ի բերմանէ լինի պատահմամբ:

15 Հարց. Վասն է՞ր ասէ. երկանուն է, անուանք երկու ի վերայ միոյ իսկի դասեալք, որդոն՝ Եղիազարոս Աւարեան, այլ սակայն ոչ անդրադարձի բանս, քանզի եթէ ոչ Եղիազարոսն նոյն Աւարեան կոչիլ կարէ:

Պատ. Երկանուն է, որ երկու անուն ի վերայ միոյ մարդոյ կամ այլ իրաց եդեալ լինի, որպէս ասաց, թէ Եղիազարոս Աւարեան և Պետրոս Կեփաս և Յուդայ Շմաւոն: Եւ ասէ, թէ ոչ անդրադարձի բան, այսինքն ոչ դառնայ յետս նոյնն, քանզի ոչ ամենայն որ Եղիազարոսն, Աւարեան կարէ կոչիլ, և ոչ ամենայն որ Աւարեանն՝ Եղիազարոս: Այսպէս և ամենայն Պետրոս ոչ կարէ Կեփաս կոչիլ և ոչ ամենայն Յուդայ՝ Շմաւոն, և ոչ ամենայն Շմաւոն՝ Յուդայ, 25 քանզի ոչ է երկանունս իբր զփաղանուն, քանզի փաղանունն անդրադարձի ի նոյն, որդոն ամենայն սուսեր կարէ նրան կոչիլ և ամենայն նրան՝ սուսեր:

Հարց. Վասն է՞ր ասէ. մականուն է, որ և երկանուն կոչի, որ հան-

1 Դ խարպ. Դ դալարբդ. Դ մարդացու 2 ԱՐԳ ճրղուղ. Բ գորգ: 3 Դ և գաւաղան: 4 Դ ալեկայ: 5 Դ դերանուն. ԱԲ որին. Բ պատահմանէ (տողդ.): 7 Դ դերանունս: 8 ՍՐԳ կոչիլ. ԱՐԳ զնա յաղթեալ: 10 Գ ուրանալոյ, Դ ուրախութեան վիճ. ուրախանալոյ: 11 Դ արեցութեան. Գ արբելոյ: 12 ԱՐԳ չիք՝ ծարաւեալ. ԱՐԳ այլ. ԱԳ այսպիսիք բաղումք (շարաղ.): 13 Դ պատահմամբ: 14 ԱԴ չիք՝ միոյ: 15 Բ յԱւարեան: 16 Ա եթէ որ: 16—17 ԱՐԳ կարէ կոչիլ (շարաղ.): 18 Գ չիք՝ անուն: 19 ԱԴ չիք՝ լինի. ԳԴ չիք՝ թէ: 20 Ա անդրադարձի. Բ բանս: 21 ԱՐԳ ոչ յետս ի նոյն դառնան (շարաղ.). ԱՐ Եղիազար: 23 Դ չիք՝ Այսպէս և ամենայն: 24 Բ որպէս վիճ. և ոչ. Յուդայ: 25 ԲԴ փաղանուն: 26 Դ որ սուսեր: 27 Ա չիք՝ ամենայն: է. 28 Դ չիք՝ է. Գ երկու անուն:

դերձ ալլով իսկիւ ի վերայ միոյ ասացեալ է, որդոն՝ Բաներեգէս Յովհաննէս և Ձայն Գոշման Յովհաննէս:

Պատ. Մականուն, այսինքն անուն ի վերայ անուն, և այս երկակի է, զի կամ յառաքինութենէ կամ յընդիմակէն ասի: Եւ այն, զի ասէ 5 հանդերձ ալլով իսկիւ կամ երկանուանն որոշել, քանզի անտ մի իսկ ասէ և աստ կրկին, այսինքն Յովհաննէս որդի Որոտման և աւետարանիչ և Յովհաննէս Ձայն Գոշման և մկրտիչն, որ և նա որոտումն ձայնի:

Հարց. Վասն է՞ր ասէ. ազգական է, որ զազգն յայտնէ, որդոն՝ դո- 10 դերձական, տուհ, վրացի:

Պատ. Ազգական անուն է, որ միոյ ազգի մի մարդոյ ինքեամբ յատուկ կարող է զբովանդակն, այսինքն զբոլոր ազգն բացայայտել. թէ յորմէ ազգէ և լեզուէ իցէ, որդոն՝ ասորի, վրացի, հայ, տաճիկ. 15 յոյն, լատինացի, այսինքն կոշել զմին անհատն բոլոր ազգին անուամբ, այն է ազգական:

Հարց. Վասն է՞ր ասէ. հարցական է, որ հարցանելով կոշի ըստ հարցմանն ասացեալ, որդոն՝ ո՞ր, ո՞ր, ո՞րքան, ո՞րչափ, որ...:

Պատ. Այն իսկ է հարցական անուն, յոժամ խուզէ ոք քննող զայլ գործեցեալ իրս, թէ որպիսի՞ ինչ է, որքա՞ն են վաստակք ցորենոյ և զինոյ, և որ այսպէս: Եւ լինի հարցականն ըստ երից զիմաց. 20 մի՞ յորժամ զոլորակն առաջի դնել հարցանէ զիրն, ապա զորպիսու- թիւն և դարձեալ զորչափութենէն, սոյնպէս և զզիմացն բնութիւն. քննել, որպիսի՞ և որչափ, իսկ թէ պատեհ իցէ ասելն զայնցանէ, ընկենու ի յապա զխնդիրն, որով լինի անորիշ, անյայտ ցուցանե- 25 լով զխնդիրն ի բազմաց, այլ դարձեալ ի վերայ բերելով և նմանե- ցուցանելով հատուցանէ, զխնդրելին բանիւ այնպէս յայտնէ, իբր՝ այսպիսի, այսչափ, այսքան:

Հարց. Վասն է՞ր ասէ. անորիշ է, որ հարցականին հակառակ ասի. որդոն՝ որ ոք, որպիսի ոք, որչափ, որքան:

Պատ. Անորիշ, այսինքն անյայտ, քանզի հարցականին հակառակ.

1 Ա Բաներգէս: 3 Դ Մականուն է: 4 Դ առաքինութենէ, Դ առաքինութեան. Ա՞ր և կամ. Դ ընդիմակէն: 5 ԱԲ ի յերկանուանն. Ա յանտ, Բ յայտ, Գ յայնոյ փխ. անտ: 7 ԱԳ չի՞ք՝ և (Յովհաննէս): 9 Դ ազգն: 10 Դ տուհմ: 11 Բ մի, ազգի: 12 Դ կարող. Դ բացա- յայտնել: 14 ԲԳ լադինացի, Դ լաթինացի. Դ այսպէս փխ. այսինքն: 17 Դ որգա՞ն: 20 ԱԳ զինոյ, Դ զիոյ. Դ յերից: 21 Բ զորպիսութենէն, Դ որպիսութենէն. ԲԳ ի ապա: 24 Գ անորոշ: 25 Ա չի՞ք՝ և: 26 ԲԳ և հատուցանէ. Գ հասուցանէ. Դ չի՞ք՝ այնպէս: 27 ԳԴ այս- պիսի ոք: 28 Դ Յանորիշ. Գ էն:

ասի, որպէս թէ պատասխանէ նմա խրոխտական ձայնիւ ո՞վ ոք, որպիսի՞ ոք, որչա՞փ են, որչա՞փ կարեն, որչա՞փ բաւեն: Եւ սոքա այսպէս:

- 5 Հարց. է՞ր ասէ. վերաբերական է, որ և նմանական և ցուցական և դերհատուցական կոչի, նմանութիւն իմն ցուցանելով, որգոն՝ այսանակ, այսպիսի, այսչափ, այսքան:

Պատ. Արդ սոքա և ամենայն այսպիսիքն ի դերանունս են, և լինին սոքա ըստ երից ամանակաց և ըստ երից դիմաց և ըստ երից թուոց:

- 10 Հարց. է՞ր ասէ. բակձաձական է, որ եզական թուով բաղում ինչ ցուցանէ, որգոն՝ տոհմ, պար, գեհ, հոյլ, շեղջ:

Պատ. Բակձաձականն բականականն է, որ եզական թուով և միաւոր անուամբ զբաղումս նշանակէ, այսինքն ժողովական անուն է, որ մի բառիւ ասելով զյոլովս նշանակէ, որպէս դնէ և զօրինակն.

- 15 տոհմ, պար, երամ, ջոկ, կոյտ, անդեայ, գումար, խումբ, տարմ, գունդ և այլք:

Հարց. է՞ր ասէ. մակբաշխ է, որ ներկուց է կամ յաւելեաց իմն ունիցի զվերաբերութիւն, որգոն՝ երկաքանչիւր, իւրաքանչիւր:

- 20 Պատ. Մակբաշխն վերաբաշխ ասի կամ կրկնաբաշխ կամ յերկուց, որգոն՝ երկաքանչիւր, իւրաքանչիւր, ամենից ընդ ամենայն, ամենեցուն, յոգունց, բաղմաց, հաւասար, զոյգ, հարթ, ճիշտ և որք այսպիսիք: Եւ լինի այս, եթէ յիշխանէ բան հրամայի կամ ինչ պարգևի երկաքանչիւրոց և իւրաքանչիւրոց կամ բաղմաց, որոց տացին և հրամայիցին ի վերայ նորին երթայ վերաբերութիւնս,

- 25 այն է, որ ասէ...

Հարց. է՞ր ասէ. պարունակ է, որ երեցուցանէ ինչ յինքեան պարփակեալ, որգոն՝ մարդսուտան, կուսաստան, ընկուլուտն, կթոց, որթոց:

- 30 Պատ. Պարզ մեկնէ, թէ պարունակ է, որ պարփակեալ ունի յինքեան տեղեալն այսինքն որթոցն զայգին կամ զփայտի որթոյ ամբարումն կամ զծնունդս արջառոց, և կուսաստանն՝ զկոյսս և ընկու-

2 Դ բանին փխ. բաւեն: 4 Դ շի՛ք է: 5 Գ դերհատուցական: 7 Ա ի դերանունս են, Դ ի դերանունս ասեն: 8 Դ ըստ յերից...յերից: 10 ԱՐ բազձաձական. Դ շի՛ք է: 12 ԱՐ այսինքն բականական. ԱՐԳ շի՛ք է. Դ որ է: 15 ԱՐԳ անդեա, Դ յանդեա: 16 Դ գունտ. Դ ալլն: 19 ԱՐԳ երկուց: 20 ԱՐԳ որպէս փխ. որգոն: 21 Դ յոգունց. ԱՐԴ ճիշդ: 22 Դ իշխանէ: 23 ԱԳ կամ իւրաքանչիւրոց, Դ կամ իւրաքանչիւր. ԱՐԳ որում: 24 Գ հրամայեցին: 27 Դ կուտասդան, ընկուզոտ: 29 ԱԴ Մեկնէ պարզ (շարաղ.): 30—31 Դ զփայտից զորթոց յամբարումն կամ զծնունդ: 31 Ա առջառոց, Դ յառջառոց. Դ զկոյսս:

- զուտն՝ ընկուղիքն և զընկոյզսն և կթոցն՝ զընդունելութիւն պտղոց
կամ կաթինն, սոյնպէս և այլքն. մարդաստան, քաղաք, գիւղ, այգի,
պարտէզ, ծաղկոց, դրախտ, անտառ, մորի, ճաղագ, արտ, մարգ,
բուրաստան, Հայաստան, Ասորեստան, Հրէաստան և այլ այս-
5 պիսիք: Այն է, որ ասէ պարունակն:
Հարց. է՞ր ասէ. քերթեալ է, որ ըստ հնչմանն յատկութեան նմա-
նակի ասացեալ է, որգոն՝ խազմ, վրդով, յոյզ:
Պատ. Այս լինի ըստ պաճուճաբանութեան քերթողաց, որ հայելով
յիրն, նմանակի ասեն զխաղաղութենէ կամ զխռովութենէ յառաջ-
10 նոցն, կամ ի մէնջ վասն նոցա, որք ոչ կարեն ստուգել, որք են
այսք. խազմ, վրդով, ամբոխ, աղմուկ, դղրդումն, բոմբին, զան-
չին, ամենեքեան սոքա պատերազմի և կռուոց անուանք են: Դար-
ձեալ քերթեալ անուն է, որ կա՛մ յիրին, կա՛մ գործոյն, կա՛մ ձայ-
նին նմանեցուցանել զանուն:
- 15 Հարց. է՞ր ասէ. սեռական է, որ կարէ ի բազում տեսակս կոտորիլ,
որգոն՝ կենդանի, տունկ:
Պատ. Սեռն է, որ յերկու կամ երեք կամ այլ բազում տեսակս բա-
ժանին, որգոն՝ գոյութիւն սեռ գոլով, բաժանի ի մարմնական և
յանմարմինն, և մարմինն սեռ գոլով, բաժանի ի ներշնչականս և
20 յանշունչսն, և շնչականն ուր գոլով, բաժանի ի կենդանիս և ի կեն-
դանաբոյս և տնկաբոյս, և կենդանին սեռ գոլով, բաժանի ի հրեշ-
տակս և ի մարդս, ի ձիս, յեզս և յայլ ամենայն կենդանիս: Տես,
սեռական անուանք են սոքա, թէպէտ որ կան ոմանք, որ լինին
ումեք տեսակք, լինին և այլոց սեռք, որպէս՝ գոյ, մարմին, շունչ,
25 բոյս, զգայական, կենդանի, որք կարեն ի բազում տեսակս կո-
տորիլ:
Հարց. է՞ր ասէ. յատկական է, որ ի սեռէ զատուցեալ է, որպէս՝ ձի,
եզ, որթ, ձիթենի:

1 Դ ընկուղեան փխ. ընկուղիքն. Դ շիֆ՝ և զնկոյզսն, Բ զնկոյզն: 2 Դ շիֆ՝ կամ
կաթինն: 3 Դ ճաղագ, յարտ: 5 Դ շիֆ՝ որ ասէ: 8 ԱԳ պաճուճաբանութեան. ԳԴ յոր: 9 Գ
զխաղաղութեան կամ զխռովութեան: 10 Ա շիֆ՝ կամ: 11 Դ վրթով, յամբոխ: 12 Դ ըզ-
պատերազմից. Դ կոց, Դ կովոց: 13 Դ շիֆ՝ կամ (յիրին). ԱԲԴ իրին: 15 ԲԴ տեղիս փխ.
տեսակս: 17 ԱԲ ի յերկու, Բ երկու, Դ ի երկու. Բ աւելի և փխ. այլ: 18 Բ գոյացութիւն:
19 ԱԲԴ անմարմնական փխ. յանմարմինն: 20 ԱԲԴ անշունչսն. Գ շիֆ՝ ի կենդանիս և:
21 Գ բաժանէ: 22 ԱԲԴ ի յեզս, Գ ի յելս. ԱԲ այլ. Դ և փխ. Տես: 24 ԱԲ տեսակ. Դ շիֆ՝
լինին (և այլոց). ԱԲ սեռ: 25 Դ զգայական և կենդանի: 27 Գ յատկան. ԱԲԴ որպիսի:

- Պատ. Յորժամ յատկացուցանես զտեսակն ի սեռէ կամ զանհատն ի տեսակէ, անխառնութեամբ և սլարզ երեւցուցանէ որիշ որիշ, յայնժամ յատկանայ կա՛մ տեսակն ի սեռէն, կա՛մ անհատն ի տեսակէն: Գիտելի է, զի անհատն ըստ երից ասի. մին ըստ կարծրութեան, որպէս աղամանդն, և միւս ըստ մանրութեան, որպէս՝ հիւլէ ի շողն, երրորդ ըստ անխառնութեան ձիոյ և արջառոյն տեսակ, այսինքն ոչ ձին հատանի ի բնութենէ իւրմէ և ի տեսակէն և լինի արջառ, և ոչ արջառն լինի ձի, նոյնպէս և մարդն և ամենայն տեսակն:
- 10 Հարց. է՞ր ասէ. դասական է, որ զդասն յայտնէ, որգոն՝ առաջին, երկիր, երիր:
- Պատ. Դասականն կարգական լսի, որով դասաւորութիւն լինի ըստ աստիճանի առաջին, երկրորդ և երրորդ, և որ ի կարգին դասեալ է մի ըստ միոջէ, և դարձեալ այսք. ներքին, միջին, վերին, աստի, անտի, յառաջոյ, ի վերջոյ, ի կողմանէ, յաջմէ, յահեկէ, ի սնարից, յանոտից և այլ սոյնպիսիք:
- 15 Հարց. Վասն է՞ր ասէ. թուական է, որ զթիւն նշանակէ, որգոն՝ մու, երկու, երեք:
- Պատ. Յայտնի դնէ զօրինակն մի, երկու, երեք, շորս, հինգ, տաս, 20 հարիւր, հազար և այլն: Բայց գիտելի է, զի որոշի դասն և թիւն, քանզի թիւն թէ՛ ի սաորուստ ի վեր, և թէ՛ ի վերուստ ի խոնարհ սկսանի անհակառակ է, որգունակ՝ յորժամ շարես տասն դեկան յաջմէ մինչև ի ձախ և թուես յաջմէ յառաջ մինչ ի ձախ, նա լինի տաս թիւ, և դարձեալ զնոյն ի ձախմէն յառաջ թուես մինչև ի յաջ, 25 նոյն է և ոչ լուծանի, բայց դասն ըստ կարգի է, առաջին և միջին և վերջին, և թէ յետ դառնաս, լուծանի կարգն:
- Հարց. է՞ր ասէ. բացարձակ է, որ առանձին իմանի, որգոն՝ Աստուած, Բան:
- Պատ. Անմարմինքն և անըմբռնելիքն բացարձակ ասին, որպէս 30 Աստուած, Բան, հոգի, հրեշտակ, շունչ, միտք, խորհուրդ և իմա-

1 Դ տեսակն 2 Դ լի՛ կամ զանհատն ի տեսակէն 4 Ա լի՛ ըստ (կարծրութեան). Դ մին ըստ միոջէ: 5 Դ անղամանդն. Ա միուսն. ԱԴ հիւլէ, ԲԳ հիւլէ: 6 ԱԴ յաղառոյն: 7 ԱԴ այսպէս փխ. այսինքն. Դ զձին. Դ յանհատն փխ. հատանի. ԱԲԳ լի՛ ի. ԱԲԳ իւր բնութենէն: 8 Դ առջառ...առջառն: 8—9 տեսակը: 11 Դ լի՛ երկիր: 12 ԱԲԳ դասականը: 14 Բ վերջին փխ. վերին: 16 Ա լի՛ ալլ: 19—20 Դ, Ժ, Ծ, Թ: 22 ԲԳ սկսցէ. ԱԲ որգոնակ: 23 Դ լի՛ և թուես յաջմէ յառաջ մինչ ի ձախ: 24 Դ լի՛ ի (յաջ): 25 Դ լի՛ է. Ա յառաջին. Գ լի՛ և (միջին): 26 ԱԲ լի՛ և (թէ): 27 Ա ի մարմնի. փխ. իմանի: 29 ԴԴ յաւըմբռնելիքն: 30 Դ հրեշտակը. Դ խորհուրդը. ԱԲ լի՛ և. Դ յիմացումն:

- ցումն իրի: Իսկ զի բացարձակ ասէ զԱստուծոյ Բանն և է մին ըստ միողչէ, զի ոչ տեսանի գոյացութեամբ, և ի քննելն ոչ ըմբռնի արարչական զօրութիւն, բայց ի հեռուստ հաւատով իմանի իւրաքանչիւր ումեքէ, և միւս բացարձակն ձայնիւ լսի, որպիսի պտուղ հոգւոյն
- 5 զսէր, զինդութիւն, զխաղաղութիւն և որ ի կարգին է: Հարց. է՞ր ասէ. և անուանց հաստատադրութիւնք են երկու՝ ներգործութիւնն և կիր: Եւ ներգործութիւն է, իբրու թէ՛ դատաւոր, ընտրող և կիր, իբրու թէ՛ ընտրեալ, դատեցեալ:
- Պատ. Վասն զի յերկար կարգեաց զմասունս ճառիս, յիշատակէ
- 10 լիբստին զանունն, զի ծանուացէ, թէ սորա են սոսացեալքս ամենայն, որպէս ասէ, թէ անուան հաստատադրութիւնք են երկու, այսինքն ըստ երկուս եղանակս է հաստատութիւն ամենայն անուանց, ներգործութիւն և կիր, այսինքն ներգործական և կրաւորական, որպէս մարդ կենդանի յերկուց ոտից հաստատի, նոյնպէս ամենայն
- 15 անուանք և բայք և այլ մասունք բանին ի ներգործութենէ և ի կրից հաստատին: Եւ այսք ներգործականք, որզոն՝ դատաւոր, ընտրող, տէր, իշխան, թագաւոր, սպարապետ, վարդապետ, գնդապետ, հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ, և տասնապետ և այլք ի պատուոցն, և արարիչ և ստեղծիչ, կեցուցիչ, նորոգիչ և որք նմանք
- 20 սոցին: Իսկ կիր՝ դատեալ, հարեալ, վարեալ, ընտրեալ, տէրունի, իշխանի, թագաւորականք, սպայ, գունդ, հազարք, հարիւրք, յիսունք, տասունք, արարածք, եզականք: Եւ ոչ այսք միայն, այլ և ամենայն անուանք նոյնպէս ստուգաբանին, որ է գործք և կիրք:
- Որք հմուտ և տեղեակ իսկ էք առաջնոյն օրինակին, որ յաղագս
- 25 անուանս ճառի, և այժմ տեսանէք մի յար և ըստ կարգի, զոր երեք և չորս կրկին էր եղեալ: Կարծեմ և յուսամ, թէ գիւրութեամբ և հեշտաբար յընթեռնուլն և յօգտիլն յիշէք զսակաւ աշխատանս մեր՝ օրինակողդդ գրոյս, գրեցէք զչորս կամ հինգ տող բանիս:

1 Ա մին ըստ ԲԳԴ մինն լմ: 2 Դ տեսակն ի. փխ. տեսանի. Դ գոյացութեան. Գ շի՛ք ի: 4 ԱԳԴ ումեք. Դ հոգւոյն: 6 Դ հաստատադրութիւն է: 7 Գ շի՛ք է (իբրու) թէ: 9 Ա երկար: 10 Դ սոցա. Դ ասացեալքն: 11 Գ անուն: 12 ԱԲԳ յեղանակս. Դ շի՛ք է: 14 Բ երկուց: 15 Գ անասունք փխ. անուանք. Բ շի՛ք ի (կրից): 16 Գ այս. Դ հաստատի. Ա ընտրող: 17 Դ շի՛ք թագաւոր, սպարապետ. ԱԲԳ շի՛ք վարդապետ: 18 Ա յսնապետ, Բ յսնապետ: 19 Գ նման: 21 ԱԳ թագաւորական. Բ գունդք, Դ գունտ: 22 Գ շի՛ք ոչ. Գ այսչափ փխ. այսք. Դ միայնք: 23 Բ Յաղագս անուն որք. Դ Որ: 24 Դ հմուտք և տեղեակք, Գ տեսակ փխ. տեղեակ. Ա՞ր յառաջնոյ: 25 ԳԴ յայժմ: 26 Ա շի՛ք և (յուսամ): 27 ԱԲԳ ընթեռնուլն. Ա աւգտիլն, Գ յօկտիլն. Բ յիշեցէք. Դ զաշխատանս: 28 ԲԳ օրինակողդդ. Բ և կամ. Դ տողս:

Յ Ա Ղ Ա Գ Ս Բ Ա Յ Ի

Հարց. Է՞ր զբայն ի վերջ անուան և յառաջոյ այլ մասանց բանին կարգեաց:

- Պատ. Վասն նախադասութեան անուան և ստորադասութեան բայի
5 ասացաւ յառաջագոյն, թէ անունն զգոյացութեան տեղի ունի և բայ զներգործութեան: Իսկ զբայ քան զայլսն նախադասէ յիրաւի, զի և բայք օրինակ իմն անուանք են, այսինքն շինելոյն անունն շինել և գնալոյն անունն՝ գնալ, և այլք ամենեւեմն սոյնպէս: Վասն որոյ, յետ ուսուցանելոյ զանունն և զհետեւունս նորա և զզանազանութիւն,
10 յարադրէ, այսինքն մերձ դնէ կամ թէ ուսուցանէ մեզ և յազազս բայի:

Հարց. Վասն է՞ր ասէ. բայ է բառ անհոլով, ընդունակ ամանակաց, զիմաց և թուոց, որ ներգործութիւն և կիր յարկացուցէ:

- Պատ. Սահմանաւ զբայն ծանուցանէ, որպէս զանունն, և զբանս
15 փոխանակ սեռի դնէ և անհոլով ասէ, զի զատուցէ յանուանէն, վասն զի զնա հոլովական ասաց և անընդունակ ամանակաց և զսա անհոլով և ընդունակ ամանակաց, այսինքն զանցեալն և զսպառնին և զներկայն, և զիմացն՝ զիս, զքեզ, զնա, և թուոց՝ եղական, երկուորական և յոգնական, և ներգործութիւն որդոն՝ զրեմ և կիր
20 որդան՝ զրիմ յարկացուցէ, այսինքն մերձ կացուցանէ, իսկ յառաջակայդ զիցուք զվարդապետութիւնն սոցա:

Հարց. Վասն է՞ր ասէ. և յարեանան բային ութ. խոնարհմունք, տրամադրութիւնք, տեսակք, ձևք, թիւք, դէմք, ամանակք, լծորդք:

Պատ. Յարեանան բայի, այսինքն հետեւին բայի ութեքեան սոքա

- 25 զոր ասաց:

1 Դ իի՝ ՅԱՂԱԳՍ ԲԱՅԻ: 2 ԱՐԳ առաջոյ: 6 Դ Զի զբայս քան: 8 Դ զնալու. ԱՐԳ ամենեքեան: 9 Դ ետ. Գ ուսուցանել. Գ զանազանութիւն: 10 Ա յարդարէ, Դ արագրէ: 12 Դ անհոլով բառ (շարադ.). ԱՐԳ ընդունական: 13 Դ և զիմաց. ԱՐ յարկացուցէ, Գ յարակացուցէ, Դ յարակցուցէ: 14 Բ զբառսն: 16 Դ անընդունակ յամանակաց: 17 Բ զանցեալքն, Գ զանցեալսն: 18 Դ զիմաց. Դ զթուոց: 19 Դ իի՝ և ներգործութիւն: 20 Դ յորդան: 20—22 Ա.Գ առաջակայդ: 22 Ա.Գ յարեանայ, Բ յարեանա: 24 ԱՐԳԴ Յարեանայ Գ հետին:

Հարց. Զի՞նչ են խոնարհութիւնք:

Պատ. Ի հինգ դէմս յանգի բայն, այսինքն խոնարհի:

Հարց. Ո՞րք են:

Պատ. Սահմանական, աներևոյթ, հրամայական, ըղձական, ստո-

5 րադասական:

Հարց. Զի՞նչ է սահմանականն:

Պատ. Յորժամ ասեմք կու գրեմ, կու գրես, կու գրէ, ահա սահ-

մանաւ եցոյց զի դէպ ժամանակն և զդէմն:

Հարց. Զի՞նչ է աներևոյթն:

10 Պատ. Որզան՝ գրել, գործել, կոփել, քանզի ոչ զժամանակն յայտ-

նեաց և ոչ զդէմն:

Հարց. Զի՞նչ է հրամայականն:

Պատ. Որպես՝ գրեա՛, կոփեա՛, գործեա՛, և այլք սոյնպէս սոյնպէս

ասեն, իբր ի տեառնէ հրաման է կամ յայլ ումեքէ:

15 Հարց. Զի՞նչ է ըղձականն:

Պատ. Որգոն՝ թէ գրիցեմ արդեօք, գործիցեմ արդեօք, սիրիցեմ զնա: Այլք այսպէս. որպէս թէ մեծաւ ցանկութեամբ առնիցէ ըզ-

բնաւսն:

Հարց. Զի՞նչ է ստորադասականն:

20 Պատ. Իբր թէ՛ գրեմ, գործեմ, կոփեմ: Եւ այլք այսպէս. որպէս թէ յետ այլոց և ես գործեմ:

Հարց. Թուի թէ ստորադասականն և սահմանականն հասարակ են:

Պատ. Ունին զանազանութիւնք, զի սահմանականն ի ներկայն վե-

25 թեմ, իսկ ստորադասականն յապառնին ձգի, վասն որոյ սոսկ ասէ, թէ գրեմ, գործեմ, կոփեմ և որ այսպիսիք:

Հարց. Զի՞նչ է տրամադրութիւն:

Պատ. Փոխադրութիւն լսի կամ փոփոխական:

Հարց. Ի քանի՞ս բաժանին տրամադրութիւնք:

30 Պատ. Յերիս, այսինքն ի ներգործութիւն, կիր և միջին:

Հարց. Զի՞նչ է գործ, և զի՞նչ է կիր, և զի՞նչ է միջին:

Պատ. Ներգործական է, որգոն՝ գանհմ, կոփեմ, կտրեմ, վարեմ,

2 Դ չի՛ք ի 7 Դ կու գրեմք, կու գրես: 10 Դ կորզել փխ. գործել. ԲԴ ժամանակն: 11 Գ զղեմն: 13 Գ կոփեայ. Դ չի՛ք և. ԱԲԳ չիք՝ ասեն: 16 Դ արդեք...արդեք: 20 Դ գրիմ. Դ չի՛ք Եւ. ԱԲԳ սոյնպիսիք: 21 Դ չի՛ք՝ գործեմ: 26 ԱԲԳ չի՛ք՝ կոփեմ: 27 Դ տրամադրու- թիւնք: 28 Դ փոխադրութիւնք: 29 ԱԲ բաժանի: 30 Դ չի՛ք ի. ԱԲԳ ներգործականն: 31 ԱԳԴ չի՛ք է (կիր)... է (միջին):

- ուպանանեմ, զոր ես այլոց որպէս իշխող: Եւ կիր, որպէս՝ գանիմ, կոփիմ, կտրիմ, վարիմ, սպանանիմ՝ և այլք սոյնպէս: Եւ միջին, որպէս՝ մեռանիմ, տանջիմ, խորհիմ, սփածայ, մոռացայ:
- Հարց. Վասն է՞ր ասէ. իսկ միջին է, որ երբեմն ներգործութիւն և
- 5 երբեմն կիր յարկացուցէ:
- Պատ. Միջին յերկուց բաղկանայ և լինի, զի առաջին վանգն գործական և վերջինն կիր, որպէս՝ տանջիմ, սփածայ, կամ է, որ ձայնն ներգործութեան և իմացումն կրական, որպէս՝ կերայ, արբի, զարմացայ, կամ է, զի ձայնն կրական և իմացումն ներգործական, որ-
- 10 գոն՝ տանիմ, դատիմ, դատիս:
- Հարց. է՞ր ասէ. և տեսուք են բայի երկու. նախադադափար և ածանցական: Եւ է նախադադափարն որպիսի՝ ոռոգեմ և ածանցա-
- կան՝ ոռոգանեմ:
- Պատ. Տես, զի որպէս վասն անուանն ասաց տեսակ երկու, նոյնպէս
- 15 և բային ասէ նախադադափար և ածանցական: Նախադադափարն՝ ոռոգեմ, այսինքն ես ոռոգեմ և ածանցական որպէս ոռոգանեմ, այսինքն միջնորդով ոռոգանեմ, ես ոռոգեցուցանող և ջուրն ոռոգող և տունկն ոռոգեալ: Կամ թէ սոյնպէս. շէն՝ նախադադափար, շինել՝ ածանցական, սոյնպէս գործ-գործել, վար-վարել, փոխ-
- 20 փոխել, կոփ-կոփել, կիր-կրել, գրում-գրել և այլ սոյնպիսիք:
- Հարց. Վասն է՞ր ասէ. ձեք երեք. պարզ, բարդ, յարաբարդ: Պարզ՝ որգոն գիտեմ, բարդ՝ որգոն ըստգիտեմ, յարաբարդ՝ որգոն վար-
- գապետեմ, սահմանաբանեմ:
- Պատ. Ահա տես, զի որպէս անուանն ասաց զձե, նմանապէս և
- 25 բային դնէ զօրինակ և ասէ, թէ երեք են ձեք, պարզ՝ գիտեմ, մի-
- նակ, և բարդ՝ ըստգիտեմ, զի յօդուց այլ ևս վանդ մի ի նմա, յարաբարդ, որգոն՝ վարդապետեմ, քանզի կրկին յաւելաւ վանգն ի վերայ պարզին. կոփեմ, քաջ կոփեմ, կարի քաջ կոփեմ և այլ սոյն-
- պիսիք: Այն է, որ ասէ ձեք...:
- 30 Հարց. է՞ր ասէ. թիւք երեք. եղական, երկական, յոգնական: Եւ է

1 Գ սպանեմ. Բ յայլոց. ԱԲ լիշխող: 3 ՌԳ տանիմ փխ. տանջիմ. Դ սպածայ. 4 ԱԳ փխ՝ է: 5 Ա յարակացուցէ: Բ յարկացուցէ, Գ յարակցուցէ: 7 ԱԲԳ տանիմ փխ. տանջիմ. Դ սպածայ. Դ չիք՝ որ: 10 Դ չիք՝ դատիմ: 11 Դ նախադադափար: 12 Դ ոռոգէմ: 13 ԱԲԳ է ոռոգանեմ: 14 Գ չիք՝ զի. Դ անուանցն: 15 Ա չիք՝ ասէ նախադադափար և ածանցական: 16 Դ ոռոգեմ. Գ չիք՝ այսինքն ես ոռոգեմ: 17—18 ԱԲ ոռոգող: 18 Դ սպայէս: 21 Դ չիք՝ յարաբարդ: 22—23 Դ ըստվարդապետեմ: 24 Բ անունն. ԱԲԳ նոյնպէս: 25—26 Դ չիք՝ մի-

նակ: 26 Գ օղեաց: 27 ԱԳ աւելաւ. ԱԲԳ վանդը: 28 Դ չիք՝ կարի քաջ կոփեմ: 30 Դ յոքնա-

կան:

եղական որդոն՝ գանեմ և երկական որդոն՝ գանոմ և յոգնական որդան՝ գանեմք:

Պատ. Արդ եղականն միոյ նշանակիչ, որդոն գանեմ, կտրեմ, գործեմ, առնեմ, աւերեմ, շինեմ, և երկական երկուց, որպէս՝ գանոմ, կտրոմ, գործոմ, առնոմ, աւերոմ, շինոմ. այս ոչ գոյ մեզ և ոչ այլոց ազգաց, բայց միայն յունացն գտանի: Իսկ յոգնականն բազմացն յայտնիչ, որդան՝ գանեմք, կտրեմք, գործեմք, առնեմք, աւերեմք, շինեմք, վարեմք, հալածեմք և այլք սոյնպիսիք:

Հարց. է՞ր ասէ. դէմք երեք: Նախ՝ յորմէ բանն, երկիր՝ առ որ բանն,

10 երիր՝ յաղագս որոյ բանն:

Պատ. Տես, զի երեք ասաց զդէմք բային և ոչ երկու կամ շորս կամ այլ աւելի, վասն որոյ լուծանէ զտարակոյսն և ասէ. նախ՝ յորմէ, երկրորդ՝ առ յո, երրորդ՝ սակս որոյ, որդոն՝ ես, դու, նա: Ես խօսիմ ընդ քեզ վասն նորա, ոյսինքն խօսի ընդ մերձաւորն

15 վասն հեռաւորին, որդոն՝ կոփեմ ես, կոփես դու, կոփէ նա, գործեմ, գործես, գործէ, կրեմ, կրես, կրէ, առնեմ, առնես, առնէ, այսինքն այլ ընդ այլն խօսի և վասն այլոյ: Եւ բազմականն այսպէս. այլք ընդ այլք խօսին և վասն այլոց. կոփեմք, կոփէք, կոփեն, գործեմք և այլք:

20 Հարց. է՞ր ասէ. ամանակք երեք, ոյսինքն ներկայ, անցեալ և ապառնի:

Պատ. Հաւաստեալ երեքն են ամանակք, որպէս ասէ ներկայ, յորում եմք, անցեալ՝ վճարեալն, ապառնի՝ հանդերձեալն, որ ապա լինելոց է, քանզի ամինայն իրք կամ եղեալ են, կամ ի լինելումն

25 են, կամ լինելոց են: Անցեալն որդոն՝

կոփէի	կոփեցի	կոփել եմ
գանէի	գանեցի	գանել եմ
ուտէի	կերայ	կերել եմ
ըմպէի	ըմպեցի	ըմպել եմ
նստէի	նստայ	
յառնէի	յարեայ	

30

սոյնպէս և այլքն:

1 Դ յոգնական: 3 Դ շի՛ք՝ Պատ. Դ գանիչ փխ. նշանակիչ: 4 Դ աւիրեմ. Դ չերկուց: 5 Դ շի՛ք՝ կտրոմ. Դ աւիրում. ԱՐԳ մեր. Դ այլում: 7—8 Դ շի՛ք՝ կտրեմք, ..., առնեմք, աւերեմք, ..., վարեմք, հալածեմք, և այլք սոյնպիսիք: 9 Դ որպիսի թէ փխ. յորմէ: 11 Գ դէմք. Բ բայիք: 10 Գ շի՛ք՝ այլ. Դ այն փխ. որոյ: 13 ԱՐԳ առ ո. ԱՐԳ ես և դու և նա: 14 ԱՐԳ այսպէս փխ. այսինքն: 17 Բ (վասն) ընդ: 18 Դ կոփեք. Դ շի՛ք՝ գործեմք: 19 Դ և այլն: 20 Գ ամանակ. ԲԳ շի՛ք՝ այսինքն. ԱՐԳ շի՛ք՝ և: 23 Ա մեք փխ. եմք. Դ յապառնի. Դ յապա: 24 ԱՐԳ շի՛ք՝ ամենայն, շի՛ք՝ կամ (եղեալ): 26—32 ԱՐԳԴ դնում ենք ձեռագրերի նամադրական հարցաւոյցը, քանի որ տարբեր ձեռագրերում այլևայլ ձևեր պակասում են: 29 Բ ըմպեցայ, 32 Բ առայ փխ. յարեայ:

- Իսկ ներկային բայք որդան՝ կու կոփեմ, այժմ կու կոփեմ, արդ կու շինեմ, ահա կու գործեմ, ահաւասիկ կու գանեմ, կու ուտեմ, կու առնեմ, կ'աշեմ, կ'անեմ, կու բերեմ և այլք: Իսկ տալառնին՝ կոփեցից կամ կոփեմ, կտրեցից կամ կտրեմ, գանեցից, կերայց, արբից, 5 յարեայց, խօսեցայց, կոփեւոց եմ, կտրեւոց եմ և այլք:
- Հարց. է՞ր ասէ. և ի սոցանէ ունի անցեալն զանազանակս շորս՝ յարաձգական, յարակայ, գիրակատար, անորիշ:
- Պատ. Զանցեալ ամանակն ի շորս բաժանէ և ասէ յարաձգական, այսինքն երկարաձգական, որ սկսեալ է և դեռևս ոչ է կատարեալ, և 10 նշանակիչ է նորա այս բայս, որդոն՝ կոփէի, կու կոփէի, շինէի կամ կու շինէի, կու գործէի: Եւ յարակայն, այսինքն մերձ կայ, որ ի մօտոյ կատարեալ է կամ ժամաւ մի կամ աւուրբ կամ տարով, և նշանակիչ բայ որդոն՝ կոփեցի, գործեցի, առի, տուի: Եւ գերակատար, այսինքն առաւելակատար, որ վաղուց և նախաժամա-
- 15 նակաւ կատարեալ, և նշանակիչ որդոն՝ կոփեալ էի, գործեալ էի, արարեալ էի, գրեալ էի, շինեալ էի: Եւ անորիշ է, որ ոչ յայտնէ ամանակն կամ թիւք կամ դէմն, այլ աներևոյթ թողու, որդոն՝ կոփել, գործել, ուտել, առնել, վարել, խօսել, պարգևել, ներել և այլք սոյնպիսիք, որ անորիշաբար զամենայն ժամանակս նշանակէ:
- 20 Հարց. է՞ր ասէ. որոց բաղադանութիւնք են երեք. ներկային ընդ յարաձգին, յարակային ընդ գերակատարին, անորիշին ընդ ապառնոյն:
- Պատ. Բաղադանութիւնքն միաբանութիւնք լսի կամ աղգակցութիւնք, զոր ունին ընդ միմեանս. ներկայն և յարաձգին խառնին
- 25 ընդ միմեանս, սոյնպէս յարակայն և գերակատարն, զի հուպ են միմեանց. սոյնպէս անորիշն և ապառնին, քանզի անորիշն ոչ է յայտնի և ապառնին չէ ի միջի:
- Հարց. Երից ամնակաց ո՞րն է աւագագոյն, այսինքն երիցագոյն, ներկայն թէ անցեալն թէ ապառնին:

2—3 Դ շիւ՝ կու ուտեմ, կու առնեմ: 3 Դ յապառնին: 5 Դ շիւ՝ յարեայց, խօսեցայց: 7 Դ յարակատար, Դ արկայ: 8 Դ յերկարաձգական: 10 ԱՌԴ շիւ՝ շինէի կամ: 11 Դ շիւ՝ կու գործէի: 13 Դ տւի: 16 Դ շիւ՝ արարեալ էի: 17 Բ ամանակք. Բ դէմք, Դ դեմ: 18 Դ շիւ՝ առնել. Դ շիւ՝ ներել: 21 Ա անորիշին, Դ անորիշ: 23—24 Դ շիւ՝ կամ աղգակցութիւնք: 24—25 Դ շիւ՝ ներկայն և յարաձգին խառնին ընդ միմեանս: 26—27 Ա շիւ՝ քանզի անորիշն ոչ է յայտնի և ապառնին: 27 Ա չէ միջի. Դ միջի:

Պատ. Ոմանք զներկայն ասացին, վասն անցանելոյն ընդ նա երկուցն ևս, և այլք զանցիտլն յաղագս յառաջանալոյն ըստ նախագասութեան:

Հարց. Ժամանակն ի գոյի՞ց է, թէ՞ յոչ գոյից:

- 5 Պատ. Ոմանք ի գոյից ասեն, քանզի ի լուսաւորաց շարժմունք և բնաւից լինելութեանցս աճմունք և յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին, իսկ Արիստոտելէս յոչ գոյից ասաց, որպէս ղյուշկապարկացն համբաւ զանցեալն խոտէ թէ ապականեցաւ, և ղապառնին, զի չէ իսկ ի միջի, և զներկայն, թէ աներևոյթաբար
- 10 իմն անցեալ է, զոր օրինակ թէ ի քուն ոք կայ կամ յայլ զբօսան, նա զիւր ընթացսն կատարէ, որպէս ջրոյ իջելոյ ի խողովակէ յաւազանին տեղն, որ ընդ իջանեւն ծորի և յաւազան հասեալ, ոչ երևի:

1—2 Գ ներկուցն փխ. նա երկուցն: 2 Ա անցեալն. Դ առաջ ելանելոյն: 4 Դ ժամանակն. ԱԲԳ ոչ: 6 Դ աշխարհիս: 7 Դ ի ժամանակիս. Դ Արիստոտելէս. ԳԴ ոչ: 8 Ա յուշկապարացն: 9 Դ թէ փխ. զի. Դ յայնեւրեւոյթաբար: 10 Դ անցանէ. Դ ղօր. ԳԴ չի՞՞ ոք. Բ ղայլ. 11 ԲԳ զիւրն կատարէ ընթացս (շարադ.). Գ չի՞՞ իջելոյ. Դ խողովակէ, Դ խօղովակէ. 11—12 ԱԲԳ յաւազան տեղիս: 12 Ա չի՞՞ և. Դ աւազն:

Յ Ա. Ղ Ա. Կ Ս Լ Մ Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հարց. Վասն է՞ր ասէ. լծորդութիւն է կարգաւոր խոնարհութիւն բայից, և են լծորդութիւնը շեշտուոր բայից՝ ութ:

- Պատ. Լծորդութիւն այն է, որ միմեանց տեղն լծին, որպէս եզ կամ
- 5 ձի, յորժամ չկարէ մինն քաշել զլուծն, յայնժամ զմիւսն լծեն: Լինի լծորդութիւն երկու՝ կամ զբառն ի բառի տեղ, կամ զտառ ի տառի տեղ: Զբառք, որպէս փաղանունքն, որ այլևայլ ձայնիւ զնոյն իմացումն ունին. և սա պիտանի է ի տաղաչափութիւնս և յոտանաւորս յարմարութեան: Եւ տառք, որք են մերձաւորք միմեանց և լծորդք,
- 10 և են ոմանք լերկք, ոմանք թաւք և ոմանք միջակք, զոր ի բաժանումն տառից ուսոյց և աստ կամի ծանուցանել գաղափարաւ: Եւ ասէ զպիտանութիւն սոցա նախ՝ ի տաղաչափութիւն, երկրորդ՝ ի ստուգաբանութիւն, երրորդ՝ յուղղախօսութիւն, չորրորդ՝ ի յազդումն բանի այլևայլ բառիք, հինգերորդ՝ ի յերեցեցուցանել ըզգեղեցկութիւն բանի յարուեստս զրշաց, վեցերորդ՝ ի պայծառութիւն խօսից:

Հարց. Է՞ր ասէ. ի տաղաչափութիւն պիտանի են լծորդութիւնք:

- Պատ. Տաղաչափութիւն զվանդով շափեալն ասէ, որ ոտանաւոր և տաղ յարմարեն, յորժամ ոչ բերէ մի բառն զչափն վանդին կամ
- 20 աւելի կամ պակաս լինելով, յայնժամ փոխեա զմիւսն ևս, զոր փաղանունաբար զմի ազդումն ունին թէ բառ և թէ տառ:

Հարց. Է՞ր ասէ. ի գիւտ ստուգաբանութեան:

Պատ. Յորժամ ոչ գայցէ ուղիղ անուն կամ բայ կամ այլ մասունք

2 Դ կարգաւորութիւն փխ. կարգաւոր խոնարհութիւն, Բ կարգօրու 5 Բ որպէս փխ. յորժամ. Բ չի կարէ. Դ միւ 6 Դ չի՛ք՝ կամ զբառն ի բառի տեղ: 7 Բ զրազանունքն, Դ բազանունքն: 8 ԱԲ ոտանաւորս, Դ յոտանաւորս, Դ յօտանաւորս: 10 ԱԲԳ լերկ. ԱԲԳ միջակ: 11 Դ ուսուց: 13 ԱԲ ի ուղղախօսութիւն, Դ ի սուղ խօսութիւն: 13—14 ԱԴ ազդումն: 14 ԱԲ երեցեցուցանել, Դ երեցեցանել: 15 Դ բանիս. Ա յարուեստս, Բ յարուեստս, Դ յարուեստս, Դ արվեստ. Դ զրոց փխ. զրշաց: 17 Դ լծորդքն: 18 Դ որք. Գ ոտնաւոր: 19 ԱԲ արմարեն, ԳԴ յարմարեն: 20 ԱԲԴ լինելով պակաս (շարաղ.). Ա այժամ. Ա զմիւս: 21 ԱԲԴ աստումն. ԴԵ չի՛ք՝ և: 22 ԱԲ գիւտս: 23 Բ այլ ինչ:

բանի մի լծորդովն, յայնժամ փոխելով զմիւս լծորդն, մինչև հան-
դիպի ուղիղ անուան:

Հարց. է՞ր ասէ. ի տեսակս խօսից:

Պատ. Քանզի որք ոչն գիտեն ուղիղ խօսել, մի մի ի լծորդացն լիցի
5 փոխանորդ և լցցէ զտեղի բանին, որպէս ասել բազուկ-սպազուկ-
փազուկ:

Հարց. է՞ր ասէ. կարգաւոր խոնարհութիւն բայից:

Պատ. Պարտ է կարգաւոր խոնարհեցուցանել զբայ և ոչ այլ ընդ այլոյ,
որգոն՝ առնեմ, առնես, առնէ, որպէս թէ առնեմ ես, առնես դու,
10 առնէ նա: Տե՛ս և լաւ միտք դիր աշսպէս. յառաջին դէմն մենն լը-
ծեցաւ, և յերկրորդն ել մենն և հմուտ սէն, և յերրորդ դէմն սէն ել
և հմուտ է. այս ըստ եղականին: Իսկ ըստ բազմաւորական թուոցն
աշսպէս. առնեմք, առնէք, առնեն: Տե՛ս, զի արդ յառաջին դէմն
լծեցաւ մենն ընդ քէի և բազմացան թիւք, և յերկրորդն ել մենն և
15 հմուտ է և եղև երկրորդ դէմք, և յերրորդ ել էն և քէն և հմուտ ել ընդ
նուի և եղև երրորդ դէմք: Եւ հրամայականն աշսպէս. ա՛ռ, առցէ՛,
առցէ՛ք, առցեն: Եւ ժամանակացն աշսպէս. առի, առեր, առաւ. ինն
լծեալ ընդ ռայի նշանակեաց զանցեալ ժամանակն և զառաջին
դէմն, և երկրորդն ել ինն և հմուտ ել ընդ րէի, և երրորդ և և ր ել և
20 հմուտ ա և ւ: Եւ այլ ցեղ՝ գործեցի, կու գործեմ, գործեցից. տես զի
յին յանգեցաւ, զանցեալն նշանակիտց և ի մենն՝ զներկայն և ի
ցոյն՝ զապառնին: Սոյնպէս և զամինեսեան իմա՛: Եւ շեշտուոր
բայ այն է, որ ի վերջի վանդն առնու զոլորակն, և ասէ ութ, զոր
յառաջիկայդ ուսուցէ:

25 Հարց. է՞ր ասէ. առաջինն արտաբերի բենիւ, մենիւ, պէիւ, փիւրիւ,
որգոն՝ ջամբեմ, ծամեմ, ըմպեմ, չափեմ:

Պատ. Սա երկու իրս ուսուցանէ: Առաջին, որ այլևայլ բառիւ զմի
ազգումն տան, որպէս՝ ջամբեմ, որպէս թէ զիմաստիցն կերակուր,
կամ թէ զմարմնաւորն, թէ կամիս. ծամեմ. որպէս թէ՝ ծածկելոց ի
30 ջանից խոհականացն հանճարս, ըմպեմ, որպէս զջուր ուխից, ըզ-
քերթուածս լաւացն, չափեմ ընդդէմ անուսումնութեան զուսումնա-
կան գործն: Տես, զիարդ զմի զօրութիւն ազդեն: Եւ երկրորդն՝ ստու-

1 Բ լծորդն (տողդ.): 4 Բ Վասն զի. ԱՐԳ ուղղախօսել. Բ լինի 10 Դ միտ. ԲԴ
առաջին: 11 ԳԴ երկրորդն: 13 Գ որպէս. ԲԴ առաջին: 14 ԱԴ չի՛ք և (յերկրորդն): 15 Դ
եւ է և քէ: 16 ԱԲԴ նոյի: 22 ԱԴ զամենէսեան, Դ զամենեսին. ԱԴ ի նմա փխ. իմա: 24 ԱՐԳ
առաջակայդ. Դ ուսուցանէ: 25 Գ փուրիւ: 27 Բ յառաջին. Ա առաջին մին: 28 Դ աստումն.
Դ չի՛ք՝ որպէս թէ: 29 Գ մարմնաւոր. ԱՐԳ ծասկելով: 30 ԱՐԴ խոհական. ԱՐԴ ուխտից:
31 Ա ջաւացն. Դ զյուսումնական: 32 Դ տեղ փխ. տես:

